



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ**  
Օգնություն դատախազին, քննիչին
- **ԿԻԲԵՐՆԱՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- **ՃՈՒԺՄՈՒՅՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊՈՆԱՑՈՒՄԸ**  
Դատավարական իրավունքի հարցեր
- **ՄԻՋԱՋՎՅԻՆ ՁՄՂԱՔԱՅԻՆԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
- **ԱԵՋԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՇՎԱԿԸ**  
Հստ Մխիթար Գոշի

Լրացավ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ,  
արդարադատության պետական խորհրդական,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
**ՀՀ վաստակավոր իրավաբան ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ**  
ծննդյան 60-ամյակը: Այդ առիթով ՀՀ դատախազության կողեգիան  
նրան հղել է շնորհավորական ուղերձ, որում ասված է.



### Մեծարգո Աղվան Գառնիկի,

Հայաստանի Հանրապետության դատախազության կողեգիան համակարգի բոլոր աշխատողների անունից ջերմորեն շնորհավորում է Ձեզ՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Ծննդով ու դաստիարակվելով մշեցիների տոհմիկ ընտանիքում, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո, Դուք արդեն շուրջ չորս տասնամյակ Ձեր աշխատանքային գործունեությունն անխոտոր կապել եք դատախազության հետ՝ շրջանային դատախազության քննիչից հասնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի բարձր պաշտոնին:

Անզնահատելի է Ձեր անձնական բացարձիկ ներդրումը Հայաստանի երրորդ Հանրապետության դատախազության ծևակորման ու կայացման, նրա արդիական գործառույթների ու նկարագրի ստեղծման ու զարգացման գործում:

Ձեր եռանդում ջանքերով է, որ Հայաստանի դատախազությունը ներկայում, ինչպես ԱՊՐ երկրների, այնպես էլ Եվրոպական և համաշխարհային դատախազական ընկերակցության ամենաակտիվ ու հեղինակավոր կառույցներից է:

Ձեր անմիջական նեկավարությամբ է, բառիս բուն իմաստով, կառուցվել ու կառուցվում նոր Հայաստանի նոր դատախազությունը՝ համախոհների կուռ ու միասնական կոլեկտիվը:

Երկրում օրինականության ամրապնդման և հանցավորության դեմ տարվող պայքարում Ձեր սկզբունքայնությունը և հետևողականությունը, մասնագիտական պարտքի հանդեպ պատասխանատվության բարձր օգացումը, կազմակերպչական ծիրքը և պրոֆեսիոնալիզմը մնայուն արժեքներ են և օրինակ երիտասարդ իրավաբանների, դատախազության բոլոր աշխատակիցների համար:

Դուք ոչ միայն ականավոր պետական, հասարակական գործիչ եք, փորձառու դատախազ և հմուտ ղեկավար, այլ նաև միջազգային համբավ ունեցող գիտնական, իրավունքի արդիական հիմնահարցերին նվիրված բազմաթիվ մենագրությունների, հետազոտությունների, տեսական ու գործնական մնայուն արժեք ներկայացնող գոքերի ու հոդվածների հեղինակ:

Ակնառու է նաև Ձեր հասարակական-մշակութային գործունեությունը, ինչը նոր նկարագիր ու որակ է հաղորդում մեր երկրում քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման գործընթացին, նպաստում նաև հասարակության տարբեր շերտերի հետ դատախազության համագործակցության սերտացմանը:

# №75

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՇԴԵՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 թՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՏԻԵԼՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՏԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՐԴԱՄ ՇԱՐԻՆՅԱՆ  
ԳԱՈՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՅՈՎՐԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր Խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Յանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Հանձնված է արտադրության  
08.02.2013 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակ՝ 500  
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2013 թ.

# 2013

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ)  
կողմից ընդգրկված է թենաձեռական (1999թ.)  
և դրսորովական (2002թ.) ասենախտությունների  
հիմնադրույթների հրապարակման համար բույլատրելի  
գիտական պարբերականների ցանկում:

### ՀՀ դատախազության կողեգիայի ուղերձը...

(շաբաթակություն)

Դարգելի պարոն Շովանեփյան, Զեր ծննդյան հորելյանը լավ առիթ է նշելու, որ Դուք սիրված ու հաջանք վայելող դեկավար լինելուց բացի նաև սրտամուտ ու հոգատար ընկեր եք, լավ բարեկամ, մարդկանց հոգսերով ապրող, դժվար պահին նրանց օգնության ձեռք մեկնելուն պատրաստ, ազգային հստակ նկարագիր ունեցող հայ մարդ ու քաղաքացի:

Մեր հայրենիքին, օրինականության պաշտպանությանն ու իրավագիտության զարգացմանը բերած Զեր ավանդի արժանի գնահատականն են ՀՀ Նախագահի հրամանագրով Զեզ շնորհված արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճանը, Դայաստանի Դանրապետության վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչումը, Դայերենիքին մատուցած ծառայությունների համար առաջին աստիճանի մեդալը:

Դուք պարզեւատրպել եք նաև Դայաստանի և օտարերկրյա պետությունների պետական, կառավարական ու գերատեսչական բազմաթիվ այլ շքանշաններով ու մեդալներով, ընտրվել միջազգային հեղինակավոր ակադեմիաների ու հաստատությունների պատվավոր անդամ:

Մենք՝ Զեր գործընկերները, հպատ ենք, որ աշխատում ենք Զեզ հետ, մեր մասնագիտական հմտություններն ու մարդկային որակները հղում ու կատարելագործում Զեր դեկավարությամբ ու օրինակով:

Կրկին շնորհավորելով Զեզ ծննդյան 60-ամյակի առթիվ մաղթում ենք առողջություն, երկար տարիների կյանք ու ամենայն բարիք Զեզ և Զեր գերդաստանին:

Լավագույն ցանկություններով՝

Հայաստանի Դանրապետության  
դատախազության կողեգիա

**«Օրինականություն» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդարակության խորհրդարակության կամաց միանում է հորեցարի ստացած շնորհավորանքներին:**

## ԻՐԵԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՅԼԱՎՈՒՄ

**2013 թվականի փետրվարի 12-ին կայացավ  
ՀՀ դատախազության կողեգիայի ընդլայնված նիստը, որը  
վարում էր ՀՀ գլխավոր դատախազ Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԸ:**

Կոլեգիայի նիստում անփոփեցին Դայաստանի Դանրապետության դատախազության 2012 թվականի աշխատանքների արդյունքները:

Ըստ գործունեության ոլորտների կատարված աշխատանքների մասին գեկուցումներով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Արամ ԹԱՎԱԶՅԱՆ, Մանացական ՍԱՐԳՍՅԱՆ, Արմեն ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՀՀ գինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ ԿՈՍՏԱՄՅԱՆ:

Կոլեգիայի նիստին մասնակցում էր և ելույթ ունեցավ ԼՂԴ գլխավոր դատախազ, արդարադատության երկորդ դասի պետ-

կան խորհրդական Արշավիր ՂԱՐԱՄՅԱՆ: Նա մասնավորապես նշեց.

«Լեռնային Ղարաբաղի Դանրապետության դատախազությունը հայաստանյան գործընկեր կառուցից հետ սերտ համագործակցություն է ծավալում ԼՂԴ-ում դատախազության համակարգի ձևավորումից ի վեր: Անցած ավելի քան երկու տասնամյակում, գտնվելով նույն իրավական դաշտում, իրականացվել են փոխգործակցության ու փոխօգնության բազմաթիվ միջնառումներ, որոնք ավելի արդյունավետ են դարձրել օրինականության ապահովմանն ուղղված մեր ընդհանուր ջանքերը: Անհրաժեշտ եմ համարում, սակայն ընդգծել, որ

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

փոխգործակցության նոր մակարդակ է ապահովել հատկապես երկու դատախազությունների միջև 2009թ. դեկտեմբերի 9-ին Ստեփանակերտում Համաձայնագիր-Հուշագիր ստորագրումից հետո: Դրական արդյունքներն ակնառու են, և այդ շրջանակում կուգենայի անդրադառնալ 2012 թվականի ընթացքում կատարված աշխատանքներին:

Այսպես, համագործակցության շնորհիվ ԼՂՀ դատախազությունը միջազգային-իրավական կապերի ապահովման բնագավառում 2012թ. ընթացքում իրականացրել է հանրապետության տարածքում և տարածքից դրւու հանցագործություններ կատարած անձանց հանձնման հետ կապված անհրաժեշտ գործողություններ ու դրանց

տապահպահն Արցախում իրականացնելու վերաբերյալ, ընդ որում 1-ը կատարվել է, 2-ը գտնվում են ընթացքի մեջ:

Դարձյալ համագործակցության շրջանակում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կոռուպցիոն, կազմակերպված, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի կողմից կատարվող ստուգման լրիվությունն ապահովելու համար, Զայաստանի Հանրապետության դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության աջակցության շնորհիվ, կարծ ժամկետում հնարավոր է դարձել Զայաստանի Հանրապետության պետական եկամուտների կողմի-



իրականացնան հետ կապված մի շարք գործառություններ: Մասնավորապես, Համաձայնագիր-Հուշագրի դրույթներին համապատասխան, ՀՀ գլխավոր դատախազության միջոցով նախապատրաստվել են ԼՂՀ տարածքում հանցագործություններ կատարած և հետախուզվող երկու անձանց հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթերը, ընդ որում մեկ անձի նկատմամբ քրեական հետախորումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ, հետախուզվող մեկ անձի հանձնումը բավարարվել է:

Բացի այդ, Զայաստանի Համարապետության գլխավոր դատախազության միջոցով նախապատրաստվել և ուղարկվել են միջնորդություններ Ռուսաստանի Դաշնության տարածքում հանցագործություններ կատարած և հետախուզվող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երեք քաղաքացիների նկատմամբ քրեական հե-

տեից ստանալ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տվել առանց ավելորդ ձգձգումների՝ նախապատրաստված նյութերով օրյեկտիվ ու հիմնավոր եզրահանգումներ առել:

«Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն՝ դատախազների ու քննիչների թեկնածությունների ցուցակի համալրման մրցույթի անցկացման արդյունքում հանձնաժողովի որոշմամբ հաղթող ճանաչված 4 հավակնորդներ ընդգրկվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության դատախազների ու քննիչների թեկնածությունների ցուցակում և Զայաստանի Հանրապետության «Դատախազության դպրոց» ՊՐՎԿ-ում անցել ուսումնառություն: Կա դատախազների ու քննիչների որակավորման դասընթացների պարբերաբար կազմակերպման հստակ ծրագիր, և

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

մենք հետևողական ենք լինելու դրա լիարժեք իրականացման գործում:

Փոխգործակցությունն առկա է նաև պետական շահերի պաշտպանության, հատուկ գործերի քննության, նարդու դեմուղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների դեմ պայքարի ոլորտներում:

Համագործակցության արդյունավետության հետագա պահովման նպատակով, անհրաժեշտ են գտնում, երկու հայկական պետությունների դատախազությունների համապատասխան ստորաբաժանումների միջև գործնական շփումների էլ ավելի ակտիվացում՝ այդ համատեքստում հաճա-

խակի դարձնելով նպատակային փոխայցելությունները, մերոդական օգնություններն ու նաև նազարական խորհրդատվությունները:

Կոլեգիայի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների գեկուցումներին, և հանցավորության վիճակի մասին համառոտ տեղեկանքին կարող եք ծանոթանալ ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային կայքում.

ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների գեկուցումներին, և հանցավորության վիճակի մասին համառոտ տեղեկանքին կարող եք ծանոթանալ ՀՀ գլխավոր դատախազության ինտերնետային կայքում.  
[www.genproc.am](http://www.genproc.am)

## ՀՐԱՄԱՆՆԵՐ

### ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՅԻ 2012թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀՐԱՄԱՆԸ

## ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված անձի խոսքի ազատության իրավունքը՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, ինչը ժողովրդավարական հասարակության կարևորագույն իիմնաքարերից մեկն է, և, միաժամանակ, ընդգծելով այդ իրավունքի չարաշահման անթույլատրելիությունը,

Կարևորելով մարդու՝ տեղեկություն ստանալու իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև հանրությանը քրեական դատավարության և, մասնավորապես, դատախազության գործունեության վերաբերյալ տեղեկություն հաղորդելու կարևորությունը,

Հիմք ընդունելով, որ անմեղության կանխավարկածի, արդար դատաքննության, ընտանիքի ու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը՝ Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների համաձայն, պետք է հարգվեն ժողովրդավարական հասարակությունուն,

Կարևորելով արդար դատաքննության, անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու և արտահայտվելու ազատության իրավունքների հնարավոր բախումը բացառելու անհրաժեշտությունը, ինչպես նաև ընդգծելով յուրաքանչյուր դեպքում նշված իրավունքների հավասարակշռված պահպանումը,

Նկատի ունենալով, որ կոռուպցիոն հանցագործությունները լուրջ սպառնալիք են հասարակության կայունությանը և անվտանգությանը, խարիսում են ժողովրդավարական ինստիտուտները, բարոյական արժեքներն ու արդարությունը, վտանգում կայուն զարգացումն ու օրենքի գերակայությունը,

Ելելով դատախազության մարմինների գործունեության լուսարանման աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու ծգտումից և կարևոր նշանակություն տալով սոցիալական հետաքրքրություն ներկայացնող՝ հատկապես հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների բացահայտման, հետաքրքրության և նախաքննության

օրինականության նկատմամբ դատախազական հսկողության մասին օպերատիվ և որակյալ տեղեկություն տրամադրելու ապահովմանը,

Սկզբունքորեն կարևոր հաճարելով զանգվածային լրատվության միջոցների հետ դատախազության մարմինների կայուն համագործակցության հաստատումը, ընդլայնումը և խորացումը, հասարակական միավորումների հետ մերս կապերի պահպանումը և նկատի ունենալով՝ այդ համագործակցության կազմակերպման սկզբունքներն ու կառուցակարգերը հստակեցնելու, ինչպես նաև դատախազության գործունեության և քննության նյութերը հրապարակման ներկայացնելու հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Ուշագրավելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ 30-րդ հոդվածով՝

## Դրամայում Եմ՝

1. Դատատել «Քրեական գործերով տեղեկություն տրամադրելու կանոնները»՝ համաձայն հավելվածի (ԿցՎում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազագի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, կայազորների գինվերական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարին, «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ին, ՇՀ գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին:

## ԿԱՆՈՆՆԵՐ

### ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

#### 1. Նպատակը

Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելու կանոնները (այսուհետ՝ Կանոններ) նպատակ ունեն կանոնակարգելու քրեական դատավարության վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից (այսուհետ՝ Դատախազություն) իրականացվող տեղեկատվական քաղաքանակությունը, նշանակելու պաշտոնական մամուլի հաղորդագրություններին ուղղված պահանջները՝ իհնք ընդունելով Մարդու իրավունքների և իհնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն) ամրագրված իրավունքները: Նկատի ունենալով, որ Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներով, Սահմանադրության 21-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքները ոչ իրավաչափ գործունեության արդյունքում հնարավոր է բախվեն դատախազությունը սահմանում է իրավական չափորոշչներ՝ նպատակ ունենալով ապահովելու մարդու իրավունքների հավասարակշռված պահպանումը քրեական դատավարության վերաբերյալ հաղորդագրություններ տարածելիս:

#### 2. Իրավունքների հավասարակշռված պահպանման սկզբունքները

Կանոններն ուղղված են՝ քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն տարածելիս ապահովելու իրավունքների հավասարակշռված պահպանումը՝ հետևյալ առանձքային սկզբունքներով.

- 1) տեղեկատվության ազատությունը,
- 2) անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը,

- 3) անմեղության կանխավարկածը,
- 4) նախնական քննության գաղտնիությունը,
- 5) հանրային շահը:

Հաշվի առնելով Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներով, Սահմանադրության 21-րդ, 23-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված իրավունքների բախման հավասարականությունը, յուրաքանչյուր դեպքում դատախազությունը երաշխավորում է այդ իրավունքների հարգումը՝ մարդու իրավունքների գերակայության և հանրային շահի տեսանկյունից: Մարդու իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել, եթե դա անհրաժեշտ է պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու քար-

յականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության հաճար:

Դատախազությունը պարտավորվում է քրեական դատավարության, դատախազության գործունեության վերաբերյալ մանուլի հաղորդագրություններ տարածելու պահպանել նշված սկզբունքները և իրավական նորմերը:

### 3. Տեղեկատվության ազատությունը քրեական դատավարության ընթացքում

Տեղեկատվության տրամադրումը հարկ է կազմակերպել այնպես, որպեսզի հանրությունը հնարավորություն ունենա, այդ թվում զանգվածային լրատվության միջոցով, տեղեկություն ստանալու քրեական գործերի քննության ընթացքի մասին։ Դատախազությունը պետք է պարբերաբար տեղեկություններ տրամադրի լրատվության միջոցներին՝ դատախազական գործունեության, ինչպես նաև հասարակական հնչեղություն ունեցող քրեական գործերի նախնական քննության արդյունքների մասին այն ծավալով, որքանով դրանց հրապարակումը չի վտանգի հանցագործությունների կանխմանը, քրեական գործերով նախնական քննության օբյեկտիվությանը, լրիվության ու բազմակողմանիությանը, արդարադատության շահերին ու անաշառությանը, չի խախտի մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ինչպես նաև այլ անձանց պատիվն ու արժանապատվությունը և իրավունքների պաշտպանությունը։ Այդուհանդերձ, նշված պայմանները չեն կարող պատճառ դաշնամարտելու սույն փաստական տեղեկության տրամադրումը, և եթե նախնական քննության շահերից ելնելով, մասնավորապես՝ քրեական գործով մինչդատական վարույթի նյութերը տվյալ փուլում հրապարակման ներակա չեն, ապա քրեական գործ հարուցելու կամ ներգրավված մեղադրյաների թվի մասին տեղեկության տրամադրումն այդ հիմքերով չի կարող մերժվել։

### 4. Նախնական քննության գաղտնիքը և տեղեկատվության ազատությունը

Նախնական քննության տվյալները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հրապարակման միայն գործի վարույթը իրականացնող մարմնի թույլտվությամբ։

Մինչդատական վարույթի ընթացքում, դատախազությունը, հնարավորության դեպքում, պետք է աջակցի ԶԼՍ-ներին տեղեկություն տրամադրելու հարցում՝ արձանագրելով, որ տրամադրվող տեղեկությունը նախնական է՝ հիմնված այդ պահին վարույթը իրականացնող մարմնի ձեռք բերած փաստական տվյալների վրա։ Դատախազությունը կարող է շիրապարակել ԶԼՍ-ների կողմից հարցվող տեղեկությունը, եթե դրա հրապարակումը կարող է վտանգել նախնական քննության օբյեկտը։

Թյունը, բազմակողմանիությունը, լրիվությունը, դատավարության մասնակիցների անվտանգությունը, անմեղության կանխավարկածը, խախտել այլ անձանց իրավունքները, պատվի ու արժանապատվությունը, անձնական ու ընտանեկան կյանքը։

Նախնական քննության ավարտի, որպես մեղադրյալ ներգրավված անձանց թվի, մեղադրական եղակացությունը հաստատելու մասին տեղեկությունը պետք է տրամադրվի՝ կատարված հարցման հիմնա վրա, օրենքով սահմանված ժամկետում։ Մինչդատական վարույթի փուլում դատախազությունը կարող է շիրապարակել կասկածյալի, մեղադրյալի անոնազգանունը՝ սույն Կանոնների 3-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության պայմաններում։

### 5. Քրեական գործերով պաշտոնական հաղորդագրությունների մատչելիությունը

Մինչդատական վարույթի ընթացքում քրեական գործի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունը համապատասխան մարմինները պետք է առանց խորականության մատչելի դարձնեն բոլոր այն լրագրողներին և լրատվության միջոցներին, ովքեր դիմել են նույն տեղեկությունը ստանալու համար։ Եթե դատախազությունը տեղեկությունը է հրապարակվում իր գործունեության, կամ որևէ քրեական գործի, կամ նյութերի վարույթի ընթացքի վերաբերյալ, ապա այդպիսի տեղեկությունը պետք է տրամադրվի բոլորին՝ առանց խորականության՝ հաղորդագրությունների, մայլու ասուլիսների, լիզորված պաշտոնատար անձի միջոցով։

### 6. Դատախազության՝ որպես քրեական հետապնդում՝ իրականացնող մարմնի առանձին գործերով հրապարակային մեկնաբանությունները

Նկատի ունենալով, որ դատախազը, Սահմանադրությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, իրականացնում է նաև քրեական հետապնդում, դատարանում պաշտպանում մեղադրանք՝ դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցների վրա հիմնված իր ներքին համոզմանը, ուստի առանձին քրեական գործերով նրա ներկայացրած մեկնաբանությունները կամ դրանց վերաբերյալ տարածվող մամուլի հաղորդագրությունները չեն կարող գնահատվել որպես անմեղության կանխավարկածի խախտում։

Այդուհանդերձ, յուրաքանչյուր ննան դեպքում պետք է արձանագրվի, որ հրապարակված դատախազի ներքին համոզմունքն է՝ հիմնված գործով ձեռք բերված ապացույցների վրա՝ խուսափելով մելադրյալին կամ ամբաստամայլին որպես հանցագործ ներկայացնող գնահատականներից։

### 7. Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ համագործակցությունը

Դատախազությունը միասնական համակարգ է և զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցությունն ապահովվում է ՀՀ գլխավոր դատախազության զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության համար պատասխանատու անձի (այսուհետ՝ ‘Պատասխանատու անձ’ միջոցով):

Պատասխանատու անձը, հնարավորինս օպերատիվ, պետք է տեղեկացված լինի այնպիսի քրեական գործերի կամ դատախազական գործունեության արդյունքների մասին, որոնք հնարավոր է արժանանան հասարակության կամ միջազգային հանրության, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ուշադրությանը, ունենան հասարակական հմտություն:

Դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից սահմանադրական լիազորությունների իրականացնան, ինչպես նաև նրանց կողմից կատարված ուսումնասիրությունների, ամփոփումների վերաբերյալ, Կանոններին համապատասխան, զանգվածային լրատվության միջոցներին տեղեկություն տալու նպատակահարմարության, ժամկետի և ծավալի հարցը որոշում են այդ ստորաբաժանումները դեկավարող դատախազները:

Դատախազական գործունեությանը վերասերող նյութերը հրապարակելու հարցը լուծելիս անհիմանեցն է՝

- կշռադատված մոտեցում պահովել հրապարակման ներկայացվող նյութերի ընտրության նկատմամբ,

- խստորեն դեկավարվել մարդու անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջանությունից, պատիվն ու բարի հաճրավը ուժնեցությունից պաշտպանելու իրավունքի հիմնադրույթներով,

- պահովել զանգվածային լրատվության միջոցներում լուսաբանման համար նախատեսված նյութերի ու տվյալների մանրակրկիտ ստուգում՝ բացառելով պետական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների հրապարակումը,

- գերծ մնալ կանխակալ կարծիք հայտնելուց:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության անունից պաշտոնական հաղորդագրությունները զանգվածային լրատվության միջոցներին են տարածադրվում բացառապես Պատասխանատու անձի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համաձայնությամբ:

Պաշտոնական հաղորդագրությունների նախապատրաստման համար անհրաժեշտ նյութերը և դրանց նախագծերը մանուլի քարտուղարին են ներկայացնում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալները, դատախազության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները դեկավարող դատախազները:

Քրապարակման համար տրամադրված տեղեկատվության ճշգրտության համար պատասխանատվությունը են կրում մանուլի քարտուղարին տեղեկություն տրամադրած անձինք:

Սամուլի հաղորդագրությունները պատրաստելիս, հնարավորության դեպքում, կարող են ամբողջությամբ ներկայացվել կամ օգտագործվել մեջքերումները՝ քրեական գործ հարուցելու, որպես ներարդյալ ներգրավելու մասին որոշումներից կամ քրեական գործով ձեռք բերված այլ փաստաթղթերից, նյութերից՝ պահովելով համապատասխան հղումը:

Սամուլի, ռադիոյի և հեռուստատեսության

համար նախատեսված՝ դատախազության

գործունեությունը լուսաբանող նյութերը պետք է լինեն պատշաճ կարգով ստուգված և իրավաբանորեն անբերի:

### 8. Տեղեկության տրամադրումը ՀՀ դատախազության պաշտոնական համացնացային էջի միջոցով

Դատախազությունը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին այնքանով, որքանով դա չի հակասում մարդու և քաղաքացու իրավունքներին, ազգատվություններին և օրինական շահերին, ինչպես նաև պետական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքների պահպանությանը: Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Հանրապետության նախագահին է ներկայացնում հաղորդում՝ դատախազության նախորդ տարրվա գործունեության մասին:

Դատախազությունը պետք է միջոցներ ձեռնարկի նշանակած հաղորդումը, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ հրապարակվող կամ հանրային ուշադրության կենտրոնում գտնվող հարցերի վերաբերյալ տարածվող տեղեկատվությունը հասանելի դարձնելու բոլորին՝ հնարավորության դեպքում պապակվելով դրանց տեղադրումը ՀՀ դատախազության համացանցային էջում:

### 9. Քրեական գործերով տեղեկատվության պատասխանը և մարդու անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը

Քրեական գործերով տեղեկատվություն տրամադրելիս հարկ է դեկավարվել Սահմանադրությամբ, ըստ որի յուրաքանչյուր ոք ունի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք, ինչպես յուրա-

քանչյուր որ ումի անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք: Առանց անձի համաձայնության չի կարելի նրա վերաբերյալ հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Դատախազությունը պետք է քրեական դատավարության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ տարածելիս պահպանի նաև անձի, այդ բվում՝ դատավարության մասնակիցների անձնական և նոտանեկան կյանքի գաղտնիության իրավունքը և խուսափի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակելուց:

### 10. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և մարդու պատվի ու արժանապատվության իրավունքը

Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Քրեական դատավարության ընթացքի վերաբերյալ տեղեկություններ տարածելիս կամ հրապարակային մեկնաբանություններ ներկայացնելիս՝ դատախազությունը պետք է գերծ մնա այնպիսի որակումներից, մեկնաբանություններից, որոնք կարող են արատավորել անձի պատիվն ու արժանապատվությունը, կամ հրապարական անձանց գործարար համբավը: Որպես ելակետ պետք է ընդունել, որ սուսագ փաստերի վրա իիմնված (բացացությամբ բնական արատների) կամ գերական հանրային շահով պայմանավորված հայտարարությունները չեն կարող դիտարկել որպես մարդու պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկության տարածում:

### 11. Անմեղության կանխավարկածը

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավագործով:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկություն ԶԼՄ-ներին կարող է տրամադրվել կամ հաղորդվել միայն այն դեպքում և այն ծավալով, եթե դա չի վտանգում կանխավարկածի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Եթե, այդուհանդերձ, դատախազությունը մինչդադար կամ վարույթի փուլում որոշել է տեղեկություն տրամադրել սեփական նախաձեռնությամբ կամ ԶԼՄ-ներից ստացված հարցուների հիման վրա, ապա, միաժամանակ, պետք է խուսափի կասկածյալին կամ մեղադրյալին ծեռնաշղթաներով ցուցադրելուց կամ որպես հանցագործ ներկայացնելու ցանկացած այլ եղանակից:

Մինչդադար վարույթի ընթացքում քրեական գործի վերաբերյալ դատախազության կողմից տարածվող մանուկի հաղորդագրությունները պետք է պարունակեն ժանուեցում հետևյալ բովանդակությամբ:

«Հանցագործության մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

### 12. Քրեական գործերով անչափահասների վերաբերյալ տեղեկության տրամադրման առանձնահատկությունները

Դատախազական գործունեության կամ քրեական գործերի դատավարության վերաբերյալ տեղեկություն տրամադրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձվի անչափահասների իրավունքների պաշտպանությամբ: Մինչդադար վարույթի փուլում դատախազությունը պետք է ծեռնպահ մնա անչափահաս կասկածյալի, մեղադրյալի, տուժողի կամ վկայի իինքնությունը, անոն-ազգանունը հրապարակելուց: Բոլոր դեպքերում դատախազությունն իր իրավասությունների շրջանակներունը, որոնք կարող են հանգեցնել անչափահասի ինքնության հրապարակունը, կամ որոնք կարող են խչընդոտել նրա՝ հասարակությանը վերահստեղութելուն:

### 13. Քրեական գործերով տեղեկատվության ազատությունը և վկաների, տուժողների պաշտպանությունը

Քրեական գործերի վերաբերյալ տեղեկություն տրամադրելիս վկաների, տուժողների ինքնությունը չպետք է հրապարակվի, եթե դա վտանգում է նրանց կամիշի այն վտանգավոր հետեւանքները, որոնք կարող են հանգեցնել անչափահասի ինքնության հրապարակունը, կամ որոնք կարող են խչընդոտել նրա՝ հասարակությանը վերահստեղութելուն:

Վկաների և տուժողների ինքնությունը կարող է զաղունագերձվել, եթե վկան կամ տուժողը նախապես տվել են իրենց համաձայնությունը, կամ նրանց ցուցմունքի բովանդակության հրապարակուն ունի հանրային կարևորություն, կամ նրանց արդեն իսկ հանդես են եկել տվյալ քրեական գործի վերաբերյալ հրապարակային ելույթներով:

### 14. Կոռուպցիոն հանցագործություններով տեղեկատվության ազատությունը

Դատախազությունն իր լիազորությունների շրջանակներում պետք է ինարավորինս ապահովի հասկական կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների հրապարակայնությունը, աջակցի քաղաքացիական հասարակության ներգրավմանը կոռուպցիոնի դեմ պայքարում:

Հանրային շահի առկայության պայմաններում դատախազությունը պետք է միջոցներ ծեռնարկի ապահովելու կոռուպցիոն հանցագործությունների կապակցությամբ քննովոր

քրեական գործերի մասին տեղեկատվության հասանելիությունը հասարակության առավել լայն շրջանակներին: Իրականացնի հանրային իրազեկնանն ուղղված բարոզարշավ՝ նպաստելու կոռուպցիայի նկատմամբ անհանրությունականության մթնոլորտի ծեւավորմանը, խրախուսի և պաշտպանի կոռուպցիայի մասին քաղաքացիների՝ տեղեկություն փնտրելու, ստանալու, իրապարակելու, տարածելու ազատությունը:

### 15. Տեղեկատվության չարաշահման արգելը և դատաքննության ընթացքի վրա վճառակար ազդեցության կանխումը

Կարույրն իրականացնող մարմինը քրեական գործով նախնական քննության և դատաքննության վերաբերյալ տեղեկատվությունը չափոր է օգտագործի շահույթ ստանալու կամ օրենքի իրավաչափ կիրառման հետ չառնչվող այլ նպատակներով:

Քրեական դատավարության ընթացքում դատախազությունը պետք է ծեռնապահ մնա այնպիսի տեղեկության իրապարակումից, որը կարող է եապես ազդել դատաքննության բնականոն ընթացքի վրա: Մինչդատական վարույ-

թի փուլում կարող են չիրապարակվել կրնկրես քրեական գործով նախաքննություն իրականացնող քննիչի և հսկողություն իրականացնող դատախազի ինքնության վերաբերյալ տեղեկությունները՝ նրանց նկատմամբ հնարավոր ներգործությունը բացառելու, օրենքով նախատեսված այլ բացասական երեւույթները կանխելու համար:

### 16. Տեղեկատվության պարբերականությունը

Հանրային հետաքրքրություն ներկայացնող կամ հանրության հատուկ ուշադրությամբ արժանացած քրեական գործերի վերաբերյալ լրատվության միջոցներին տեղեկություն պետք է տրամադրվի պարբերաբար: Եթե դատախազությունը կոնկրետ քրեական գործի հարուցման, որին անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին հանրությանը տրամադրել է տեղեկություն, ապա նոյն եղանակով տեղեկություն պետք է տրամադրվի նաև նախնական քննության վերջնական արդյունքների, ինչպես նաև դատախազի կողմից ապացուցված հանգամանքների մասին:

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՉԺՀ գերազույն ժողովրդական դատախազության պատվիրակությունը Հայաստանում

2012 թվականի դեկտեմբերի 5-ին գլխավոր դատախազի տեղակալ **Արմեն ՂԱՆԻԵԼ ՅԱՆԻ** ընդունել է ՉՃՀ գերազույն ժողովրդական դատախազության պատվիրակությանը՝ միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ տիկին **Լի Սինի** գլխավորությամբ, որի ժամանակ քննարկվել են միջազգային իրավական համագործակցությանը վերաբերող հարցեր:

Պատվիրակությունը Երևան էր ժամանել՝ մասնակցելու հանցավոր նպատակներով ինտերնետում օգտագործելու դեմ հիմնախնդիրներին վերաբերող քննարկումներին: Չինացի գործընկերների հետ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպած կլոր սեղանը տեղի է ունեցել «Դատախազության դպրոց»-ում, որին մասնակցել են ոչ միայն դատախազության, այլև՝ ոստիկանության ներկայացուցիչները: Քննարկվել են նաև կիբերհանցագործությունների դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման հարցում դատախազու-

թյան դերին վերաբերող հարցեր, ինչպես նաև՝ կոնկրետ քրեական գործերով:

Հիշեցնենք, որ ՀՀ գլխավոր դատախազ **Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԸ** և ՉՃՀ գլխավոր դատախազ **Յան ԶՅԱՆՄԻՆԸ** 2012թ. հունիսի 11-ին Երևանում, ստորագրել էին «2012-2013թթ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության և ՉՃՀ գլխավոր դատախազության միջև համագործակցության» ծրագիր, որի շրջանակներում նախատեսված է համատեղ կազմակերպել քննարկումներ՝ տարբեր հանցատեսակների դեմ պայքարի առանձնահատկությունների վերաբերյալ:

## Հանդիպում դեսպանի հետ


ՀՀ գլխավոր դատախազ Աղվան ՀՈՎ-ՍԵՓՅԱՆԸ 2012 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունել է Հայաստանում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան Այհմդոս ԲՈԶԺԻԳԻՏՈՎԻՆ: Հանդիպման ընթացքում քննարկվել են հանցավորության դեմ պայքարում երկու երկրների իրավապահ մարմինների միջև հանա-

գործակցությանը վերաբերող հարցեր:

Կողմերը կարևորել են համագործակցության զարգացումը և նախնական պայմանավորվածություն ծեռք բերել մշակել համագործակցության ծրագիր ի լրումն երկու երկրների դատախազությունների միջև տարիներ առաջ ստորագրված համագործակցության համաձայնագրի:

### ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐԱԳԻՐ



ՀՀ գլխավոր դատախազությունում 2012թ. դեկտեմբերի 19-ին ստորագրվել է եռակողմ հուշագիր՝ ՀՀ գլխավոր դատախազության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի դեկավարի և «Հայ պետական ծառայողների միություն» հասարակական կազմակերպության միջև:

*Հուշագրով կողմերը պայմանավորվել են համատեղ քայլեր ձեռնարկել՝ հետևյալ նպատակների իրականացման համար.*

**1.** Նպաստել պետական ծառայողների հակառակություն ընկալման ձևավորմանը, կոռուպցիայի և կոռուպցիոն ռիսկերի մասին իրազեկմանը՝ «Ամբողջականության հիմնունքները դատախազության պետական ծառայության համակարգում» վերապատրաստման ծրագրի (այսուհետ՝ վերապատրաստման ծրագրի) պարբերական իրականացման միջոցով,

**2.** Աջակցել պետական ծառայողների կողմից հանրությանը նախուցվող ծառայությունների, մասնավորապես՝ պետական ծառայողների և քաղաքացիների փոխհարաբերությունների որակի բարձրացմանը՝ պետության անունից այդ գործառույթը իրականացնող պետական ծառայողների որակավորման բարձրացման միջոցով,

Նպաստել պետական ծառայողների մոտ գործնական հմտությունների խորացմանը,

**3.** Նպաստել կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրության թերությունների և բացերի վերահանմանը, առաջարկություններ ներկայացնել ընթացակարգային և համակարգային փոփոխությունների կիրարման առումով՝ ներառելով այդ փոփոխությունների նկարագրությունը վերապատրաստման ծրագրում,

**4.** Աջակցել ՀՀ դատախազության աշխատակազմում վերապատրաստման և մրցույթների անցկացման մոնիթորինգի իրականացմանը՝ ապահովելով մոնիթորինգ անցկացնողների մասնագիտական բարձր պատրաստվածությունը և անհատական բարոյահոգեբանական հատկանիշները:

## Կանխարգելել ընտրական իրավունքի դեմ ոտնձգությունները

**«Հ գլխավոր դատախազ Աղվան ՀՌՎՍԵՓՅԱՆԸ 2013 թվականի  
հունվարի 17-ին ընդունել է Եվրոպայի խորհրդի  
խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) պատվիրակությանը՝  
տիկին Կարին ՈՒՈՒ ՀՄԵԹի գլխավորությամբ»**



Ողջունելով իյուրերին՝ ՀՀ գլխավոր դատախազը հավաստել է դատախազության վճռականությունն ու պատրաստականությունը՝ հետանուտ լինել կայանալիք նախագահական ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների պատշաճ գրանցմանն ու քննարկմանը, դրանց համարժեք քրեական գնահատական տակտուն։ Ա.ՀՌՎՍԵՓՅԱՆԸ տեղեկացրել է, որ իր հրամանով ստեղծված աշխատանքային խումբը ոչ միայն հսկողություն է իրականացնելու գրավոր ստացված հաղորդումների պատշաճ գրանցման ու քննարկման նկատմամբ, այլ նաև իրականացնելու է լրատվամիջոցների նշտարիտարկում՝ քննարկման առարկա դարձնելով հանցագործության հատկանիշներ պարունակող ընտրախախտումների վերաբերյալ մամուլի հրապարակումները։

**«Ծնորական այս գործընթացում իրավապահ մարմինների հիմնական խնդիրն է կանխարգելել ընտրական**

**իրավունքի դեմ ոտնձգությունները, խախտումներ արձանագրվելու դեպքում հետևողական լինել համարժեք քրեական գնահատական տալուն։ Քաղաքացին պետք է վստահ լինի, որ հանցագործության մասին իր ահազանգը պատշաճ քննության առարկա կդառնա, և հանցագործը կպատժվի, իսկ այդ վստահության գրավականը հրապարակայնությունն է»,- ասել է գլխավոր դատախազը՝ հավաստելով, որ ապահովվելու է աշխատանքային խմբի գործունեության հրապարակայնությունը։**

Հյուրերի խնդրանքով Ա.ՀՌՎՍԵՓՅԱՆԸ անդրադարձել է ընտրակաշարքի, ընտրությունների ընթացքում վարչական ռեսուրսի օգտագործման համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներին և նշել, որ այս ընտրությունների ընթացքում ևս դատախազությունը բացատրական աշխատանքներ է իրականացնելու հասպակության առավել լայն շրջանակներում՝ իրազեկելու համար։

## Դատախազությունը վճռական ու պատրաստակամ է



**2013 թվականի հունվարի 21-ին << գլխավոր դատախազ Աղվան՝ ՀՈՎՍԵՓՅԱԼԵ ընդունել է ԱՊԿ Միջնորդարանական Վեհաժողովի՝ երկարաժամկետ դիտորդական առաքելության ղեկավար Ալեքսանդր ՍՏՈՅԱՆՈՎՈՅԻ գլխավորած պատվիրակությանը:**

Կողմերը քննարկել են ՀՀ Նախագահի ընտրությունների ընթացքում հնարավոր իրավախախումներին արագ արձագանքելու, պատշաճ իրավական գնահատական տալուն վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազը հյուրերին տեղեկացրել է, որ իր հրամանով հունվարի 14-ին ստեղծվել է աշխատանքային խումբ՝ ընտրախախումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և քննարկման նկատմամբ դատախազական հսկողություն իրավանացնելու համար, որի համակարգումն իրականացնելու է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ ԹԱՄՄԶՅԱԸ:

ՀՀ գլխավոր դատախազը հավաստել է, որ աշխատանքային խումբը գործելու է հրապարակային և հանրությունը պարերաբար տեղեկացնելու է ընտրությունների

ընթացքում արձանագրված քրեորեն հետապնդելի խախտումների և դրանց կապակցությամբ իրականացված քննության արդյունքների մասին:

**«Դատախազությունը վճռական ու պատրաստակամ է՝ հետամուտ լինելու հնարավոր ընտրախախումների վերաբերյալ հաղորդումների պատշաճ գրանցման ու քննարկմանը, դրանց համարժեք քրեականացնահատական տպարուն»,- ասել է ՀՀ գլխավոր դատախազը:**

Աղվան ՀՈՎՍԵՓՅԱԼԵ կարևորել է նաև կանխարգելիչ քայլերի ձեռնարկումը՝ դրանց թվին ընդգծելով ընտրախախումների համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին հանրության իրագեկելը:

## Դատախազների եթիկայի համատեքստում

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն ԴԱՆԻԵԼՅԱՆԸ 2013թ. հունվարի 17-ին ընդունել է Եվրամիության SIGMA նախաձեռնության ավագ խորհրդատու Սկավիեր ՍԻՍՏԵՐՆԱԾԻ գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ դատախազության համակարգում դատախազների եթիկայի կանոններին վերաբերող հիմնահարցեր: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, բարձր գնահատելով համատեղ նախաձեռնության կարևորու-

թյունը, նշել է, որ դատախազմերի էթիկայի կանոնները կարգավորված են գործող օրենսդրությամբ, իսկ դրանց պահպանումն ուղղակիորեն գտնվում է ՀՀ գլխավոր դատախազի ուշադրության կենտրոնում:

Գլխավոր դատախազի տեղակալը ներկայացրել է «Դատախազի վարքագիծ կանոնագիրը»՝ նշելով, որ այդ կանոնագիրը հստակ սահմանում է դատախազի վարքագիծի հիմնարար սկզբունքները, դատախազի վարքագիծի կանոններն ինչպես պաշտոնեական այնպես էլ՝ արտապաշտոնեական հարաբերություններում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել նաև դատախազմերի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու, ՀՀ գլխավոր դատախազին

առընթեր էթիկայի հանձնաժողովի կազմավորման և գործունեության ընթացակարգերին:

Փորձագետների կողմից բարձրացվել են մի շարք կարևոր հարցադրումներ՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության վերաբերյալ, մասնավորապես՝ օրենսդրության և դատական իշխանության մարմինների բարձրագույն պաշտոնատար անձանց էթիկայի միասնական համակարգի անցնելու նպատակահարմարության մասին:

Հանդիպման ավարտին կողմերը հույս են հայտնել, որ հետագա համագործակցությունը կնպաստի դատախազի վարքագիծի կամ էթիկայի կանոնների կիրառման արդյունավետության:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

«ՀՀ գլխավոր դատախազ Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԸ 2013թ. փետրվարի 6-ին ընդունել է ՀՀ-ում ԱՍՍ արտակարգ և լիազոր դեսպան Զոն ՀԵՖՖԵՐՆԻՒ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արամ ԹԱՍՍՀՅԱՆԸ, ԱՍՍ արդարադատության դեպարտամենտի մշտական իրավախորհրդատու Զոն ԼՈՒԵԶՅԱՆԸ:»

Կողմերը քննարկել են ՀՀ նախագահական ընտրությունների ընթացքում հանցագործության հատկանիշները պարունակող ընտրախախտումներին իրավապահ մարմինների կողմից արագ արձագանքելու, պատշաճ իրավական գնահատական տալուն վերաբերող հարցեր: ՀՀ գլխավոր դատախազը ներկայացրել է ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և քննարկման նկատմամբ դատախազական հսկողություն իրականացնելու համար դատախազությունում ծևավորված աշխատանքային խնդիր գործունեություն՝ տեղեկացնելով, որ ստացված ահազանգերի և դրանց քննարկման արդյունքների մասին հանրությանը պարբերաբար տրամադրվում է տեղեկություն ՀՀ դատախազության ինտերնետային էջի միջոցով: Ընդ որում, տեղեկանքում ներառված են նաև ԶԼՄ-ների

այն իրավարակումները, որոնք դատախազությունն իր նախաձեռնությամբ դարձնում է քննության առարկա՝ մշտադիտարկման արդյունքում:

Կարևորելով ընտրական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վերահաստատումը՝ ԱՍՍ դեսպանը բարձր է գնահատել այդ ուղղությամբ դատախազության ծեննարկած քայլերը՝ կարևորելով հատկապես ստացված հաղորդմանը քննարկման արդյունքների իրապարակայնության ապահովումը, քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը զարգացնելուն ուղղված միջոցառումներն ու մամուլի իրապարակումներին դատախազության նախաձեռնությամբ ընթացք տալը:

Կողմերը քննարկել են նաև փոխգործակցությունը զարգացնելուն վերաբերող այլ հարցեր:



## ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՓՈՓԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԵԼԵՐԸ

2013 թվականի հունվարի 31-ին <<Հատուկ քննչական ծառայությունում, <<զիսավոր դատախազ Աղվան ՀՈՎՍԵՓՅԱՆԻ մասնակցությամբ, անցկացված խորհրդակցությունում ամփոփվել են 2012 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների արդյունքները:



Խորհրդակցությունը վարել է ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Արմեն ՆԱՊԻՐՅԱՆԸ:

Տարեկան աշխատանքների ամփոփմանը հանդես է եկել ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդա-

կան Անդրանիկ ՄԻՐԶՅԱՆԸ:

2012 թվականի ընթացքուն ՀՀ Հատուկ քննչական ծառայության կատարած աշխատանքները ներկայացնող համառոտ տեղեկանքին կարող եք ծանոթանալ ՀԶՕ-ի ինտերնետային կայքում՝ [www.investigatory.am](http://www.investigatory.am)



ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ  
ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**ԷԼԻԶԲԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ Վալիկոյի**

Ծնվել է 1969 թվականին, Վրաստաճի Ախլքալակի շրջանի Կորտիկամ գյուղում:

ԵՊՐ-ի իրավագիտության ֆակուլտետն ավարտելուց հետո, 1994 թվականից աշխատում է ՀՀ դատախազության համակարգում. Երևանի կայազորի գինվորական դատախազության քննիչ, ավագ քննիչ, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության ՀԿԳ քննիչ, Գործադրի կայազորի գինվորական դատախազի տեղակալ, Շիրակի կայազորի գինվորական դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 13-ի իրամանով Գ. Էլիզբարյանը նշանակվել է Լոռու կայազորի գինվորական դատախազ:

**ՍԱՐԳՍՅԱՆ Տիգրան Վլադիմիրի**

Ծնվել է 1953 թվականին, Տավուշի մարզի Կորի գյուղում:

Ավարտել է ՌԴ Օմսկ քաղաքի միլիցիայի բարձրագույն դպրոցի իրավաբանական ֆակուլտետը:

Որպես քննիչ աշխատել է ոստիկանության համակարգում: Դատախազության համակարգում է 1999 թվականից. կայազորի գինվորական դատախազի օգնական, դատախազի տեղակալ, գինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ, ավագ դատախազ, Եղեգնաձորի կայազորի գինվորական դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, արժանացել է գերատեսչական պարգևների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 13-ի իրամանով Տ. Սարգսյանը նշանակվել է Գորիսի կայազորի գինվորական դատախազ:

**ՄԱՆՈՒՇԱԿՅԱՆ Ստեփան Տավրոսի**

Ծնվել է 1958 թվականին, Երևան քաղաքում:

Ավարտել է ԵՊՐ իրավագիտության ֆակուլտետը: ՀՀ դատախազության համակարգում է 1994 թվականից. կայազորի գինվորական դատախազության քննիչ, կայազորի գինվորական դատախազի ավագ օգնական, կայազորի գինվորական դատախազի տեղակալ, Զանգեզուրի կայազորի գինվորական դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, բազմից խրախուսվել է ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 13-ի իրամանով Ստ. Մանուշակյանը նշանակվել է Եղեգնաձորի կայազորի գինվորական դատախազ:

**ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ Համբարձում Գրիշայի**

Ծնվել է 1976 թվականին, Երևանում:

Ավարտել է ԵՊՐ իրավագիտության ֆակուլտետը: Դատախազության համակարգում է 2000 թվականից. մարզի դատախազության քննիչ, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության քննիչ, դատախազի օգնական, ավագ դատախազ, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ:

Արդարադատության Երևորոր դասի խորհրդական է, արժանացել է ՀՀ գլխավոր դատախազի խրախուսանքների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 13-ի իրամանով Յ. Մելիք-Սարգսյանը նշանակվել է Սևանի կայազորի գինվորական դատախազ:

## ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Արտավագդ Հենրիկի

Ծնվել է 1965 թվականին, Լենինական (Գյումրի) քաղաքում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը: Դատախազության համակարգում է 1990 թվականից. շրջանային դատախազության քննիչ, Երևան քաղաքի դատախազության ավագ քննիչ, ՀՀ գինվորական դատախազի օգնական, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության բաժնի պետ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, արժանացել է գերատեսչական պարգևների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 13-ի հրամանով Ա. Հարությունյանը նշանակվել է ՀՀ գինվորական դատախազի տեղակալ:

### ԹԱՂԵՎՈՍՅԱՆ Հովհաննես Կարուշի

Ծնվել է 1967 թվականին, Լենինական (Գյումրի) քաղաքում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը:

ՀՀ դատախազության համակարգում է 1996 թվականից. Կայազորի գինվորական դատախազի օգնական, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ, Շիրակի կայազորի գինվորական դատախազի տեղակալ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 19-ի հրամանով Յ. Թադևոսյանը նշանակվել է Շիրակի կայազորի գինվորական դատախազ:

### ՍՈՒՔԻԱՅՅԱՆ Հովիկ Ռաֆիկի

Ծնվել է 1964 թվականի Մասիսի շրջանի Սարմարաշեն գյուղում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 1989 թվականից. շրջանային դատախազության քննիչ, դատախազի օգնական, ավագ օգնական, Արարատի մարզի դատախազի տեղակալ, Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, պարգևատրվել է «Մշիթար Գոշ» մեդալով:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 21-ի հրամանով Յ. Սուրբիասյանը նշանակվել է Վայոց ծորի նարզի դատախազ:

### ԶԱՔՈՅԱՆ Հմայակ Հրաչիկի

Ծնվել է 1958 թվականի Կամո (Ներկայում՝ Գավառ) քաղաքում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը:

ՀՀ դատախազության համակարգում է 1988 թվականից. Կիրովականի (Կանաձոր) քաղաքի դատախազության ավագ քննիչ, ՀՀ դատախազության բաժնի դատախազ, Եղել է ԼՂՀ դատախազության Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետությունում, այնուհետև գրադեցրել է ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի, Արագածոտնի մարզի դատախազի պաշտոնները:

Արդարադատության Երրորդ դասի պետական խորհրդական է, արժանացել է գերատեսչական խրախուսանքների և պարգևների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 21-ի հրամանով Յ. Զաքոյանը նշանակվել է Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ:

### ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Հակոբ Մմբատի

Ծնվել է 1956 թվականին, Չամիսորի շրջանի Չարդախլու գյուղում:

Ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 1999 թվականից. Երևանի կայազորի գինվորական դատախազի օգնական, ՀՀ գինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ, ավագ դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության բաժնի ավագ դատախազ, Վարչության ավագ դատախազ, Վարչության պետի տեղակալ:

Արդարադատության առաջին դասի խորհրդական է, արժանացել է գերատեսչական խրախուսանքների և պարգևների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. դեկտեմբերի 21-ի հրամանով Յ. Մարտիրոսյանը նշանակվել է Արագածոտնի մարզի դատախազ:

# ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,

*(որակման հիմնախնդիրները և նրա  
սահմանազատումը այլ հանցագործություններից\*)*

## Արամ ԹԱՍԱԶՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազութեղակալ,  
արդարադատության պետական խորհրդական,  
իրավաբանական գիտությունների դոկտոր

**Խուլիգանության առանձնապես որակյալ տեսակը սահմանված է <<քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է <<քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:**

**Զենքի հասկացությունը և նրա դասակարգումն ըստ տեսակների տրված է «Զենքի մասին» <<օրենքով, համաձայն որի՝ զենքն իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խցելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքերն ու առարկաներն են: Երանք լինում են հրազեն, օդանշիչ, նետողական, զազային, ազդանշանային և սառը տեսակների:**

Խուլիգանության ժամանակ որպես զենք օգտագործվող առարկաների թվին են դասվում վճառ պատճառելու համար հատուկ պատրաստված կամ հարմարեցված բոլոր առարկաները, ինչպես նաև տնտեսական, կենցաղային նշանակության առարկաները, որոնք հանցավորի կողմից օգտագործվում են տուժողի նկատմամբ բռնություն գործադրելիս: Դրանց թվին են դասվում դանակը, կացինը, պտուտակահանը, բիզզը, մուլրը, մահակը, նմանատիպ ցանկացած առարկա:

Ի տարբերություն նախկինի, գործող օրենսդրության համաձայն, միևնույն է, թե որտեղից և երբ են վերցվում մարդուն վճառ պատճառելու հնարավորություն ընձեռող առարկաները: Ստացվում է, որ դեպքի վայրից վերցված քարի կտորը կամ կաթասայի կափարիչը, երբ այն գործադրվել է մարմնական վճառ պատճառելու համար, համարվում է որպես զենք օգտագործվող առարկա: Նման մոտեցումը, մի շարք իրավագետների կարծիքով, արդարացված չէ, որքանով որ, ըստ նրանց՝ խուլիգանութ-

յան հասարակական վտանգավորությունն ավելի բարձր որակ է ստանում այն դեպքում, երբ հանցավորը նախօրոք պատրաստում կամ իր հետ վերցնում է մարմնական վճառ պատճառելու համար հարմարեցված առարկա, կամ ինչպես նշված էր նախկին օրենսդրությամբ՝ «մարմնական վճառվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաներ»:

Ինչ վերաբերում է մարմնական վճառ պատճառելու համար դեպքի վայրից վերցված առարկաներին, ապա, ըստ նրանց, այն իր հասարակական վտանգավորությամբ որակապես չի տարբերվում ուղղակի բռնության գործադրման հետ զուգորդված խուլիգանությունից, որքանով որ առանց այդ առարկաների էլ հնարավոր է բավականաչափ մեծ վճառ պատճառել:

Նշված հանգամանքները հաշվի առնելով՝ **Ա.Գաբրուզյանը** գտնում է, որ հանցագործության վայրում վերցված առարկաների գործադրումը կամ գործադրման փորձը չափոր է հիմք հանդիսանա արարքը որպես առանձնապես չարամիտ խուլի-

\*) Սկիզբը նախորդ համարում:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵԼՉԻՆ

գանություն որակելու համար, և ըստ նրա՝ ճիշտ կլիներ ՀՀ նոր քրեական օրենսգրքում պահպանվեր «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ» ձևակերպումը<sup>1</sup>, սակայն, ինչպես ընդունված է ասել, «ունենք այն, ինչ ունենք», և գործող օրենսդրության համաձայն՝ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար միևնույն է, թե որտեղից և երբ են վերցված մարդուն վնաս պատճառելու հնարավորություն ընձեռող առարկաները:

Զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրման տակ հասկացվում է նրա փաստացի օգտագործումն ուղղակի նշանակությամբ՝ որպես տուժողի նկատմամբ բռնություն գործադրելու միջոցի: Ընդ որում, հնացավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով ոչ միայն այն դեպքում, երբ հնացավորը դրանց գործադրմամբ պատճառել կամ փորձել է պատճառել մարմնական վնաս, այլև այն դեպքում, երբ խուլիգանական գործողությունների կատարման ժամանակ նշված առարկաների օգտագործումն իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի կամ առողջության համար:

Այսինքն, զենքի և որպես զենք օգտագործվող առարկաների գործադրման ժամանակ առողջությանը մարմնական վնաս պատճառելու տեսքով հետևանքի առաջացումը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խուլիգանության հնացակազմի պատահի հատկանիշ չէ: Այդ իսկ պատճառով, հնացավորի կողմից խուլիգանական գործողությունների կատարման ժամանակ տուժողին վնաս պատճառելու նպատակով նրա ուղղությամբ դանակ, կացին, մարմնական վնաս պատճառելու համար այլ առարկաներ նետելու կամ կրակոց արձակելու դեպքում, անկախ հետևանք առաջացնելու կամ չառաջացնելու հանգամանքից, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Խուլիգանական գործողությունների ժամանակ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմանը տուժողին թերև և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում հնացավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, և նրա արարքը դիտավորությամբ մարմնական վնաս պատճառելու համար նախատեսված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ, 117-րդ հոդվածներով չի որակվում:

Ապօրինի կերպով ձեռք բերած, պահած կամ կրած զենքով կատարված խուլիգանության դեպքում հնացավորի արարքը լրացուցիչ որակվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածով: Խուլիգանական գործողությունների ժամանակ տուժողին դիտավորությամբ ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքում հնացավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 112-րդ հոդվածների համակցությամբ:

Խուլիգանական գործողությունների ժամանակ տուժողին դիտավորությամբ մահ պատճառելու դեպքում արարքի որակումը պայմանավորված է մի շարք հանգամներով:

Այս դեպքում, երբ սպանության հիմնական շարժառիթը խուլիգանական է, հնացավորի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ որպես խուլիգանական դրույմներով կատարված սպանություն, իսկ այն դեպքում, երբ սպանության հիմնական շարժառիթը վրեժն է, խանդը, նախանձը, անձնական անքարյացական հարաբերությունները և այլն, արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով կամ համապատասխան այլ հոդվածներով, բայց ոչ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով:

Այսինքն, խուլիգանական դրույմները և կենցաղային շարժառիթները, ինչպես արդեն նկատել ենք, արարքի որակման ժամանակ բացառում են միմյանց: Հետևաբար, եթե անձի կյանքի նկատմանը ուղնացնություն ուղեկցվել է հասարակական կարգը խախտող գործողություններով,

<sup>1</sup> Տե՛ս. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, Երևան, 2009թ., էջ 644-645:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

սակայն հանցավորի գործողությունների հիմքում ընկած է վրեժը և վիրավորանքը, այդպիսի սպանությունը, այլ ծանրացնող հանգամանքների բացակայության դեպքում, ենթակա է որակման **ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ որպես հասարակ սպանություն: Փաստորեն, նման դեպքերում հանցավորը ոտնձգում է տուժողի կյանքի նկատմամբ՝ դեկավարվելով ոչ թե խուլիզանական դրդումներով, այլ տուժողի գործողություններով պայմանա-Վորված վրեժի շարժառիթով:**

Այս դիրքորոշումն է արտահայտված նաև սպանությունների վերաբերյալ գործերով դատակամ պրակտիկայի մասին 1960-ական թվականներից մինչ օրս դատակամ բարձրագույն աստյանների կողմից ընդունված և գործող բռնու որոշումներում:

Ինչպես նկատել է **Բ.Ս.Վոլկովը**, խուլիզանական դրդումներով սպանության համար վճռական նշանակություն ունի ոչ թե անձի կյանքի նկատմամբ ոտնձգությանը նախորդող պահին հանցավորի գործողության բնույթը, այլ, նախև և առաջ, կատարված հանցագործության կապը խուլիզանական դրդումների հետ:<sup>2</sup>

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը սահմանում է ոչ թե խուլիզանության հետ զուգորդված սպանության, այլ խուլիզանական դրդումներով կատարված սպանության հանցակազմ:** Այստեղից հետևում է, որ խուլիզանական դրդումներով կատարված սպանությունն անպայման չէ, որ պետք է զուգորդված լինի խուլիզանության հետ, իսկ խուլիզանության հետ զուգորդված սպանությունն ինքնին չի նշանակում, որ այն կատարվել է խուլիզանական դրդումներով:

Արարոքը **ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելիս՝ անհրաժեշտ է պարզել**, որ հանցավորի դիտավորությունն իրականում ուղղված է եղել զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմանը: Հանցավորի մոտ դրանց հայտնաբերման գուտ փաստը, առանց դրանցով մարդու առողջությա-

նը վնաս պատճառելու փորձի կատարման, ինչպես նաև դրանց ցուցադրումը, առանց որևէ կոնկրետ գործողությունների կատարման սպանալիքների կամ առանց հոգեբանական բռնություն գործադրություն նպատակի, այսինքն առանց դրանց իրական գործադրման կամ հոգեբանական բռնության գործադրման նպատակի մասին վկայող հանգամանքների, հիմք չեն հանդիսանում արարոք ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար:

Քննարկվող որակյալ հատկանիշով չի որակվում նաև արարքն այն դեպքում, եթե հանցավորն սպանում է անպետք (անսարք) կամ ոչ լիցքավորված զենքով, առանց գործադրման նպատակի զենքի ցուցադրմանը, ինչպես նաև, եթե սպանում է զենքի հիմտացիա առարկաներով, եթե նրանք չեն օգտագործվում որպես կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության միջոց:

Ինչպես նկատեցինք, զենքի կիրառումը ենթադրում է դրա խոցող հատկությունների օգտագործումը: Այդ իսկ պատճառով, ինչպես նշել է ՌԴ Գերագույն դատարանի ալենումը **Բ-ի Վերաբերյալ քրեական գործով՝ խուլիզանության կատարման ժամանակ գազային ատրճանակի բռնակով տուժողին հարվածներ հասցնելը պետք է որակել ոչ թե զենքի գործադրմանը կատարված խուլիզանությունը, այլ՝ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմանը կատարված խուլիզանությունը:**<sup>3</sup>

Քննարկվող որակյալ հատկանիշով չի որակվում նաև արարքն այն դեպքում, եթե զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկան գործադրվել է միայն գույքի ոչնչացման կամ վնասման համար, և այն իրական սպանալիք չի ստեղծել անձանց կյանքի կամ առողջության համար:

Հանցավորի արարոքը **ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելիս՝ անհրաժեշտ է պարզել**, թե արդյո՞ք հանցավորի դիտավորությունն ուղղված չի եղել սպանության կատարմանը:

<sup>2</sup> Տե՛ս. Վոլկով Բ.С. Մոтив и квалификация преступлений. Казань. 1968. с.77-79.

<sup>3</sup> Տե՛ս. Ведомости Верховного Суда Российской Федерации. 1999, №3. с.19.

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵԼՉԻՆ

Որոշակի բարություն և հետաքրքրություն է ներկայացնում արարքի որակումն այն դեպքերում, երբ խմբակային խուլիգանության ժամանակ հանցակիցներից որևէ մեկը գործադրում է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկա:

Այս խնդիրն իրավաբանական գրականության մեջ չի դարձել լայն քննարկման առարկա, իսկ գործնականում անտեսվել է իրավակիրառ մարմինների կողմից:

Նկատի ունենալով, որ խմբի կողմից կատարված խուլիգանությունը միասնական հանցագործություն է, որի դեպքում հանցակիցներից (համակատարողներից) յուրաքանչյուրը կարող է կատարել հանցակազմի օբյեկտիվ կողմն աճբողջությամբ կամ նրա մի մասը, ապա նման պայմաններում հանցակիցների արարքը կարող է որակվել՝ պայմանավորված նրանց գործողություններով և դիտավորության ուղղվածությամբ:

Այսպես, այն դեպքում, երբ խմբի անդամները տեղյալ են եղել, ունեցել են նախնական համաձայնություն խմբի անդամի կողմից խուլիգանական գործողությունների կատարման ժամանակ զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ ունենալու և կիրառելու մասին, բույլ են տվել խմբի անդամի կողմից խուլիգանության ժամանակ դրա գործադրումը, ապա, գործող օրենսդրության համաձայն, խմբի բոլոր անդամների գործողությունները ենթակա են որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Այն դեպքում, երբ խմբակային խուլիգանության մասնակիցները չեն հնացել խմբի անդամի մոտ եղած զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների առկայության և օգտագործման մասին, սակայն այդ մասին իմացել են նրա գործադրման ընթացքում և չեն խոչընդոտել դրա հետագա գործադրմանը, այլ ընդհակառակը՝ շարունակել են որոշակի օժանդակություն ցույց տալ զինված խուլիգանին, բոլոր հանցակիցների արարքը նույնպես ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով:

Երբ խմբի կողմից կատարված խուլիգանության ժամանակ զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի մասին բացի այն գործադրողից այլ հանցակիցների հայտնի չի եղել, և դրանց գործադրումը

խմբի այլ անդամների համար եղել է անսպասելի, ապա նման դեպքում առկա է կատարողի սահմանազանցում, և այդ գործողությունների համար կատարողը կրում է անձնական պատասխանատվություն: Հանցակիցի սահմանազանցման համար մյուս հանցակիցները պատասխանատվություն չեն կրում:

Եթեմն խուլիգանություն կատարող անձի գործողություններում միաժամանակ առկա են լինում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի տարբեր մասերով նախատեսված արարքները: Նման դեպքերում արարքը ենթակա է որակման միայն այն մասով, որն առավել խիստ պատիժ է սահմանում:

Իսկ այն դեպքում, երբ անձը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունները կատարել է տարբեր ժամանակ, ապա արարքը ենթակա է որակման հանցագործությունների համակցությամբ: Եթե խուլիգանության ընթացքում անձին պատճառվել է ծանր մարմնական վնաս կամ մահ՝ հանցավորի արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 112-րդ կամ 258-րդ և 104-րդ հոդվածների համակցությամբ:

Այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորությունն ուղղված է խուլիգանական դրդումներով առողջությանը վնաս պատճառելուն, խուլիգանական դրդումներով սպանություն կատարելուն և կատարված արարքում առկա է միայն խուլիգանական շարժափթթ, առանց այն արարքների, որոնք հնարավոր են դարձնում արարքն ինքնուրույն 258-րդ հոդվածով որակելը, արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերով:

Եթե խուլիգանության ընթացքում հափշտակվում է գույք, դրամ կամ այլ իր, ապա արարքը, ըստ կատարման եղանակի և շարժափթթի, ենթակա է որակման համապատասխանաբար՝ գողության և խուլիգանության, կողոպուտի և խուլիգանության, ավազակության և խուլիգանության համակցությամբ: Հանցագործությունների համակցությամբ է որակվում նաև ծանապարհային երթևեկության կանոնների հանցավոր խախտումների հետ զուգորդված խուլիգանությունը:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

Անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված խոլիգանությունն անհրաժեշտ է տարբերել ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված սպառնության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքից: Նշված հանցակազմերի տարբերությունը պետք է դիտարկել հանցագործության ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ կողմերով:

Ինչպես դժվար չէ նկատել, սպառնության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի հանցակազմի օրյեկտը մարդու կյանքի և առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Օբյեկտիվ կողմից՝ սպառնության կամ ծանր մարմնական վնաս պատճառելու սպառնալիքը դրսերքովում է հանցավորի համար կոնկրետ անձին սպառնության կամ ծանր մարմնական վնաս պատճառելու իրական սպառնալիքներով, որը, որպես հոգեբանական հարկադրանքի ծև, տուժողի մոտ առաջացնում է վախի, տագնապի, իր անվտանգության համար անհանգստության զգացում, որը, միաժամանակ, հանցավորի նտադրության արդյունքն է:

Առողջությանը միջին ծանրության կամ թերև վնաս պատճառելու սպառնալիքները ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը չեն առաջացնում: Սպառնության և առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի շարժառիթները կարող են լինել վրեժը, խանդը, անձնական անբարյացական հարաբերությունները և այլն:

Խոլիգանության դեպքում հանցագործության հիմնական օբյեկտը հասարակական կարգն է, օբյեկտիվ կողմը դրսերքովում է հասարակական կարգի կոպիտ խախտման մեջ, որն արտահայտվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Սուբյեկտիվ կողմից՝ հանցավորը գիտակցում է, որ իր արարքները կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը, և որ դրանք բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսերություններ են հասարակության նկատմամբ: Ի տարբերություն սպառնության կամ

առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի հանցագործության՝ խոլիգանության դեպքում վրեժը, խանդը, անձնական անբարյացական հարաբերությունները հանցագործության շարժառիթ չեն կարող լինել:

Դատական պրակտիկան ցույց է տվել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում տուժողի հասցեին սպառնալիքների արտահայտման ժամանակ հանցավորը ցանկանում է, որ տուժողը կամ փոխի իր վարքագիծը, կամ կատարի այնպիսի գործողություններ, որոնք հօգուտ իրեն են, իսկ խոլիգանության ժամանակ հանցավորը կամ ընդիհանրապես որևէ պահանջ չի ներկայացնում տուժողին, կամ դրանք կրում են խոլիգանական բնույթ:

Վերջին դեպքում հանցավորի դիտահորությունն ուղղված է ոչ այնքան սպառնալիքի իրականացմանը, որքան դրանով հասարակական կարգի կոպիտ խախտմանը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսերմանը՝ պայմանավորված իր անձի առավելությունները ընդգծելու մոլուցքով, «ինքնահաստատման» գգտումով, շրջապատին և հասարակությանը հակադրվելու և հակազդելու հանդուզն ցանկությամբ:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ եթե խոլիգանական գործողությունները գուգորդվել են սպառնության սպառնալիքով, ապա արարքը ենթակա է որակման միայն ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, որքանով որ այս դեպքում սպառնալիքը ներառվում է խոլիգանության հանցակազմի մեջ: Չարկ է նկատել նաև, որ բռնության սպառնալիքով զուգորդված խոլիգանությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր) ավելի խիստ է պատժվում, քան սպառնության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի (ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդված) դեպքերը:

Գործնականում դժվարություններ են առաջանում նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խոլիգանությունը ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնա-

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

սելու հանցակազմերի տարանջատման ժամանակ, որքանով որ երկու հանցագործությունների օբյեկտիվ կողմն էլ դրսւորվում է միևնույն կերպ՝ գույքի ոչնչացմամբ կամ վնասմամբ:

ՀՅ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված՝ գույքը ոչնչացնելու կամ վնասելու՝ որպես սեփականության դեմ ուղղված հանցագործության օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կարգավորում են գույքի օրինական տիրապետությունը, տնօրինումը և օգտագործումը։ Հանցագործության անմիջական օբյեկտն այն կոնկրետ սեփականությունն է, որին վնաս է հասցնում հանցավոր արարքը։ Քննարկվող հանցագործության առարկան այն իրն է կամ առարկան, որը մարդկային աշխատանքի արդյունքում հանդես է գալիս որպես շարժական կամ անշարժ գույք։

Գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու շարժաթիթը կարող է լինել վրեժը, նախաճած, անճնական անբարյացական հարաբերությունները և այլն։ Ուրիշին պատկանող գույքը կարող է ոչնչացվել կամ վնասվել նաև խուլիգանական դրդումներով։ Այս հանցակազմերի տարրերակման համար նույնական է ինչպես սպանության կամ ծանր մարմնական վնաս պատճառելու սպառնալիքի և խուլիգանության տարրերակման դեպքում, անհրաժեշտ է անդրադառնալ երկու հանցակազմերի տարրերությանը, հանցակազմերի տարրերին, նկատի ուժենալով, որ հասարակական կարգը կարող է խախտվել բազմաթիվ հանցագործությունների ժամանակ, այդ թվում և ուրիշի գույքը դիտավորությանը ոչնչացնելու կամ վնասելու դեպքում, սակայն խուլիգանության համար անհրաժեշտ է ևս մեկ պարտադիր հատկանիշ, այն է՝ հանցավորի կողմից հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսւորումը՝ պայմանավորված խուլիգանական շարժառիթի և նպատակի առկայությամբ։

Գործնականում խնդիր է առաջանում, թե ինչպես որպես արարքն այն դեպքում, երբ խուլիգանությունը գուգորդվել է ուրիշի գույքի դիտավորությամբ ոչնչացման կամ վնասման այնպիսի դեպքերի հետ, որոնք տուժողին չեն պատճառել գգալի չափերի վնաս կամ պատճա-

ռել են զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի վնաս կամ կատարվել են հրկիզման, պայթյունի կամ հանրավտանգ այլ եղանակներով, կամ առաջացրել են պատճական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ներկայացնող արարկաների ոչնչացում կամ վնասում, կամ անզգուշությամբ առաջացրել են մարդու մահ։

Նման դեպքերում, մեր կարծիքով, պետք է կիրավեն արարքների որակման հետևյալ կանոնները։

Այն դեպքերում, եթե խուլիգանությունը գուգորդվել է ուրիշի գույքի ոչնչացման կամ վնասման այնպիսի դեպքերի հետ, որոնք տուժողին գգալի չափերի վնաս չեն պատճառել, հանցավորի արարքը ենթակա է որակման ՀՅ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով, որքանով որ օրենսդիրը քրեորեն պատմելի է համարում ուրիշի գույքի դիտավորությամբ ոչնչացման կամ վնասման այնպիսի դեպքերը, որոնք տուժողին գգալի և դրանից ավելի չափերի վնաս են հասցըրել։

Այն դեպքերում, եթե խուլիգանության ընթացքում գույքի դիտավորությամբ ոչնչացման կամ վնասման արդյունքում տուժողին պատճառվել է ՀՅ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գգալի չափերի վնաս, ապա հանցավորի արարքը դարձյալ ենթակա է որակման միայն ՀՅ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով, որքանով որ գույքի դիտավորությամբ կամ վնասմամբ գգալի չափի վնասի պատճառումը ներառվում է ՀՅ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմի մեջ։

Ինչ վերաբերում է խուլիգանության ժամանակ ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու այն դեպքերին, որոնց ժամանակ անձին պատճառվել է խոշոր վնաս, արարքը ենթակա է որակման ՀՅ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի և 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համակցությամբ, իսկ նույն գործողությունների արդյունքում տուժողին առանձնապես խոշոր չափի վնաս պատճառելու դեպքում՝ ՀՅ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի և 185-րդ հոդ-

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

վասի 3-րդ մասի 1-ին կետի համակցությամբ:

Խուլիգանության ժամանակ ուրիշի գույքի դիտավորությամբ ոչնչացումը կամ վնասումը հրկիզման, պայթյունի կամ այլ հանրավտանգ եղանակով, որը չի պատճառել առանձնապես խոշոր չափերի վնաս, ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ և 185-րդ հոդվածի 2-րդ մասով: Խույն գործողությունը, որի արդյունքում տուժողին պատճառվել է առանձնապես խոշոր չափերի վնաս կամ առաջացրել է պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում, կամ անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ և 185-րդ հոդվածի 3-րդ մասի համակցությամբ:

Խուլիգանությունն անհրաժեշտ է տարբերել նաև զանգվածային անկարգություններից, որոնց ժամանակ հանցավորի գործողությունները կարող են ուղեկցվել բռնությամբ, ջարդերով, հրկիգումներով, գույքը ոչնչացնելով կամ վնասելով, իրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր գործադրելով կամ իշխանության ներկայացուցչին զինված դիմադրություն ցույց տալով: Նշված հանցակազմերի տարբերակումը հիմնականում պայմանավորված է հանցակազմի սուբյեկտիվ կողմով:

Ի տարբերություն խուլիգանության՝ զանգվածային անկարգությունների կազմակերպման նպատակը պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման նարմիններին ինչ-ինչ պահանջների բավարարմանը հարկադրելն է, իշխանության նարմինների հեղինակագրկումը, վարկարեկումը, որն օբյեկտիվ կողմից արտահայտվում է պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման նարմնի գործողությունների կամ որոշումների դեմ բողոքի անվան տակ մեծաթիվ մարդկանց հավաքելու և նրանց անկարգությունների, վայրագությունների, սանձարձակության

դրույլու և կատարելու մեջ:

Խնդիր է առաջանում նաև խուլիգանության և վանդալիզմի հանցակազմերի տարաբնջատման ժամանակ: ՀՀ քրեական օրենսգրքի 260-րդ հոդվածի համաձայն՝ վանդալիզմը շենքերը կամ այլ կառույցներն անպարկեցն գրագրություններով կամ պատկերներով պղծելը, հասպարակական տրանսպորտում կամ այլ հասպարակական վայրերում գույքը վճասելը է, եթե բացակայում են առավել ծանր հանցագործության հատկանիշները: Ինչպես դմվար չէ նկատել, վանդալիզմն իր օրենսդրական նման ձևակերպմանը խուլիգանության յուրօրինակ դրսերում է, և այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մի շարք եղինակներ նկատել են, որ նոյն հանցակազմի նախատեսելն օրենսգրքի երկու տարրեր հոդվածներով ընդունելի չէ:

Հանցակազմերի նշված տարբերակումը հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշներից՝ շարժառիթներից ելնելով՝ նոյնպես բավարար լինել չի կարող, քանի որ վանդալիզմի դեպքում նրանք նշանակություն չունեն արարքի որակման համար:

Մնում է վանդալիզմի հանցակազմը դիտարկել՝ որպես խուլիգանության հանցակազմի մասնավոր դեպք, ինչպես, օրինակ, գույքի ոչնչացման կամ վնասման հանցակազմի համար պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմն է:

Վերոհիշյալ համեմատական վերլուծությունները վկայում են այն նախին, որ իր օբյեկտիվ կողմի բովանդակությամբ՝ խուլիգանությունը բազմադեմ բնույթ ունի և կարող է ընդունել այլ հանցագործությունների (առողջության, սեփականության դեմ ուղղված և այլն) կերպարներ:

Այս պարագայում, ինչպես նկատեցինք, գլխավոր տարբերակի հատկանիշը մնուն է խուլիգանության շարժառիթը, որը մի շարք առանձին դեպքերում նոյնպես բավարար պայման չէ այլ հանցագործություններից նրա տարբերակման համար: Հենց նշված հանցամանքով է պայմանավորված տարբեր ժամանակներում տարբեր իրավագետների (Մ.Պ. Չուբինսկի<sup>4</sup>, Ս.Պ. Մոկ-

<sup>4</sup> Տե՛ս. Չубինսкий Մ.Պ. О хулиганстве // Отчет X общего собрания русской группы Международного Союза криминалистов. 13-16 февраля 1914г. в Петрограде. с.128:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵԼՉԻՆ

րինսկի<sup>5</sup> և այլն) դիրքորոշումը հանցակազմի գոյության աննայտակահարմարության և քրեական օրենսգրքից այն վերացնելու անհրաժեշտության մասին:

Դայտնի լին իրավագետ Ե. Սավիցկին, հաստատելով վերոհիշյալ տեսակետը, նշել է, որ արտաքին դրսուրմանը խուլիգանությունը համընկնում է բազմաթիվ հանցագործությունների հատկանիշների հետ և խուլիգանության դիսպոզիցիան համեմատել է մի պարկի հետ, որտեղ կարելի է լցոնել հիմար վարժագծի դուրուման ցանկացար դեպք:

Ըստ որոշ հեղինակների էլ՝ դատական պրակտիկան երկար տարիներ այս հանցակազմն օգտագործում է որպես «պահետային» հանցակազմ:<sup>6</sup>

Վերոհիշյալ տեսակետները բազմաթիվ այլ հեղինակների կողմից հիմնավոր և ընդունելի չեն հանձնարկել:

Իրավաբանական գրականության մեջ քննարկման առարկա է հանդիսացել և համորիսամուն նաև խուլիգանության դեպքում դիտավորության դաւորման եղանակի հարցը: Հեղինակների մի մասը (Ն. Ի. Վետրով, Յու. Ի. Լյապունով, Վ. Ի. Գլազկին և այլն) գտնում է, որ խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ, մյուսների (Ն. Գ. Իվանով, Ա. Ի. Ռարոգ, Ա. Ն. Իգնատով, Վ. Վ. Շուրին և այլն) կարծիքով՝ այն կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Երկու դեպքում էլ բերվում են հիմնավորումներ՝ առանց հակառակ տեսակետի բացառման: Առաջին տեսակետն է որդեգրել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը<sup>7</sup> և կոնկրետ քրեական գործի շրջանակում փորձել ձևավորել դատական պրակտիկա:

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը, սակայն, գիտական հիմնավորմանը չի ամրագրվել, որը, անշուշտ, կնպաստեր նրա ավելի հասկանալի դաշնալուն իրավակիրառների համար: Ավելին, փորձելով

հիմնավորել խուլիգանությունը միայն ուղղակի դիտավորությամբ կատարվելու իր իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կատարել է խուլիգանության հասկացության յուրօրինակ մեկնաբանում՝ ընդգծելով, որ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է նաև, որ հասարակական կարգի կոպիտ խախտումը կատարվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսուրելու նապատակով (որոշման 20-րդ կետ):

Նպատակի սահմանումը, բնականաբար, հատկանիշ է հանցանքն ուղղակի դիտավորությամբ կատարման մասին, բայց, չէ՝ որ խուլիգանության հասկացությունը սահմանելիս՝ օրենսդիրը որևէ ժամանակ նպատակի մասին որևէ նշում չի կատարել և երբեք չի սահմանել, որ հասարակական կարգի կոպիտ խախտումը կատարվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսուրելու նպատակով: Դակառակը, թե՛ հասարակական կարգի կոպիտ խախտումը, թե՛ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսուրումը միշտ էլ դասվել է հանցակազմի ոչ թե սուբյեկտիվ, այլ օբյեկտիվ կողմի հատկանիշներին:

Մեր կարծիքով, վիճակարույց հարցի միշտ լուծումը պետք է պայմանավորել խուլիգանության հանցակազմի օրենսդրական նկարագրման եղանակի առանձնահատկություններով, իսկ ըստ օրենսդրական նկարագրման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված խուլիգանության հանցակազմը ձևական հանցակազմ է, որքանով որ, ի տարբերություն նյութական հանցակազմների, հետևանքները նկարագրված չեն որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ, իսկ ձևական

<sup>5</sup> Տե՛ս. Մոքրինսկի Ս.Պ. Օզорство и хулиганство // Еженедельник советской юстиции. 1924. N 37. с.879:

<sup>6</sup> Տե՛ս. Դանշինա Ի.Ի. Ответственность за хулиганство по советскому уголовному праву. Харьков, 1971, с.32:

<sup>7</sup> Տե՛ս. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշում, 2012թ. 30-ը մարտի, թիվ ԱՎԴ/0014/01/11:

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

հանցակազմ ունեցող հանցագործությունները, ինչպես և հատված հանցակազմներով հանցագործությունները կամ այն հանցագործությունները, որոնց հանցակազմները նախատեսում են հանցագործության կատարման նպատակը, կատարվում են միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ հճարավոր չէ սեփական կամքով որոշակի գործողությունների կատարումը՝ չցանկանալով այդ, այսինքն հանցավորը գիտակցում է իր գործողությունների բնույթը, որոնք կողին կերպով խախտում են հասարակական կարգը և դրսկորում բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ և ցանկանում դրանց կատարումը:

Բայց արդյո՞ք խուլիգանության բոլոր դեպքերում է այդպես: Օրինակ, ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով կատարված խուլիգանությունը կամ խուլիգանությունը, որը գուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վճառ պատճառելով՝ նյութական հանցակազմեր են, որքանով որ դրանցում վտանգավոր հետևանքները նկարագրված են կամ դրանց առկայությունը ենթադրում է որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ, իսկ նյութական հանցակազմերով հանցագործությունները, ինչպես հայտնի է, կարող են կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Վերջին հաշվով, հճարավոր են դեպքեր, երբ խուլիգանության կատարման ժամանակ անձը չցանկանա այդ հետևանքները, բայց գիտակցաբար թույլ տա դրանք, որը ոչ այլ ինչ է, քան անուղղակի դիտավորության դրսկորում:

Սակայն, ՀՀ վճռաբեկ դատարանը այս տեսանկյունով վերլուծություն չի կատարել և դիրքորոշում չի հայտնել արարքի քրեական որակման համար խիստ կարևոր այն հարցի կապակցությամբ, թե՝ հանցավոր հետևանքը հանդիսանում է խուլիգանության հանցակազմի պարտադիր հատկանիշ, թե՝ այն գտնվում է խուլիգանության հանցակազմի սահմաններից դուրս, ապա արարքի որակման ի՞նչ կանոններ են կիրավում:

Եվ, եթե ծևական հանցակազմից դուրս գտնվող և նյութական հանցակազմի տարր համարվող ուղղակի դիտավորությամբ արտահայտված հետևանքը հանդիսանում է ինքնուրույն հանցագործության հատկանիշ, ապա արդյո՞ք նման դեպքում անուղղակի դիտավորությամբ արտահայտված հետևանքը նույնպես հանդիսանում է ինքնուրույն հանցագործության հատկանիշ, և այդ դեպքում այն ինչ կերպ կարող է ազդել արարքի որակման վրա, այսինքն՝ խուլիգանության դեպքում անուղղակի դիտավորությամբ ուրիշի գույքի ոչնչացման կամ վնասման, կամ անձին թերև կամ միջին ծանրության վճառ պատճառելու դեպքում հանցավորի արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 258 հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով՝ որպես չարամիտ խուլիգանություն, թե՝ ոչ, այսինքն՝ նյութական հանցակազմի դեպքում արարքը չարամիտ խուլիգանություն որակելու համար անհրաժեշտ է հետևանքների նկատմամբ միայն ուղղակի դիտավորություն, թե՝ ոչ, կամ, եթե հետևանքները խուլիգանության հանցակազմի պարտադիր հատկանիշներ չեն, այլ գտնվում են խուլիգանության հանցակազմի սահմաններից դուրս, ապա արարքի որակման ի՞նչ կանոններ են կիրավում:

Մրանք հարցեր են, որոնք ոչ միայն գիտական մեկնաբառնան կարիք ունեն, այլև՝ օրենքի միատեսակ կիրառում ապահովելու պահանջ, առավել ևս մեր օրերում, երբ արարքների որակման կանոնների հստակ սահմանումը հատկապես կարևոր է հասարակության համար լուրջ վտանգ ներկայացնող հասարակական կարգի խախտման նոր և առավել հանդուգն ծևերով դրսկորումների դեմ լիարժեք պայքար կազմակերպելու համար, չմոռանալով, որ, ինչպես ընդունված է ասել՝ խուլիգանությունը «հանցավորության դպրոցն» է, իսկ «քրեստոնատիական ծշմարտության կամայական մեկնաբառությունը ի վերջո կարող է հանգեցնել արսուրդի»:

## ԿԻԲԵՐՆԱՏՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### զարգացման միտումները, դրանց դեմ պայքարը Հայաստանի Հանրապետությունում և միջազգային համագործակցությունը

#### Աղթուր ԳՈՅՉԻՆՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային  
անվտանգության մարմիններում քննվող և  
կիբերհանցագործությունների գործերով վարչության պետ

**Այսօր քրեական հանցագործությունների ընդհանուր ծավալում  
մեծ տեղ է զբաղեցնում համակարգչային համակարգերի և ցանցերի օգտագործմամբ կատարվող հանցագործությունները,  
որոնց աճին և զարգացմանը նպաստում է հանցագործության  
տվյալ տեսակի եռությունը, ինչը պայմանավորված է համացանցի  
բաց և հանրամատչելի բնույթով ու միջավայրական սահմաններ  
չձանաչող վիրտուալ տարածքում գործող իրավախախտների անպատճելիությամբ և նման հանցագործությունների քննության  
հարցերով իրավապահ մարմինների ոչ պատշաճ պատրաստվածության մակարդակով:**

Ցանկացած պետության ազգային ենթակառուցվածքներն արդեն այսօր սերտորեն առնչվում են ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների կիրառման հետ: Բանկային և եներգետիկ հանակարգերի, օդային հաղորդակցության, տրանսպորտային ցանցի կառավարման ամենօրյա գործունեությունը, նույնիսկ շուապ բուժօգնությունը, լիարժեք կախվածության մեջ են ավտոմատացված էլեկտրոնային հաշվողական համակարգերի հոլոսալի և անվտանգ աշխատանքից:

Համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունը՝ կիբերհանցագործությունը՝ միջազգային նշանակության երևույթ է, որի մակարդակն անմիջականորեն կախված է ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների զարգացման և ներդրման մակարդակից, դրանց ընդհանուր օգտագործման և հասանելիության համակարգերից:

**Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը շահադիտական և այլ շարժառիթներով**

համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման պոտենցիալի է պարունակում, ինչը որոշակիորեն կարող է վտանգել պետության ազգային անվտանգությունը:

Կեբերհանցագործի հիմնական նպատակը տարատեսակ գործընթացները կառավորող համակարգչային համակարգն է, այն տեղեկատվությունը, որը շրջանառվում է դրանում:

Ի տարբերություն իրական կյանքում գործող մյուս հանցագործների, կիբերհանցագործը չի կիրառում հանցագործության ավանդական գործիքներ՝ դանակ, ատրճանակ և այլն: Նրա զինանոցը տեղեկատվական գենքն է, բոլոր այն հնարքները, որոնք կիրառվում են համակարգչային ցանց ներթափանցելու, այն «կոտրելու» և ծրագրային ապահովման մոդիֆիկացիայի, չքույլատրված տեղեկություն ստանալու, կամ համակարգչային համակարգերը արգելափակելու համար:

Կիբերհանցագործությունների զինանոցին կարելի է ավելացնել նաև համա-

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

կարգային վիրուսները, տարատեսակ հարձակումները, որոնք հնարավոր են դարձնում չթույլատրված հասանելիությունն ու մուտքը համակարգչային համակարգ:

Ժամանակակից համակարգչային հանցագործների զինանցում առկա են ոչ միայն ավանդական միջոցներ, այլև ամենաժամանակակից սարքավորումներ. այդ հիմնախնդիրն արդեն վաղուց հատել է պետության սահմանը և ստացել միջազգային նշանակություն:

Արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը զուգընթաց, Հայաստանում մշտական ավելանում է վտանգն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր անձանց և կազմակերպությունների համակարգչային համակարգերի համար:

Տարբեր երկրներում և, առաջին հերթին, զարգացած երկրներում կատարված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ կիբերհանցավորությունն անձանց հուզող հարցերի շարքում զբաղեցնում է առավել առաջնային տեղ:

**Կիբերհանցագործության հասկացությունը դեռևս աճընջությամբ ընկալելի չէ բոլոր իրավապահ մարմինների համար, մինչդեռ այն հանցավոր գործողությունները, որոնցում օգտագործվում է գլոբալ համակարգչային ցանցը հասարակական վտանգ է ներկայացնում:**

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործություններն իրենց մեջ ներառում են ինչպես վնասաբեր վիրուսների տարածումը, գաղտնաբառերի կոտրումը, կրետիտ քարտերի համարների և բանկային այլ վավերապայմանների գողությունը (**Փիշինգ**), այնպես էլ համացանցի միջոցով հակաօրինական տեղեկատվության տարածումը (զրաբություն, պոռնոգրաֆիական բնույթի նյութեր, ազգամիջյան, ռասայական և միջկրոնական թշնամանք առաջացնող նյութեր և այլն):

Բացի այդ, համացանցի օգտագործմանը կատարվող առավել վտանգավոր և տարածված հանցագործություններից է խարդախությունը, որն առավել հաճախ դրսերպում է բանկային և ֆինանսական, հեռահաղորդակցության, էլեկտրոնային առևտությունը:

Չուկայի տվյալ հատվածում աշխատող

կազմակերպությունները ապարերաբար բախվում են կիբերխարդախների կողմից ապրանքների կամ ծառայությունների ապօրինի ստացման փորձերի հետ:

Բացի այդ, վիրուսալ հանցագործներից առավել հաճախ տուժում են բանկերի և վճարային համակարգերի հաճախորդները, ինչպասի այս ցանցերի և համացանցի, էլետրոնային և մոբիլ առևտությունների օգտատերերը:

**Ներկայումս քարձը տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունները վտանգ են ներկայացնում ամբողջ հասարակությանը, ուստի դրանց դեմ պայքարել հնարավոր է միայն ուժեղը համախմբելով:**

Վիճակագրական տվյալների համաձայն, հենց խարդախություններն են IT-միջավայրում (համացանցում) առավել տարածված հանցագործությունները և դրանց քանակն ավելանում է տարեցտարի, ընդունում, նման հանցագործություններին առավել բնորոշ է լատենտայնությունը:

Վերջին տարիներին լայն տարածում են ստացել բանկային քարտերի, ցանցային վճարային բանկային քարտերի օգագործմանը, ցանցային վճարային ծառայությունների և հեռակառավարվող բանկային ծառայությունների համակարգերի միջոցով կատարվող հանցագործությունները:

Առավել հաճախ են դարձել սքիմինգային սարքավորման օգտագործմանը կատարված գործողությունները, որոնք բանկային քարտերի տեղեկությունների ապօրինի ստացման և դրանց կրկնօրինակների պատրաստման հնարավորություններ են ստեղծում: Իսկ սքիմերների աշխատանքին կարելի է խոչընդոտել, օրինակ բանկումատների վրա հակասքիմինգային սարքավորումներ տեղադրելու միջոցով:

Միաժամանակ, վարկային կազմակերպություններն, իրենց հերթին, լրջորեն պետք է զբաղվեն բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքներով, քանի որ նրանցից շատերը նույնիսկ չգիտեն նման հանցագործությունների գոյության մասին և հեշտությամբ կարող են դառնալ դրանց գրի:

Բարձր տեխնոլոգիաների զարգացումը մեզ ստիպում է գնալ ժամանակին համաքայլ, ինչպես իրավական, այնպես էլ տեխնիկական առումով, չէ որ յուրաքանչյուր նորամուծություն նոր հնարավորու-

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

թյուններ է ստեղծում նաև քրեական տարրերի համար:

Կիբեռհանցագործությունը հակայական զարգացում է ապրում և, որպեսզի բոլոր կարողանան հաղթահարել այդ հիմնախնդիրը, անհրաժեշտ է ապահովել իրավապահ մարմինների, բանկային կառույցների և IT-ոլորտում աշխատող կազմակերպությունների գործնկերությունը, ինչպես նաև միջազգային փոխհամագործակցության մեջանկմնների ներդրումը:

Norton կազմակերպության՝ 2012թ. սեպտեմբերին ներկայացված՝ օգտատերերի դեմ կատարված կիբեռհանցագործությունների վերաբերյալ տարեկան գեկույցի (**Norton cybercrime report 2012**) համաձայն, կիբեռհանցագործությունների արդյունքում օգտատերերին պատճառվել է շուրջ 110 միլիարդ ԱՄՆ դոլարի վնաս: Ուստատանում այն կազմել է 2 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ կիբեռհանցագործությունների գործ է դարձել ավելի քան 31.4 միլիոն մարդ:

Չնայած այն հանգամանքին, որ օգտատերերի զգալի մասը անհատական տվյալների և տեղեկատվության պահպանման ուղղությամբ ծերնարկում են հիմնարար միջոցներ, նրանցից 40%-ն, այնուամենամիվ, զլանում է կիրառել զգուշավորության տարրական մեթոդներ, նաև սպավորական ստեղծում են սովորական գաղտնաբառեր կամ պարբերաբար դրանք չեն փոխում: Մեկ այլ խնդիր է այն հանգամանքը, որ բոլոր օգտատերերը չեն, որ գիտեն, թե ժամանակի ընթացքում ինչ փոփոխությունների են ենթարկվել կիբեռհանցագործությունների որոշ ծևերը: Օրինակ, օգտատերերի 40%-ը տերյակ չեն, որ վնասաբեր ծրագրերը կարող են գործել նաև աննկատ և դժվար է որոշել համակարգչի ախտահարվածությունը, իսկ կեսից ավելին (55%-ը) վստահ չեն՝ իրենց համակարգիչն արդյոք վարակված են, թե՞ոչ:

Քարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարելով տնտեսության զարգացման առաջնային ճյուղերից մեկը, ակտիվ քաղաքականություն է վարում դրա ընդլայնման ուղղությամբ: Արդյունքում՝ պետական կառավարման, կենսապահովման կարևոր ենթակառուցվածքների, բանկային և այլ բնագավառների օբյեկտներում ավելի լայն կիրառություն են ստա-

նում տարբեր տեսակի տեղեկատվական հեռահաղորդակցական համակարգերը: Պետական մարմինների կողմից կիրարվող որոշ տեղեկատվական համակարգեր ունեն առավել կարևոր պետական և հանրային նշանակություն, որոնց միջոցով հասարակությանը մատուցվում են էլեկտրոնային կառավարման ծառայություններ: Ավտոմատ կառավարման և տեղեկատվական հանակարգերը լայն կիրառում են ստանում նաև այնպիսի կարևոր նշանակություն ունեցող ենթակառուցվածքներում, ինչպիսիք են՝ էներգահետարկությունների, օդային և ցամաքային տրանսպորտի, ինչպես նաև կապի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքները, որոնք կարող են հանդիսանալ հանցավոր բնույթի, այդ թվում՝ ահարեւկության հնարավոր ոտնձգությունների պոտենցիալ թիրախներ և դրանց խափանումը կարող է հանգեցնել մարդկային կյանքի կորստի, բնապահպանական ծգնաժամային վիճակի, ինչպես նաև ՀՀ անվտանգության ներուժի քայլայնան վտանգների:

Քանի որ վիրուտալ տարածքը չունի սահմաններ, համակարգչային հանցագործությունները կարող են սկսվել մեկ երկրում, շարունակվել այլ երկրում և ավարտվել բոլորովին ուրիշ երկրում, դրանք հիմնականում կրում են անդրագային բնույթ, և մի առանձին վերցրած երկիր չի կարող միայնակ պայքարել դրանց դեմ: Ուստի, հաշվի առնելով զարգացած երկրների փորձը, 2001թ. Եվրախորհրդի կողմից նշակվել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիան, որը նման հանցագործությունների դեմ պայքարի միջազգային հիմնական գործիքն է: Այն սահմանում է կիբեռհանցագործությունների տեսակները, կարգավորում միջազգային համագործակցությունն՝ պետություններին պարտավորեցնելով բարձրացնելու դրանց դեմ պայքարի օպերատիվությունը:

**Հայաստանի Հանրապետությունը «Կիբեռհանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիան վավերացրել է 2006թ. մարտի 21-ին, որը ուժի մեջ է մտել 2007թ. փետրվարի 1-ին:**

Կիբեռհանցագործությունների վերաբերյալ Բուդապեշտի կոնվենցիան կիբեռտարածքում կատարվող հանցագործությունները դասակարգում է 4 խմբերի.

**1. Համակարգչային տվյալների և համակարգերի գաղտնիության, ամբողջա-**

## ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

կանության և հասանելիության դեմ ուղղված **առաջին խումբ** հանցագործությունների կազմի մեջ են նտնօւմ՝ առանց թույլտվության մուտք գործելը (հոդված 2-րդ), ապօրինի տիրանալը (հոդված 3-րդ), ներգործությունը համակարգչային տվյալների (հակաօրինական կանխամտածված վճարումը, ջնջումը, որակի վատթարացումը, համակարգչային տվյալների փոփոխումը կամ արգելափակումը) (հոդված 4-րդ) կամ համակարգերի (հոդված 5-րդ) վրա:

Հանցագործությունների տվյալ խճիք մեջ են նտնօւմ նաև հատուկ տեխնիկական սարքերի (հոդված 6-րդ), 2-5-րդ հոդվածներում նախատեսված հանցագործությունների կատարման համար մշակված կամ հարմարեցված համակարգչային ծրագրերի, ինչպես նաև համակարգչային գաղտնաբառերի, մուտքի կոդերի, դրանց անալոգների հակաօրինական օգտագործումը, որոնց միջոցով հնարավոր է ստանալ ամբողջ համակարգչային համակարգի կամ դրա մի մասի հասանելիություն:

6-րդ հոդվածի նորմերը կիրառելի են միայն այնպիսի դեպքերում, երբ հատուկ տեխնիկական սարքերի գործածումն (տարածումը) ուղղված է հակաօրինական արարթների կատարմանը:

**2. Երկրորդ խմբում են** համակարգչային միջոցների օգտագործմանն առնչվող հանցագործությունները, որոնց թվին են դասվում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված կեղծիքն ու խարդախությունը (հոդված 7-8-րդ):

Համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված կեղծիքն իր մեջ ներառում է համակարգչային տվյալների հակաօրինական դուրսերումը, փոփոխումը, ջնջումը կամ արգելափակումը, որոնք հանգեցնում են տվյալների առլուստիկության (հատկություն, որը բնորոշում է սուբյեկտին առ այն, որ այն համարժեք է հայտարարվածին) խափանմանը՝ այդպիսիք իրավաբանական նպատակներով որպես առլուստիկ դիտարկելու կամ օգտագործելու դիտավորությամբ:

**3. Երրորդ խմբում** են մանկական պրոնդրաֆիայի թողարկումը (համակարգչային համակարգի միջոցով տարածելու նպատակով), օգտագործման տրամադրելը և (կամ) դրա առաջարկը, ինչպես նաև համակարգի հիշողության մեջ գտնվող

մանկական պրոնդրաֆիային տիրապետելը (հոդված 9):

**4. Չորրորդ խմբում են** հեղինակային և հարակից իրավունքների խախտման հետ կապված հանցագործությունները:

Համաձայն Կոնվենցիայի, յուրաքանչյուր մասնակից-պետություն պարտավոր է կիրերի հանցագործությունների դեմ պայքարում իրավասու մարմինների համար ստեղծել ստորև բնագավաճ իրավունքների և պարտականությունների տրամադրման համար անհրաժեշտ իրավական պայմաններ, այն է՝ համակարգչային համակարգի, դրա մի մասի կամ կոիչի առգրավման, համակարգչային տվյալների պատճենահանման և բռնագրավման, գործին վերաբերող՝ պահպանվող համակարգչային տվյալների ամբողջականության պահպան, համակարգչային համակարգում գտնվող համակարգչային տվյալների վերացման և արգելափակման հնարավորություն:

**Կոնվենցիան պահանջում է նաև, որպեսզի հանցանցային-պրովայդերների համար ստեղծվեն համապատասխան իրավական պայմաններ, վերջիններին՝ առկա տեխնիկական միջոցներով անհրաժեշտ տեղեկության հավաքում, ֆիքսում և որում իրականացնելը պարտավորեցնելու, ինչպես նաև դրանում իրավապահ մարմիններին օժանդակելու համար: Ընդ որում, առաջարկվում է պրովայդերների հետ նման համագործակցության փաստերի վերաբերյալ պահպանել լիարժեք գաղտնիություն:**

2002թ. սկզբներին ընդունվել է կիրերի հանցագործությունների վերաբերյալ կոնվենցիային կից թիվ 1 հավելվածը, ըստ որի հանցագործությունների թվին են դասվել նաև ռասայական կամ այլ բնույթի՝ բռնի գործողությունների դրդող, ազգային, կրոնական կամ էթնիկական պատկանելության վրա հիմնված առանձին անձի կամ անձանց խմբի նկատմամբ անհանդունականություն կամ խտրականություն առաջացնող տեղեկության տարածումը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կիրերի հանցագործությունները բարձր տեխնոլոգիաների՝ համակարգչային համակարգի օգտագործմամբ, էլեկտրոնային հաղորդակցությունների ոլորտում (էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքով կարգավորվող

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

ոլորտում) կատարվող և այդ համակարգի, այդ թվում՝ տեղեկության փոխանակման անվտանգության դեմ ուղղված հանցագործություններն են:

Ոլորտն, ինչպես նշվեց, անմիջականորեն առնչվում է էլեկտրոնային վճարային համակարգերի և էլեկտրոնային վճարային միջոցներին, որպիսիք են՝ Webmoney, Paypal, Edram և այլ համակարգերը:

Բացի այդ, **կիբեռհանցագործությունները, որպես կանոն, ուղղակի կապի մեջ են հանցավոր ծանապարհով ստացված եկամուտների օրինականացման՝ փողերի լվացման, ահարեկչության, դրա ֆինանսավորման և պետության ու հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցակազմների հետ:**

Միաժամանակ, ինչպես արդեն նշվեց, կիբեռհանցագործությունները, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները, հաճախ լինում են անդրագծային, այսինքն՝ հանցագործները գործում են մի երկրում, իսկ նրանց զոհերը կարող են գտնվել մեկ այլ պետության տարածքում, ուստի նման հանցագործությունների դեմ պայքարում հատուկ նշանակություն ունի միջազգային համագործակցությունը:

ՀՀ քրեական օրենսգրքը չունի կիբեռհանցագործությունների համար հատուկ նախատեսված առանձին գլուխ։ Փոխարենը օրենսգրքի 24-րդ գլուխը նվիրված է համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին։

Մինչեւո, ինչպես նախատեսում է կիբեռհանցագործությունների վերաբերյալ Բուլղապեշտի Կոնվենցիան, այդպիսին են համարվում նաև համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմանը կատարված կեղծիքն ու խարդախությունը, մանկական պոռնոգրաֆիայի թողարկումը (համակարգչային համակարգի միջոցով տարածելու նպատակով), օգտագործման տրամադրելը և (կամ) դրա առաջարկը, համակարգի իիշողության մեջ գտնվող մանկական պոռնոգրաֆիային տիրապետելը, ինչպես նաև հեղինակային և հարակից իրավունքների խախտման հետ կապված հանցագործությունները։

Հայաստանի Հանրապետության գործող քրեական օրենսդրության համաձայն, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները ուղղված են անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները։

Բյուններ են համարվում տեղեկատվական գործնթացների ոլորտում կատարվող և տեղեկատվական անվտանգության դունձգող այնպիսի արարթները, որոնց առարկան տեղեկատվությունն ու համակարգչային միջոցներ են։

Ունձգությունների տվյալ խումբը քրեական օրենսդրության հատուկ մասի ինստիտուտ է, որոնց կատարման համար պատասխանատվություն է նախատեսվում 24-րդ գլխով։

Քննարկվող հանցագործությունների տեսակային օբյեկտ են տեղեկատվության անվտանգության և էլեկտրոնային հաշվողական մեքենաների միջոցով տեղեկատվության մշակման համակարգերի հետ կապված հասարակական հարաբերությունները։

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ են։

1. Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը) ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդված,

2. համակարգչային տեղեկատվությունը փոփոխելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդված,

3. համակարգչային սարոտաժը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդված,

4. համակարգչային տեղեկատվության ապօրինի տիրանալը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդված,

5. համակարգչային տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու (ներթափանցելու) համար հատուկ միջոցներ պատրաստելը կամ իրացնելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդված,

6. վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդված,

7. համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդված։

Ելեկտրոնային-հաշվողական տեխնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հակաօրինական գործողությունների հասարակական վտան-

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

գավլորությունն այս է, որ դրանք կարող են հանգեցնել կառավարման ավտոմատացված համակարգերի և տարատեսակ օբյեկտների վերահսկման գործունեության խափանումների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և դրանց համակարգերի աշխատանքի լուրջ խանգարումների, տեղեկատվության և տեղեկատվական ռեսուրսների ոչնչացման, մոդիֆիկացիայի, խեղաթյուրման, արտատպմանն ուղղված չքուլատորված գործողությունների, տեղեկատվական համակարգեր ապօրինի միջամտելու այնպիսի եղանակների, որոնք կարող են առաջացնել ոչ միայն գույքային վնաս, այլ նաև մարդկանց ֆիզիկական վնաս հասցնելու հետ կապված ծանր և անդառնալի հետևանքներ:

Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ հոդված), ինչպես նաև վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը (ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդված) կարող են կատարվել միայն գործողությունների արդյունքում, այն դեպքում, եթե համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 257-րդ հոդված) ինչպես գործողության, այնպես էլ անգործության արդյունքում:

**Համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը նյութական հանցագործություն է, իսկ վնասաբեր ծրագրեր մշակելը, օգտագործելը և տարածելը՝ ձևական:**

Որպես հետևանք, ՀՀ քրեական օրենսգրքի 251-րդ և 256-րդ հոդվածներով նախատեսված են գույքային զգալի վնասն ու տեղեկատվության ոչնչացումը, ուղեփակումը, վերափոխումը կամ պատճենահանումը:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում և նախատեսում է ըստ էռթյան կիբերհանցագործության հատկանիշներ պարունակող նաև այնպիսի հանցավոր արարքներ, որոնք ընդգրկված չեն օրենսգրքի համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններին նվիրված 24-րդ գլխում, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գլխում ընդգրկված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմա-

նում համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների համար, իսկ հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների գլխում ընդգրկված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է սահմանում պողոնկագրական բնույթի համակարգչային ծրագրերի, կինոյի կամ տեսաֆիլմերի նյութերի, պատկերների կամ պողոնկագրական բնույթի այլ առարկաների ստեղծմանն անշահիասներին մասնակից դարձնելու, ինչպես նաև համակարգչային համակարգի միջոցով մանկական պողոնկագրաֆիայի ներկայացման կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պողոնկագրաֆիայի պահպանման համար:

**Հարկ է նշել, որ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունը, Բուդապեշտի Կոնվենցիան վավերացրել է դեռևս 2006թ. և 2008թ. ստեղծել 24/7 ազգային կոնտակտային կետը, մեր քրեական օրենսդրությունը լիովին չի համապատասխանում Բուդապեշտի կոնվենցիայից բխող պահանջներին:**

Սասնավորապես՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն սահմանել համակարգչային համակարգ անօրինական հասանելիություն ստանալու համար, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանվում այնպիսի անօրինական հասանելիության համար, որը վնաս է առաջացրել անզգուշությամբ:

Նման ձևակերպումը չի բխում Կոնվենցիայի պահանջներից, քանի որ անօրինական հասանելիությունն անկախ վնասի պատճառման հանգամանքից, արդեն իսկ պետք է դիտվի քրեորեն պատժելի արարք, իսկ ներկայիս ձևակերպումը կարող է դիտվել որպես հանցակազմի առանձին տեսակ:

ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում վնասաբեր ծրագրերով կրիչներ տարածելու համար, մինչդեռ ժամանակակից թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս վնասաբեր ծրագրեր տարածել նաև հանցագործության մթնոլորտ:

## ՀԱՆՁՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

ՀՀ քրեական օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում նանկական պոռոգրաֆիայի ներկայացման կամ պահպանման համար, այնինչ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում և պատասխանատվություն է նախատեսում նաև հանձկարգչային համակարգով նման նյութերի ձեռքբերման համար:

**Բացի այդ, նպատակահարմար է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել նաև «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում, որպեսզի սոցիալական ցանցերն ու բլոգերը նույնականացնեն որպես զանգվածային լրատվության միջոցներ, որի արդյունքում հնարավոր կլինի ՉԼՍ-ներում տեղադրված համապատասխան նյութերը դիտարկել որպես տարածում ստացած:**

Նման փոփոխությամբ հնարավոր կլինի լուծել նաև Կոնվենցիայի քսենոֆորիայի համար պատասխանատվություն նախատեսող հավելվածով սահմանվող նյութերի տարածման արդյունքում առաջացող հիմնախնդիրների հարցը:

Բացի այդ, Կոնվենցիայի առանձին հոդվածներ կարգավորում են տեղեկատվության նախապահպանության ներպետական և միջազգային հարցումների կատարման կարգը: Ներկայումս ՀՀ-ում ննանատիպ հարցում հնարավոր չէ կատարել, քանի որ, համացանցային ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից տեղեկության պահպանման ժամկետների, ծևաչափերի համապարտադիր լինելու մասին դեռևս օրենսդրական կարգավորում չկա:

Կոնվենցիայի 16-րդ (Կուտակվող համակարգչային տվյալների պահպանման օպերատիկ ապահովումը) հոդվածը հնարավորություն է տալիս իրավապահ մարմնին հարցման հիմնան վրա ԻԾՍ և այլ իրավաբանական ու ցանկացած ֆիզիկական անձի հանձնարարել նախապահպանել համակարգչային ցանկացած տեղեկություն, ներառյալ այն տեղեկությունը, որն արդեն իսկ առկա է ԻԾՍ-ի մոտ, այդ թվում հոսքի (traffic data), պարունակության (content data) վերաբերյալ, ինչպես նաև ցանկացած տեղեկություն՝ հարցումը ստանալու պահից սկսած:

Հանձնարարություն տալուց հետո իրավապահ մարմինը նախապահպան-

ված տեղեկությունը նախապահպանողի կարող է ստանալ օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը Եվրախորհրդի «Կիբերհանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերում, «Օպերատիկ-հետախուզական գործունեության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ հիմնախնդիրի ուսումնասիրության, անհրաժեշտ առաջարկությունների ներկայացման և օրենսդրական բարեփոխումների փաթեթի նախագծի կազմնան նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի 24.08.2012թ. հրամանով ստեղծվել է միջզերատեսչական աշխատանքային խունք՝ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԿԱ ոստիկանության և ազգային անվտանգության համապատասխան ստորաբաժնումների ներկայացուցիչների կազմով:

Հայաստանի Հանրապետությունում կիբերհանցագործությունների, այդ թվում՝ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների պայքարով զբաղվում են ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության՝ 3-րդ վարչության 1-ին՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի բաժնի և ՀՀ ԿԱ ԱԱԾ հակահետախուզության գլխավոր վարչության 4-րդ բաժնի մասնագիտացած ստորաբաժնումները, որոնք ել իրականացնում են օպերատիկ-հետախուզական միջոցառումներ և հայտնաբերված փաստերով նախապատրաստում նյութեր:

Արդի ժամանակաշրջանում բարձր տեխնոլոգիաների կիրառմանը պայմանավորված նոր հանցատեսակների դեմ պայքարի միջազգային փորձը և միջազգային մասնագիտացված կառույցների համապատասխան պահանջները հաշվի առնելով, ՀՀ քրեական օրենսգրքի 181, 251-257-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների գործերով նյութերի նախապատրաստման և քրեական գոր-

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ժերի նկատմամբ դատավարական ղեկավարման ու դատախազական հսկողության լիազորությունը դրվել է ՀՀ գլխավոր դատախազի 06.04.2012 թ. N 15 հրամանով վերանվանված՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության նարմններում քննվող և կիրերահանցագործությունների գործերով վարչության վրա:

Նշված ժամանակահատվածից սկսած վարչությունը, ԱԱԾ քննչական վարչությունում քննված քրեական գործերի և նախապատրաստվող նյութերի մասով պայմանավորված լիազորություններից զատ, միասնական, կենտրոնացված կարգով իրականացնում է նաև բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված վերոհիշյալ հանցագործությունների գործերով հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարումն ու դատախազական հսկողությունը:

Դաշվի առնելով հանակարգային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նյութերի նախապատրաստման, քրեական գործերի քննության առանձնահատկությունները, տվյալ հանցատեսակի դեմ պայքարի արդիականությունը ու զարգացման միտումները, դրանցով պայմանավորված՝ նոր մարտահրավերներին պատշաճ կերպով դիմակայելու անհրաժեշտությունը, որոնք պահանջում են նաև հատուկ մասնագիտական գիտելիքներ և պարբերական վերապատրաստություն, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության կազմում գործող համապատասխան վարչության դատախազների հետ անմիջապես աշխատելու, դատախազական հսկողությունն ու տվյալ հանցատեսակի բացահայտելիությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալի առաջարկով, ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության կազմում առանձնացվել են 2 փորձառու քննիչներ, որոնք պետք է մասնագիտանան բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ պայմանավորված հանցատեսակների գործերով քննության մեջ:

Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանության ԿՀՊ ԳՎ-ում գործում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի հարցե-

րով մասնագիտացած 3-րդ վարչության 1-ին բաժինը, որտեղ և հիմնականում նախապատրաստվում են հանցագործության դեպքերով նյութերը, ուստի ոստիկանապատին հասցեագրված համապատասխան գրությամբ հանձնարարվել է բաժնի՝ դատախազական հսկողության մասով աշխատանքները համակարգել ՀՀ գլխավոր դատախազության վարչության հետ:

Քննիչների մասնագիտացմամբ, քննության կենտրոնացմամբ, ինչպես նաև տվյալ հանցատեսակի քննության առանձնահատկություններով պայմանավորված, ոլորտում համապատասխան լիազորությունների ստանձնումից հետո ընկած ժամանակահատվածում վարչություն նույնագրված հիշյալ կատեգորիայի բոլոր նյութերն ու քրեական գործերը կենտրոնացվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում:

**Սահմանադրությամբ կարևորությունը առանձնահատկությունը պայմանավորված է նաև նրանով, որ տվյալ հանցատեսակի պարագայում գործ ենք ու ենում, այսպես կոչված, թվային-էլեկտրոնային ապացույցների հետ: Նման պայմաններում անհրաժեշտ են դրանց հայտնաբերման, ֆիքսման, զննման, առգրավման, պահպանման և փորձաքննությունների անցկացման միանգամայն նոր նոտեցումներ, իմացություններ և հմտություններ:**

**Սահմանադրությամբ՝ ոչ երկրի տարածքում տեղակայված, սակայն կիրեր տարածության առումով հասանելի սերվերներից անհրաժեշտ տեղեկության առգրավումը, որը չի հակասում ոլորտը կարգավորող՝ «Բուղապեշտի կոնվենցիային»:**

Դայաստանի Յանրապետությունում, մինչ օրս քննված քրեական գործերի շարքում, առավել հաճախ հանդիպել են համակարգային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակություններ, այդ բվում՝ խարդախություններ ու շղթումներ: Վերջիններիս համար պարարտ հող են բնակչության շրջանում լայն տարածում գտած սոցիալական ցանցերը, մասնավորապես՝ «odnoklassniki.ru»-ն, «vkontakte.ru»-ն, «mamba.ru»-ն, «facebook.com»-ը և այլն: Ընդ որում, զոհերից, որպես կանոն, գրւած են շղթում վերջիններիս մասնակցությամբ պոռնկագրական

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

բնույթի լուսանկարները կամ արատավլող այլ տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով։ Գրանցվել նաև այս կամ այն ծառայությունների մատուցման կամ ապրանքների մատակարարման պատրակով օգտատերերի վստահությունը չարաշակելու եղանակով խարդախությամբ գումարներ հափշտակելու դեպքեր, որոնց կատարողները գործել են Չինաստանի ժողովրդական Չանրապետության տարածքից։ Մասնավորապես՝ հաճախորդներին վճարման են ներկայացվել ապրանքների իրական մատակարարի հետ որևէ առնչություն չունեցող բանկային հաշվեհանարներ։

Որպես ՀՀ իրավապահների կողմից քննված և դատական ակտով պարտված կիրերի հանցագործությունների վերաբերյալ ուշագրավ քրեական գործերի օրինակներ ներկայացն ենք հետևյալ գործեր։

**1. Ներերլանդների Թագավորության իրավապահների կողմից՝ կազմակերպված հանցագործությունների վերաբերյալ ուշագրավ քրեական գործերի օրինակներ:**

2010թ. հոկտեմբերի 27-ին Ներերլանդների Թագավորության իրավապահ մարմիններից ստացվել է իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն՝ խնդրանքով՝ ծերակալել Գ. Ա.-ին և նրա նկատմամբ հարուցել քրեական հետապնդում, միաժամանակ տեղեկացնելով, որ վերջինս ազատության մեջ մնալու դեպքում կվտանգվեն Ներերլանդների Թագավորության իրավապահ մարմինների կողմից գործի բացահայտման ուղղությամբ կատարվող գործողությունները։

Միջնորդությանը կից ներկայացվել են փաստաթղթեր, համաձայն որոնց Գ. Ա.-ն, հանդիսանալով «Bredolab» բրոտնետի համակարգող, բրոտնետի կառավարման համար օգտագործել է «Lease Web» հոլանդական հոսքինզ պրովայդերին պատկանող 143 սերվեր։ Զայնագրված սերվերի տվյալների հենքի վերլուծությունը ցույց է տվել, որ 2009թ. հունիսից հայտնաբերված «բրոտնետ» ենթակառուցվածքը հնարավոր է պատասխանատու է ամբողջ աշխարհում համակարգչային համակարգե-

րի վնասակար ծրագրային միջոցներով 29 միլիոն վարակների և շուրջ 26 միլիոն վարակնան փորձի համար։ Գ. Ա.-ն համացանցում ստեղծել է խանութ, «քոտնետո»-ի գնորդների հետ շփելու և գնային պայմանավորվածություններ ձեռք բերելու համար օգտագործել է չարի ֆորումները։

Յայատանի Չանրապետության ոստիկանության քրեական հետախուզության վարչության միջոցով պարզվել է, որ Գ. Ա.-ն բազմից այցելել է Յայատան։

2010թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազությունը դիմել է դատարան՝ Գեորգի Ավանեսովի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշումը Հանձնման մասին 13.12.1956թ. Եվրոպական կոնվենցիայի 1-ին, 16-րդ հոդվածներով, ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, և 7-րդ կետերով վերահստատելու և նրա նկատմամբ 40 օրով էսատրադիցին կալանք կիրառելու միջնորդությամբ, որը բավարարվել է, և նա տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուրաբաշեն» քաղ։

Այսուհետև Գ. Ա.-ն իր մոտ իրավիրելով դատախազին, բացատրություն է տվել այն մասին, որ 2009թ. հունիսին գտնվելով ՀՀ տարածքում, շահադիտական նկատառումներով մշակել և համացանցում իրացրել է համացանցից օգտվողների համակարգիչները վիրուսով վարակելու ծրագրային հատուկ համակարգ, որի ներդրման արդյունքում զոհերի համակարգիչները վարակվում են գաղտնի ծրագրերով՝ բռոտվ և ստեղծվում է վարակված համակարգչային ցանց՝ բոտնետ։ Ծրագրային համակարգի կիրառման հետևանքով հնարավորություն է ընծեռնվել վարակված համակարգիչներից, այդ բվում բանկային հաշվեների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և դրանք դեկավարելու։

Գ. Ա.-ի վերոհիշյալ բացատրության հիման վրա, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող գործերով վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ Գ. Ա.-ի կողմից համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելու (ներթափանցելու), համակարգչային տեղեկատվության ապօրինի տիրանալու, համակարգչային տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու (ներթափանցելու) համար հատուկ միջոցներ պատրաստելու և իրացնելու, ինչպես նաև

## ՀԱՆԱՍԱԲԵՐԻ ԾՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Վնասաբեր ծրագրեր մշակելու, օգտագործելու և տարածելու դեպքի առթիվ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությանը:

Խուզարկությամբ Գ. Ա.-ի բնակության վայրում առգրավվել է համակարգչային տեխնիկա, կալամք է դրվել նրան պատկանող գույքի վրա, հարցումներ են ուղարկվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, այլ պետական մարմիններ, առգրավվել են բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

Նախաքննությամբ պարզվել է, որ «DDos» հարձակումների պատվիրատուններից, ինչպես նաև վնասաբեր ծրագրերի և սպամի տարածման արդյունքում, Գ. Ա.-ի տրամադրության տակ գտնված «WebMoney» վճարային համակարգի էլեկտրոնային դրամապանակին, միայն 2010թ. ընթացքում մուտքագրվել է 700.000 ԱՄՆ դոլար, որը նա փոխանցել է օվշորային գոտիներում գտնվող տարբեր հաշվեհամարներին, ձեռք է բերել առանձնատուն Բալի կղզում, որով էլ օրինականացրել (լվացել) է հանցավոր ճանապահով ստացված միջոցները:

Գ. Ա.-ի կողմից վերոհիշյալ կիբերհանցագործությունները կատարելու վերաբերյալ քրեական գործով վերջինս դատապարտվել է 4 տարի ժամանակով ազատազրկման, իսկ փողերի լվացման մասով նախաքննությունը՝ պայմանավորված իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ արտասահմանյան մի շարք երկրներ ուղարկված և չստացված միջնորդություններով՝ դեռևս շարունակվում է:

2. Գվինեայի Հանրապետության քաղաքացի Ա. Ք.-ն «Hacker's Lodge» համացանցային ֆորումի միջոցով ծանոթացել է քննությամբ դեռևս չպարզված Ռոդրիգո անունով անձնավորության հետ և իմացել, որ վերջինս հնարավորություն ունի համացանցի միջոցով ապօրինի ներթափանցելու այլ անձանց պատկանող բանկային հաշվեհամարներ և տնօրինելու դրանց հաշվեշիրին եղած գումարները, այդ թվում նաև հանցանցի միջոցով դրանք փոխանցելու պիտառներ գնելու նպատակով տարբեր պիտառներությունների հաշվեհամարներին: Դրա շուրջ վերջինս հետ եկել է հանցավոր համաձայնության, ըստ որի՝ պատրաստակամություն է հայտնել շուկայականից էժան գներով

ավիատորներ գնել ցանկացող անձանցից ստանալ կանխիկ գումարներ, իսկ Ռոդրիգոն պարտավորվել է տրամադրել էլեկտրոնային պիտառներ, համացանցի միջոցով ավիացիոն գնացությանը վճարելով դրանց համար այլ անձանց բանկային հաշվեհամարներից, և դրանով իսկ, Հայաստանի քաղաքացիներին տրամադրած պիտառների դիմաց վճարումը կատարելով թենիսիում, Տանգանիայում և ԱՄՆ-ում գրանցված պրովայդերների IP-հասցեներից խարեւության եղանակով կատարված մի շարք գործարքների կապակցությամբ, քարտապանների կողմից ներկայացվել են հետզանձումային պահանջներ, որի հետևանքով «Սիրիո» ավիացիոն գնացությանը պատճառվել է 2.469.989 դրամի վճառ:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավճռով Ա. Ք.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով և 190-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 6 տարի ժամկետով, որը պայամնականորեն չի կիրառվել:

### Այսօր որևէ պետություն առանձին վերցրած ի գորու չէ վերոհիշյալ չարիքին դիմակայելու ինքնուրույն:

Հրատապ է միջազգային համագործակցության ակտիվացման խնդիրը, մասնավորապես՝ կարգավորման միջազգային-իրավական արագվել գործուն մեխանիզմների ներդրումը, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժամանակակից պայմաններում կիրերի հանցագործությունների դեմ պայքարի միջոցների ինչպես զգալի մասը, այնպես էլ միջազգային բնույթի մյուս հանցագործությունները ենթակա են առանձին վերցրած պետությունների ներքին իրավասությանը, անհրաժեշտ է զուգահեռաբար զարգացնել նաև համակարգչային հանցագործությունների դեմ պայքարին ուղղված ազգային օրենսդրությունը՝ այն համապատասխանեցնելով իրավունքի միջազգային նորմերին՝ հորև կատարելով գոյություն ունեցող դրական փորձի վրա:

**Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների բացակայությունը կարող է դիտարկվել որպես պետության ազգային անվ-**

## ՀԱՅԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

### տանգության կարևորագույն սպառնալիքներից մեկը:

Նման պայմաններում Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, չի կարող ձեռնախան մնալ համակարգչային հանցավորությանը, մասնավորապես՝ դրա անդրագգային դրսորություններին հակազդելու հիմնախնդրից:

Առաջացել է կիբերհանցագործների նոր սերունդ, որոնք գիտակ են և գինված հզոր սարքավորություններով, շատ վտանգավոր են և ունակ են պատճառելու լուրջ վճասներ: Առավել խոցելի է դարձել միջուկային էներգիային առնչվող արդյունաբերությունը, այն ընդհանրապես «ախորժալի պատառ» է դիվերսանտների, ահաբեկիչների համար և հատուկ պահպանության կարիք ունի:

«New York Times» օրաթերթում վերջերս հրապարակված տեղեկատվության համաձայն, դեռևս 2010թ. **Բարաք Օբամայի** հրամանով իրանական միջուկային օրյեկտների համակարգ է ներդրվել Խրայելի գաղտնի ծառայության կողմից մշակված «Stauxnet» անվանումով վիրուսը և իրանական համակարգիչների վարակումն իրականացվել է աներիկյան և խրայելական հատուկ ծառայությունների համատեղ միջոցառման շնորհիվ, որը ոչ այլ ինչ է, քան կիբերպատերազմ:

Վիրուսը հանգեցրել է ուրանի հարստացման աշխատանքում ներգրավված ցենտրիֆուգերի ֆիզիկական ոչնչացմանը, որով իսկ կասեցվել է միջուկային ծրագրի գարգացումը:

Որոշակի տեղեկություններ են հրապարակվել նաև, այսպես կոչված, «Flame» անվանմամբ վիրուսի մասին, որի միջոցով ապահովվել է համակարգիչներից տեղեկության կորզումն ամբողջ աշխարհով, սակայն առավել շատ վարակի դեպքեր են արձանագրվել իրանում:

Հատկանշական է, որ 2012թ. հունիսի սկզբին ռուսական «Կասապերսկու լաբորատորիան» հայտարարել է, որ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ «Stauxnet» և «Flame» համակարգչային վիրուսներն ունեն միասնական ծագումնաբանություն:

**Կիբերհանցագորության դեմ պայքարին նվիրված միջազգային ֆորումներում տեսակետներ են հնչում, մաս-**

նավորապես, Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչների կողմից, այն մասին, որ Բուդապեշտի Կոնվենցիայի որոշ դրույթներ ենթակա են փոփոխության:

Կոնվենցիայի առավել խոցելի դրույթ է 32-րդ հոդվածը, որը սահմանում է համաձայնության առկայության դեպքում, կամ եթե դա հրապարակավ մատչելի է պահպանվող համակարգչային տվյալների անդրսահմանային հասանելիության հնարավորություն: Նրանք պատճառաբանում են, որ ԱՄՆ-ը այլ երկրների վրա համացանցի միջոցով ազդելու նոր տեխնոլոգիաներ է մշակում: Ցանկանում են վերահսկել այլ երկրների քաղաքացիների տեղաշրջը, նրանց նամակագրությունը, տվյալների բազաները և այլն, ինչպես նաև օրինականացնել առանց ազգային մարմիններին տեղյակ պահելու անդրսահմանային էլեկտրոնային խուզարկությունների իրականացումը:

Սասանավորապես, Կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝

Կողմն առանց մյուս կողմի թույլտվության կարող է՝

ա) մուտք գործել հրապարակավ մատչելի (բաց աղբյուր), պահպանվող համակարգչային տվյալների մեջ՝ առանց հաշվի առնելու տվյալների՝ աշխարհագրական տեսանկյունից գտնվելու վայրը, կամ

բ) իր տարածքում գտնվող համակարգչային համակարգի միջոցով հասանելություն ունենալ այլ երկրի տարածքում գտնվող և պահպանվող համակարգչային տվյալներ մուտք գործելու համար, ստանալ դրանք, եթե կողմն ստացել է համակարգչային համակարգի միջոցով մյուս կողմին տվյալներ հայտնելու օրինական լիազորություն ունեցող անձի օրինական և կամավոր համաձայնությունը:

Կոնվենցիան, ըստ եռթյան, պատասխանատվություն չի սահմանում հարերական ակտ՝ կիբերհարձակում կատարած անձի համար, ուստի չի կարող պաշտպանել նաև վերոհիշյալ հայտնի վիրուսից:

Որպես հիմնախնդրի լուծում, բանախումներն առաջարկում են կիբերհանցագործությունների ստանդարտացումը գլոբալ իմաստով, որը պետք է իրականացվի ՄԱԿ-ի հովանու ներքո:

# ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՆԱԽԱԲԵՆԱԿԱՆ ԺՈՒՅԵՄՈՒՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԺՈՒՅԵՄՈՒՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԳԵՂՈՆԱՅՈՒՄԸ

Արթուր ՂԱՍԹԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության բաժնի պետ,  
Իրավաբանական գիտությունների դոկտոր

Գևորգ ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի խորհրդական,  
Իրավաբանական գիտությունների թեկնածու

**Ապացույցների անմիջական հետազոտումը դատարննության ընթանուր պայմաններից է, որը դատարանին հնարավորություն է տալիս անմիջականորեն ընկալել ապացույցների բովանդակությունը և դրա հիման վրա ձևավորել ներքին համոզմունք: <<Վճռաբեկ դատարանի 12.02.2010թ.-ի որոշման 19-րդ կետում սահմանված է, որ ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փոփ շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տվյալ գնահատականներով: Եամսապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելվը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխալայ մոտեցում ցուցաբերելը (մյուս ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեատափարական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:**

Հաշվի առնելով, որ նախաքննության մարմինները հանդիսանում են քրեական հետազոտման սուբյեկտներ, ուստի նրանց կողմից ձեռք բերված ապացույցներին, ինչպես նաև պաշտպանության կողմից ներկայացրած նյութերին պետք է մոտենալ քննադատաբար: Իրավաբանական ռեալիզմի տեսանկյունից պետք է ընդունել, որ քրեական հետազոտման մարմինների գործառույթները չեն կարող չափել նրանց կողմից ընկալվող ապացուցողական տեղեկատվության բնույթի և քննչական գործո-

ղությունների արձանագրություններում դրանց ամբողջական արտացոլման վրա: **Ի. Միխայիլովսկայան** նույնպես նշում է, որ քննչական գործությունների արձանագրությունների բովանդակության մեջ արտացոլված տեղեկատվություններ շատ դեպքերում քննիչի կողմից ընկալվում է ոչ ամբողջական և ոչ համարժեք, այդ իսկ պատճառով կարևորվում է դատարանի կողմից այդ տեղեկատվության անմիջականորեն ընկալումը սկզբնաղբյուրից<sup>1</sup>: Դատարանի կողմից ապացույցների անմիջա-

<sup>1</sup> Михайловская И.Б. Настольная книга судьи по доказыванию в уголовном процессе. М.: Проспект, 2006, С. 126.

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կամ հետազոտումը կոչված է չեզոքացնելու քննության մարմինների գործունեության նշակողմանիությունը:

Դատարանում նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների անմիջական հետազոտման ընդհանուր պայմանից բացառություն է, որի թույլատրելիության վերաբերյալ տեսության մեջ արտահայտվել են իրարամերժ կարծիքներ: Այսպես, **Դ. Կելիկին** նշում է, որ քննչական գործողությունների արձանագրությունները որպես ապացույց ճանաչելու օրենսդրի մոտեցումը զրոյի է հավասարեցնում քրեական արդարադատության բարեփոխման այն միտումը, ըստ որի պետք էր հրաժարվել նախաքննության ընթացքում մեղադրյալի՝ պաշտպանության իրավունքի խախտմամբ ծեռք բերված ցուցնունքների հրապարակումից<sup>2</sup>: **Վ. Լազերևսան և Դ. Պոպովի վանական միավոր** նշում են, որ դատական նիստում վկայի նախաքննական ցուցնունքների լայն օգտագործումը խախտում է ոչ միայն անմիջականության սկզբունքը, այլև պաշտպանության իրավունքը<sup>3</sup>: Նշենք, որ քրեական դատավարության գիտության դասականները նույնապես դեմ էին ամբաստանայի ցուցնունքների հրապարակմանը, նշելով, որ քրեական դատավարության մրցակցային համակարգի պահպանման դեպքում մեղադրյալի ցուցնունքները չպետք է հրապարակվեն և դրվեն ակտի հիմքում<sup>4</sup>: Ի դեպք, 13.04.2012թ.-ին ընդունված Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքում նախատեսված չէ դատարանում նախաքննական ցուցնունքները հրապարակելու ինստիտուտ: Այսպես, Ուկրաինայի քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածում ամրագրվել է դատարանում ցուցնունքներն անմիջականորեն հետազոտելու սկզբունքը, իսկ 95-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանվել է, որ դատարանը կարող է հիմնավորել իր եզրակացությունները միայն այն ցուցնունքներով, որոնք անմիջականորեն ընկալել են դա-

տական նիստում կամ ծեռք են բերվել 225-րդ հոդվածով սահմանված կարգով: Նույն օրենսգրքի 225-րդ հոդվածը նախատեսում է նախաքննության ընթացքում տուժողին և վկային քննիչ դատավորի մոտ հարցաքննելու ինստիտուտը: Այլ կերպ ասած, դատարանում կարող են հրապարակվել բացառապես նախաքննության ընթացքունքնից դատավորի մոտ դեպոնացված վկայի և տուժողի ցուցմունքները:

Կարծում ենք, որ ՀՀ գործող քրեական դատավարության մողելի պայմաններում, որտեղ առկա է ձևականացված նախաքննություն, որոշակի դատավարական երաշխիքների հիման վրա ապացուցման գործնթաց, չեն կարող առհասարակ անտեսվել նախաքննության ընթացքում ծեռքբերված ապացույցները: Օրինակ՝ դատարանում նախաքննական ցուցնունքների հրապարակումն ապացույցների անմիջական հետազոտման պայմանից բացառություն է, որն առնչվում է մրցակցության և պաշտպանության իրավունքի սահմանափակմանը: Այս իմաստով նախաքննական ցուցնունքների հրապարակման դատավարական ձևը պետք է ընդգրկի բավարար երաշխիքներ՝ կանխելու մղցակցության և մեղադրյալի պաշտպանության իրավունքի չարդարացված և ոչ իրավաչափ սահմանափակումը:

Սույն հոդվածում առանձին կմերկայցվի՝ նախաքննական ցուցնունքների հրապարակման թույլատրելիության սահմանադրահրավական և կինվենցիոնալ սահմանները, նախաքննական ցուցնունքների հրապարակման իրավական կարգավորումն առանձին երկրների օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետությունում նախաքննական ցուցնունքների հրապարակման իրավական կարգավորումը, դրանց գործնական ինդիքները և նախաքննական ցուցնունքների դատական դեպոնացման հարցերը:

### 1. Նախաքննական ցուցնունքների

<sup>2</sup> Великий Д.П. Новые виды доказательств в УПК РФ. Материалы Международной научно-практической конференции, посвященной принятию нового Уголовно-процессуального кодекса РФ. Отв. Ред. П.А. Лупинская, Г.В. Дашков. М.: МГОА, 2002, С. 99-101.

<sup>3</sup> Лазерева В.А., Попов Д.В. Проблемы использования свидетельских показаний в уголовном процессе. М.: Изд. Юрлитинформ. 2009, 25.

<sup>4</sup> Устав уголовного судопроизводства. Систематизированный комментарий (ст. 595 - 764) / Под ред. проф. М.Н. Гернета. Выпуск 4. М., 1916. С. 1025 - 1026. մեջբերումն ըստ՝ Александрович А. Оглашение показаний подсудимого. <http://www.lawmix.ru/comm/3523>

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### Իրապարկման թույլատրելիության՝ սահմանադրափական և կոնվենցիոնալ սահմանները:

Նախաքննական ցուցմունքների իրապարկման թույլատրելիության հիմնախնդիրն ուղղակիորեն կապված է Եվրոպական կոնվենցիայով ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդար դատաքննության իրավունքի հետ: ՀՀ սահմանադրական դատարանը չի քննարկել դատաքննության ժամանակ նախաքննական ցուցմունքների իրապարակման սահմանադրականությունը, սակայն ՈԴ սահմանադրական դատարանը բազմից անդրադարձել է այս խնդրին: Այսպես, ՈԴ սահմանադրական դատարանը 21.12.2000թ.-ի որոշմամբ նշել է, որ դատարանի կողմից օրենքով նախատեսված հիմքերով նախաքննական ցուցմունքների և նյութերի իրապարակման դեպքում մեղադրյալին մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքի համաձայն, պետք է հնարավորություն տրվի օրենքով սահմանված բոլոր միջոցներով պաշտպանել իր շահերը, այդ թվում՝ վիճարկել իրապարակված ցուցմունքները և նյութերը, միջնորդություն ներկայացնել՝ ստուգելու դրանք այլ ապացույցներով: Հրապարակված նյութերի գնահատման ժամանակ առկա կասկածները պետք է մեկնաբանել հօգուտ ամբաստանյալի: ՈԴ սահմանադրական դատարանը 24.09.2012թ.-ի որոշմամբ նշել է, որ նախաքննական ցուցմունքների իրապարակումը դիտվում է որպես բացառություն և թույլատրություն է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Դա պայմանավորված է ինչպես մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև ապացույցների հետազոտման դատավարական հնարավորությունների միջև անհավասարության վերացնան անհրաժեշտությամբ, այնպես էլ դատարանի համար ցուցմունքները կողմնակի այլ ազդեցություններից ազատ ընկալելու և գնահատելու համար պայմաններ ստեղծելու օգտնամբ: Դրա հետ մեկտեղ անթույլատրելի է ցուցմունքների իրապարակման հիմքերի տարածական մեկնաբանությունը: Նախաքննական ցուցմունքների իրապարակման թույլատրելիության հարցերին ՈԴ սահմանադրական դատարանը անդրադարձել է նաև 24.02.2011թ.-ի և 22.03.2011թ.-ի ակտերով:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդ-

վածի 3-րդ կետի «Ճ» ենթակետի՝ հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ մեղադրանքի կողմից վկաներին հարցաքննելու իրավունքի մեկնաբանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ընդհանուրացումը թույլ է տալիս ծևակերպել այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն դատարանները՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «Ճ» ենթակետի խախտումից խուսափելու համար:

**1. Վկան (տուժողը) պետք է պաշտոնապես կանչվի դատարան, ընդ որում՝ դատարանը պետք է արդյունավետ միջոցներ ծերնարկի վկայի (տուժողի) ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ (տես՝ «Վոժիգովն ընդդեմ Ռուսաստանի» գործով վճու 23-25 և 53-54-րդ կետերը, Պոլուֆակինը և Զերնիշևն ընդդեմ ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 191-192, 195-198 կետերը, Վլադիմիր Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 16, 17, 19-րդ կետերը):**

**2. Կարևոր նշանակություն ունի չներկայացած վկայի (տուժողի) ցուցմունքները իրապարակելու վերաբերյալ պաշտպանության կողմի դիրքորոշումը: Պաշտպանության կողմը կարող է համաձայնություն տալ ցուցմունքների իրապարակմանը, կարող է առարկել դրա դեմ, կամ գործի նյութերից կարող է երևալ, որ պաշտպանության կողմի դիրքորոշումը դատարանի կողմից չի պարզել (տես՝ Վոժիգովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 57-րդ կետը, Անդանդոնսկին ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 53-54-րդ կետերը, Տրոֆիմովն Ռուսաստանի գործով վճու 34-րդ, Պոլուֆակինը և Զերնիշևն ընդդեմ ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 45, 65-66, 202-րդ կետերը, Վլադիմիր Ռոմանովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 98-րդ կետը):**

**3. Մեղադրյալի իրավունքը՝ հարցաքննելու իր դեմ ցուցմունք տված վկաներին, կարող է իրացվել ոչ միայն առաջին ատյանի դատարանում, այլ նաև մինչդատական վարույթում առերես հարցաքննության ժամանակ (տես՝ Վոժիգովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճու 51, 55-րդ կետերը, Վլա-**

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

դիմիր Ռումանովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի 38-րդ կետը):

4. Չներկայացած վկայի կամ տուժողի ցուցմունքների հրապարակման հրավաչափությունը գնահատելիս հարկ է հաշվի առնել, թե որքանով են ցուցմունքի տվյալները հիմնական և որոշիչ ենել մեղադրյալի մեջքի ապացուցածության գնահատման համար, այսինքն՝ որքանով են դրանք հաստատվում այլ ապացույցներով (տես՝ Անդանդունսկին ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի 52-րդ կետը, Վլադիմիր Ռումանովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճռի 101-103-րդ կետերը):<sup>5</sup>

### 2. Նախաքննական ցուցմունքների հրապարակման իրավական կարգավորումն առանձին երկրների օրենսդրությամբ:

Մի շարք երկրների քրեադատավարական օրենքներին բնորոշ է վկայի և մեղադրյալի նախաքննական ցուցմունքների հրապարակման հրավական կարգավորումը, որը բնականաբար պայմանավորված է վարույթին այդ սուբյեկտների դատավարական վիճակի առանձնահատկություններով: Այսպես, Մոնտենեգրոյի քրեական դատավարության օրենսգրքի 341-րդ հոդվածը սահմանում է, որ ամբաստանյալի նախաքննական ցուցմունքները հրապարակվում են, եթե նա հրաժարվում է պատասխանել հարցերին ընդհանրապես կամ նասամբ, կամ եթե նա հրաժարվում է իր նախակին ցուցմունքից: Մոնտենեգրոյի քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նախաքննական ցուցմունքների ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի հրապարակում: Վկաների և փորձագետ-վկաների ցուցմունքները կարող են հրապարակվել, եթե նրանք հայտնել են այնպիսի տեղեկություններ, որոնք չեն կարող վերիշել կամ փոխում են իրենց ցուցմունքը:

Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգիրքն ամբաստանյալի նախաքննական ցուցմունքների հրապարակումը հնարավոր է համարում, եթե 1. ամբաստանյալը մահացել է և գործը բննվում է

այլ ամբաստանյալների վերաբերյալ, 2. գործը քննվում է ամբաստանյալի բացակայությամբ, 3. առկա է եական հակասություն մինչդատական վարույթում և դատարանում տրված ցուցմունքների միջև, 4. ամբաստանյալը հրաժարվում է ցուցմունք տալ կամ պնդում է, որ ոչինչ չի հիշում: Վկայի մինչդատական ցուցմունքիները դատարանում կարող են հրապարակվել, եթե 1) առկա են եական հակասություններ մինչդատական վարույթում և դատարանում տրված ցուցմունքների միջև, 2) վկան հրաժարվում է ցուցմունք տալ կամ պնդում է որ ոչինչ չի հիշում, 3) պատշաճ կարգով ծանուցված վկան չի կարող ներկայանալ տևական կամ անորոշ ժամանակով կամ մեղադրյալը չի կարող հարցաքննվել գրավոր ծանուցման միջոցով, 4) վկան չի հայտնաբերվել կամ մահացել է, 5) վկան չի ներկայացել և կողմները համաձայն են ցուցմունքների հրապարակմանը:

Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածը սահմանում է, որ դատաքննության ժամանակ վկայի կողմից մինչդատական վարույթում տրված ցուցմունքների հրապարակումը կամ հարցաքննության առլիի կամ վիետուայնագրության հրապարակումը թույլատրելի է, եթե վկան մահացել է, գտնվում է Վրաստանի սահմաններից դուրս, նրա զտնվելու վայրն անհայտ է և սպառվել են նրան դատարան ներկայացնելու բոլոր հնարավոր միջոցները և հարցաքննությունը կատարվել է սույն օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան:

Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Ղանրապետության և Ղրղզստանի Ղանրապետության քրեական դատավարության օրենսգրքերն ամբաստանյալի մինչդատական ցուցմունքների հրապարակումը հնարավոր են համարում եթեք դեպքում, այն է՝ 1) առկա են եական հակասություններ դատարանում և մինչդատական վարույթում տրված ցուցմունքների միջև, 2) մեղադրյալը հրաժարվում է ցուցմունք տալ կամ փորձագետ-վկանը մահացել է ամբաստանյալի բացակայությամբ:

Ինչպես տեսնում ենք, որպես կանոն, նշ-

<sup>5</sup> Кипнис Н. М. Правовые основы оглашения показаний не явившегося в судебное заседание потерпевшего и свидетеля в российском уголовном судопроизводстве (с учетом правовых позиций Европейского Суда по правам человека) <http://www.iuaj.net/node/535>.

ված երկրների քրեատառավարական օրենքները մեղադրյալի բացակայության հիմքով նախաքննական ցուցմունքների հրապարակումը հնարավոր են համարում միայն ամբաստանյալի բացակայությամբ վարույթի շրջանակներում (հեռակա դատաքննություն)՝ ի տարրերություն վկայի, որի ցուցմունքների հրապարակումը հնարավոր է նրա ներկայության ապահովման անհնարինության բոլոր դեպքերում: Հիշատակված երկրներից միայն Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգիրքն է նախատեսում մեղադրյալի ցուցմունքի հրապարակման առանձնահատուկ հիմք, այն է՝ եթե մեղադրյալը մահացել է և գործը քննվում է այլ մեղադրյալի նկատմամբ:

### 3. Հայաստանի Հանրապետությունում նախաքննական ցուցմունքների հրապարակման հրավական կարգավորումը և դրանց գործնական խնդիրները:

ՀՀ քր. դատ. օր-ի 337-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նախաքննության ընթացքում մեղադրյալի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև այդ ցուցմունքների ծայնագրառումների վերարտադրումը թույլատրվում է, եթե՝ 1) ամբաստանյալը հրաժարվում է դատական քննության ժամանակ ցուցմունքների տալ մեղադրանքի եւրեյան մասին. 2) եական հակասություններ կան դատական քննության ընթացքում տված ցուցմունքների և նախորդ ցուցմունքների միջև: ՀՀ քր.դատ. օր-ի 342-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ծայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, եթե վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, եական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում: Ինչպես նկատում ենք, գործող քր. դատ. օր.-ը տարբերակված ձևով է կարգավիրում մեղադրյալի և վկայի ցուցմունքների հրապարակման հրավական հիմքերը: Մեղադրյալի ցուցմունքների հրապարակման հիմքերը սպասարկությունը կարծում ենք՝ նման դեպքում մահացած մեղադրյալի նախաքննության ընթացքում մեղադրյալների սպասարանում հրապարակել և օգտագործել մյուս մեղադրյալների դեմ: Խնդիրն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 337-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված չէ մահական հիմքով մեղադրյալի ցուցմունքների հրապարակման հնարավորություն: Կարծում ենք՝ նման դեպքում մահացած մեղադրյալի ցուցմունքները, մյուս ամբաստանյալների նաև սպասարկությունը կամ դատարանը կարծում ենք, որ վկայի տված ցուցմունքները, ուստի դրանք պետք է հրապարակվեն վկայի ցուցմունքների հրապարակման համար նախատեսված իրավական ռեժիմով: Ասվածը հիմնավորվում է միջազգային հրավունքում «վկա» հասկացության հիմքավար մեկնարանությամբ: Այսպես, Եվրոպական դատարանը Լուկան ընդդեմ Խոտալիայի գործով կայացված որոշման 41-րդ կետում նշել է. «Այն փաստը, որ ցուցմունքները տրվել են հանցակիցների (համամեղադրյալի) և ոչ թե վկայի կողմից, նշանակություն չունի: Կոնվենցիայի համակարգում «վկա» հասկացություն ունի ինքնավար բնույթ (Տես՝ նաև Վիդալն ընդդեմ Բելգիայի գործով 22.04.1992թ. կետ 33.): Այսպիսով, եթե ցուցմունքները կարող են հանդիսանալ դատավճրի նշանակալի հիմք, այդ դեպ-

ցուցմունքների հրապարակման, օրենքը չի նախատեսում ամբաստանյալի բացակայության հիմքով նրա նախաքննական ցուցմունքների հրապարակում, ինչը բացատրվում է նրանով, որ գործող քր. դատ. օր.-ը չի նախատեսում ամբաստանյալի բացակայության դեպքում նրան դատապարտելու հնարավորություն:

ՀՀ իրավակիրառ պրակտիկայում նախաքննական ցուցմունքների հրապարակման կապակցությամբ ծագում են որոշ հիմնախնդիրներ:

**3.1. Հանցագությամբ կատարված հանցագործությունների գործերով մեղադրյալներից մեկի մահկան դեպքում դատարանում նրա նախաքննական ցուցմունքների հրապարակման թույլատրելիությունը:**

Հանցագությամբ կատարված հանցագործությունների գործերով հանդիպում են իրավիճակներ, եթե նախաքննության ընթացքում մեղադրյալները միմյանց դեմ տալիս են ցուցմունքներ, սպաս մեղադրյալներից մեկը նախաքննության ընթացքում մահանում է: Արդյո՞ք թույլատրելի է մահացած մեղադրյալի նախաքննական ցուցմունքները դատարանում հրապարակել և օգտագործել մյուս մեղադրյալների դեմ: Խնդիրն այն է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 337-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված չէ մահկան հիմքով մեղադրյալի ցուցմունքների հրապարակման հնարավորություն: Կարծում ենք՝ նման դեպքում մահացած մեղադրյալի ցուցմունքները, մյուս ամբաստանյալների նաև սպասարկությունը կամ դատարանը կարծում ենք, որ վկայի տված ցուցմունքները, ուստի դրանք պետք են հրապարակվեն վկայի ցուցմունքների հրապարակման համար նախատեսված իրավական ռեժիմով: Ասվածը, Եվրոպական դատարանը Լուկան ընդդեմ Խոտալիայի գործով կայացված որոշման 41-րդ կետում նշել է. «Այն փաստը, որ ցուցմունքները տրվել են հանցակիցների (համամեղադրյալի) և ոչ թե վկայի կողմից, նշանակություն չունի: Կոնվենցիայի համակարգում «վկա» հասկացություն ունի ինքնավար բնույթ (Տես՝ նաև Վիդալն ընդդեմ Բելգիայի գործով 22.04.1992թ. կետ 33.): Այսպիսով, եթե ցուցմունքները կարող են հանդիսանալ դատավճրի նշանակալի հիմք, այդ դեպ-

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

քում անկախ այն բանից, դրանք տրվել են վկաների կողմից, բառի բուն իմաստով, թե հանցակիցների կողմից, դրանք իրենցից ներկայացնում են մեղադրական ցուցմունքներ, որոնց կապակցությամբ գործում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «Ճ» ենթակետով սահմանված երաշխիքները:

Ի տարրերություն մեղադրյալի՝ ՀՀ քր. դատ. օր-ը հնարավորություն տալիս է հրապարակել վկայի ցուցմունքը՝ մահվան պատճառով դատարան ներկայանալու անհնարինության հիմքով: Սակայն իրավակիրաց պրակտիկայում դատարանուն հրապարակված մահացած վկայի ցուցմունքները թույլատրելի են, եթե նախաքննության ընթացքում մեղադրյալը հնարավորություն ունեցել է առերես հարցաքննելի իր դեմ վկայություն տված անձին: Այսպես, Կրաքսին ընդդեմ Խոտալիայի գործով վճռում Եվրոպական դատարանը նշել է, որ վկայի մահվան փաստը չի կարող մեղադրյալին զրկել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «Ճ» ենթակետում սահմանված իրավունքից: Համաձայն գործի նյութերի՝ ոչ դիմումատուն (գործով մեղադրյալը), ոչ նրա ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ոչ մի փուլում հնարավորություն չեն ունեցել հարցաքննելու այն անձանց, որոնց ցուցմունքները խոտալական դատարանների կողմից օգտագործվել են որպես ապացույց և դրվել են մեղադրական դատավճռի հիմքում: Արդյունքում դատարանը որոշել է, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետի «Ճ» ենթակետի խախտում:

**3.2. Եյութերի նախապարտաստման (քրեական գործի հարուցման) փուլում անձից վերցված բացատրության կամ նախաքննության ընթացքում՝ վկայի տված ցուցմունքների հրապարակումը, եթե տվյալ անձը հետագայում ծեռք է բերել մեղադրյալի կարգավիճակ:**

ՀՀ քր. դատ. օր-ի 337-րդ և 342-րդ հոդվածները կարգավորում են բացառապես նախաքննության ընթացքում ծեռք քերված ցուցմունքների հրապարակման հետ առնչվող հարաբերությունները, ուստի նշված հոդվածները չեն նախատեսում բացատրությունների հրապարակմանը հնարավորություն, եթե նույնիսկ առկա են էական

հակասություններ բացատրությունների և դատարանում տված ցուցմունքների միջև:

Գործնականում բացատրության և ցուցմունքի միջև հակասության դեպքում, որպեսզի դատարանում հնարավոր լինի հրապարակել բացատրությունը և այդ հակասությունների շուրջ անբաստանյալին հարցեր տալ, իրավակիրաց մարմնները բացատրությունը ճանաչում են որպես այլ փաստաթուղթ և այդ ապացույցի համար նախատեսված իրավական ռեժիմի շրջանակներում հրապարակում բացատրությունը, այնուհետև՝ ամբաստանյալին հարցաքննում հակասությունների շուրջ: Նման պրակտիկայի իրավաչափությունը կախված է այն ընդհանուր հարցից, թե արդյոք բացատրությունը կարելի է ճանաչել որպես այլ փաստաթուղթ: Մի շարք իրավաբաններ (Ա. Բելոստով, Ն. Գրոմով, Վ. Գրիգորև, Ա. Գուշին, Ա. Սոլովյով, Յու. Ֆրանցիֆորով և ուրիշներ) գտնում են, որ բացատրությունը կարելի է օգտագործել որպես ապացույց: Կարծում ենք առավել ընդունելի այն մոտեցումը, որ փաստական տվյալները գնահատվում են որպես այլ փաստաթղթեր, եթե դրանք ոչ դատավարական փաստաթղթեր են: Ա. Ի. Տրուսովը արդարացիորեն առանձնացնում է փաստաթղթի որպես թույլատրելի ապացույցի երկու ընդհանուր պայման՝ 1. եթե դրանք ծագել են քրեական գործով վարույթի դուրս, կազմակերպությունների, հիմնարկների և պաշտոնատար անձանց բնականուն գործունենության ընթացքում և համապատասխանում են տվյալ փաստաթղթերին ներկայացվող պահանջներին, 2. եթե դրանց օգտագործումը որպես ապացույց չի հանգեցնում նույն փաստի վերաբերյալ ինչ-որ մեկի՝ հարցաքննության ժամանակ տրվող ցուցմունքների փոխարինմանը՝ ապահովված չի հնելով ստուգման և հավաստիցման անհրաժեշտ երաշխիքներով<sup>6</sup>: Այստեղ ցանկանում ենք կատարել մեկ ճշգրտում: Այլ փաստաթղթերը կարող են կազմվել քրեական գործի վարույթին զուգագեր կամ վարույթի կապակցությամբ, սակայն կարևոր այն է, որ այլ փաստաթուղթը որպես ապացույց չի կազմվել քրեական գործով վարույթի իրականացնող մարմնի կողմից: Բացատրությունը վերցնելը չի կարող համարվել այլ փաստաթուղթ, քանի որ այն ձևավորվում է

<sup>6</sup> Советский уголовный процесс. Под. ред. А.С. Кобликова. М.: 1972. С. 79.

վարույթ իրականացնող մարմնի կողմից<sup>7</sup>: **Ա. Սմիրնովը** արդարացիորեն նշում է, որ քննիչը, հետաքրնիչը, դատախազը և դատարանը չեն կարող լինել այլ փաստաթղթի աղբյուր, քանի որ գործով իրենց հայտնի հանգանակները նրանք պետք է ամրագրեն քննչական և դատական գործողությունների արձանագրությունների ձևով: Այլ փաստաթղթերն ամրագրում են այնպիսի հանգանակներ, որոնք հայտնի են դարձել ոչ թե քննչական գործողությունների արդյունքում, այլ դրանց շրջանակից դրության: Այստեղ կարևոր է նկատել նաև, որ այլ փաստաթուղթն ապացույց դառնում է վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ այդպիսին ճանաչվելու արդյունքում: Նույնպիսի ռեժիմը քրեադատավարական օրենքը սահմանել է նաև իրեղեն ապացույցների համար: Այսինքն՝ ճանաչման միջոցով քրեական դատավարություն ներմուծվում և ապացույցի կարգավիճակ են ստանում այն փաստական տվյալները, որոնք ստեղծվել, առաջացել են վարույթից դրուս և ոչ վարույթն իրականացնող մարմնի կողմից: Վարույթն իրականացնող մարմնը չի կարող «ճանաչել» և վարույթ ներմուծել այն, ինչ ձևավորվել է վարույթի շրջանակում իր կողմից: Ասվածը ևս վկայում է բացատրության արձանագրությունը այլ փաստաթուղթ ճանաչելու և որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության մասին: Այս արումով կարծում ենք ժամանակն է հրաժարվել բացատրությանը դատավարական ապացույցի կարգավիճակ տալու և դատարանում այն իրապարակելու պրակտիկայից:

ՀՀ քր. դատ. օրինական ապահովության (այսուհետ՝ նախագիծ) նախատեսված են նախագիծների համակարգը գույքունքների հրապարակման միասնական հիմքեր ինչպես մեղադրյալի, այնպես էլ վկայի և տուժողների համար: Նախագիծի 354-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմի միջնորդությանը և դատարանի որոշմամբ մինչդատական վա-

րույթում կամ դատարանում սույն օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմանը տրված ցուցմունքի, ինչպես նաև դրան կցված հավելվածների (նկարների, գծագրերի, սխեմաների, լուսանկարների, ձայնագրությունների, տեսագրությունների, նկարահանումների, տեսաֆիլմների) հրապարակումը թույլատրվում է, եթե՝ 1) առկա է եական հակասություն անձի՝ դատարանում և նախակինում տված ցուցմունքների միջև, 2) անձն օգտվելով իր սահմանադրական իրավունքից իրավաչափորեն հրաժարվել է դատարանում ցուցմունք տալուց, 3) անձը նահացել է կամ չի կարող հարցարներվել ֆիզիկական կամ հոգեկան ոչ լիարժեքության պատճառով, 4) անձը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս կամ գործում է անձի դատարան ներկայանալուն խոչընդոտող անհարդարելի ուժ և չկա տեսահաղորդակցության տեխնիկական միջոցներով նրան հարցաքննելու հնարավորություն, 5) հայտնի չէ անձի գտնվելու վայրը կամ սպառվել են նրան դատարան ներկայացնելու բոլոր ողջամիտ միջոցները, 6) մինչդատական վարույթում անձի ցուցմունքը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան դեպոնացվել է:

### **4. ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ՑՈՒցՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՎՈՆԱԳ- ՄԱՆ ԱՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ:**

Նախագծով նախագիծների հրապարակման հիմքերի համակարգում նախատեսված է ցուցմունքների դատական դեպոնացումը: Նախագծի 328-րդ հոդվածի համաձայն՝ ցուցմունքների դատական դեպոնացումը կատարվում է՝ 1) մեղադրյալի խոստովանական ցուցմունքի արժանահավատության ապահովման նպատակով՝ քննիչի միջնորդությամբ, 2) դատարանությանը ներկայանալու հնարավորություն չունենալու հիմնավոր ենթադրության պարագայում ցանկացած անձից արժանահավատ ցուցմունք ստանալու

<sup>7</sup> Յովսեփյան Ա., Շահինյան Վ., Ղամբարյան Ա. Մինչդատական վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Գիտագրունական ձեռնարկ. Եր., «ԵՊՀ» հրատ., 2009, Ղամբարյան Ա. Ապացույցների թույլատրելիությունը քրեական դատավարությունում (մինչդատական վարույթ): Մենագրություն. Եր., «Եգեա» հրատ., 2004.

<sup>8</sup> Смирнов А., Калиновский К. Комментарий к Уголовного-процессуальному кодексу РФ. 2-е изд.. перераб. и доп. Питер. 2004, С. 241.

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնակոր մասնակցի միջնորդությամբ<sup>9</sup>:

Դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու հիմնավոր եթեադրության պարագայուն վկայի կամ տուժողի ցուցմունքի դեպոնացումն, ընդհանուր առնամբ, ընդունելի է, նման ինստիտուտ նախատեսված է մի շարք երկրների օրենսդրությամբ: Այսպես, Մոլդովայի 2003թ.-ի քր. դատ. օր.-ի 109-րդ հոդվածի համաձայն՝ եթե վկան արտասահմանում գտնվելու կամ այլ հիմնավոր պատճառերով չի կարող նախակցել դատարանում գործի քննությանը, ապա դատախազի պահանջով նրան կարող է հարցաքննել քրեական հետապնդման դատավորը ապահովելով կասկածյալի, մեղադրյալի, նրա պաշտպանի, տուժողի և դատախազի հարցաքննվող վկային հարցեր տալու հնարավորությունը: Էստոնիայի Հանրապետության 2004թ.-ի քր. դատ. օրենսգրքի 67-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության դատավորը, հաշվի առնելով հանցագործության ծանրությունը կամ բացառիկ հանգամանքների առկայությունը, դատախազության միջնորդությամբ վկայի անվտանգության ապահովման նպատակով, վերջինիս անանուն վկա ճանաչելու որոշում կայացնելուց առաջ, հարցաքննում է՝ նրա անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը որոշելու նպատակով: Ուկրաինայի քր. դատ. օր.-ի 225-րդ հոդվածը կարգավորում է նախաքննության ընթացքում վկայի և տուժողի հարցաքննությունը դատական նիստում, որը կարող է կատարվել բացառիկ դեպքերում՝ վկայի և տուժողի կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի, ծանր հիվանդության կամ այլ հանգամանքների առկայության դեպքում, որոնք կարող են անհնարդար դարձնել դատարանում նրանց հարցաքննությունը կամ ազդել ցուցմունքների հավաստիության և լրիվության վրա: Ինչպես նկատում ենք, նշված պետություններում

նախատեսված չէ մեղադրյալի նախաքննական ցուցմունքների դատական դեպոնացման հնարավորություն:

Կարծում ենք, խիստ վիճելի է մեղադրյալի խոստովանական ցուցմունքի հավաստիության ապահովման նպատակով դրանց դեպոնացումը հետևյալ պատճառաբանությամբ:

1. Նախագծում նախատեսված է, որ խոստովանական ցուցմունքների դեպոնացում իրականացվում է քննիչի միջնորդությամբ, սակայն օրենքով նախատեսված չեն այն հիմքերը, որոնց առկայության դեպքում քննիչը պետք է որոշի խոստովանական ցուցմունքը դեպոնացնել, թե ոչ: Ցուցմունքների դեպոնացման օրենսդրական հիմքերի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե քննիչը ինչպես կարող է կատարել նախագծի 329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն պահանջը, որ ցուցմունքի դեպոնացում կատարելու միջնորդությունը պետք է բովանդակի դրա անհրաժեշտության հիմնավորումները:

Բացի այդ, պարզ չէ նաև, թե ինչ դատավարական ձևի շրջանակներում քննիչը պետք է համոզված լինի, որ մինչև ցուցմունքի դատական դեպոնացումը, մեղադրյալը տալու է խոստովանական ցուցմունքներ, արդյոք նա պետք է նախապես հարցաքննի մեղադրյալին:

2. Եթե անձը ներկայացել է մեղայականով և ներգրավվել է որպես մեղադրյալ, ապա գործնականում նրա հնարավոր խոստովանական ցուցմունքի դատական դեպոնացման դաշնությունը անհնարին, քանի որ մի կողմից՝ նախագծի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է մեղադրյալին հարցաքննել նրան մեղադրանք ներկայացնելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, մյուս կողմից՝ նախագծի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցուցմունքի դեպոնացման միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը կայացնում է ցուց-

<sup>9</sup> Ներկայումս ՀՀ-ում ձևավորվել է նախաքննության ընթացքում մեղադրյալի բացատրությունների դատական դեպոնացման նման պրակտիկա: Այսպես, նախաքննության ընթացքում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը դատարանում քննարկելու ժամանակ հաճախ մեղադրյալը դատավորի հարցերին պատասխանելիս, փաստացի տալիս է խոստովանական ցուցմունքներ, որոնք ձայնագրավում են: Քրեական գործով հետաքայում արդարադատություն իրականացնելիս, եթե անբաստանյալը իրաժարվում է նախաքննական ցուցմունքներից կամ տալիս է հակասական ցուցմունքներ, ապա մեղադրանքի կողմը դատարան է ներկայացնում կալանքի միջնորդության դատական նիստի ձայնագրառումը:

մունքի դեպնացում կատարելու մասին որոշում, որում պետք է նշվեն դեպնացման օրը, ժամը և վայրը, իսկ ցուցմունքի դեպնացումը նշանակվում է որոշման կայացումից հետո ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան 10 օր հետո: Գործնականում հնարավոր չէ ցուցմունքների դատական դեպնացման վերը նշված կարգի (ցուցմունքի դեպնացման մասին միջնորդության ներկայացում, քննարկում, դեպնացման համար դատական նիստի օր և ժամ նշանակում, ցուցմունքի դեպնացման համար դատական նիստի անցկացում) պայմաններում մեղադրանք ներկայացնելուց հետո 24 ժամվա ընթացքում մեղադրյալի հնարավոր խոստովանական ցուցմունքների դեպնացումը:

3. Նախագծի 331-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է սույն օրենսգրքով սահմանված հարցաքննության ընթացակարգի պահպանումը, ինչպես նաև ցուցմունքի դեպնացման ընթացքում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը: Թեև ինքնին ողջունելի է ցուցմունքների դատական դեպնացման ժամանակ հակընդդեմ հարցման իրավունքը ունեցող անձանց մասնակցությունը, սակայն այս կարգավորումը հակասում է Նախագծի 239-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, քանի որ մեղադրյալը հարցաքննվում է այլ անձանցից անջտա: Քննիչը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի մեղադրյալը չհաղորդակցվի տվյալ վարույթի շրջանակներում հարցաքննված կամ հարցաքննման ենթակա այլ անձանց հետ:

4. Դատարանը մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպնացման դեպքում ինչպիսի՞ լիազորություններ ունի, ինչպես պետք է ապահովի այդ ցուցմունքների հավաստիությունը: Մինչդատական վարույթում դատարանն իրականացնում է նախնական կամ հետագա վերահսկողություն, որի արդյունքում որոշվում է քրեական հետապնդման մարմնի որոշումների, գործողությունների կամ անգործության օրինականությունը: Արդյո՞ք դատավորի ներկայությունը հարցաքննությանը և ցուցմունքների ամրագրմանը տեղափոխվում է դատավորի գործառությունների շրջանակում, արդյո՞ք ապացույցների ամրագրումը կապված է դատավորի պարտականու-

թյունների հետ: Քննարկումների ժամանակ որոշ տեսաբաններ նշում են, որ մեղադրյալի խոստովանական ցուցմունքի արժանահավատության ապահովման նպատակով դատարանի մասնակցությունը հարցաքննությանը հանդիսանում է դատական վերահսկողության դրսությում: Այս հարցին պատասխանելու համար պետք է պարզել խոստովանական ցուցմունքների դեպնացման դեպքում դատավորը ինչպիսի՞ լիազորություններ ունի: Այսպես, Նախագծի 331-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանն ըստ էության հարցեր տալու իրավունք չունի, իսկ 5-րդ մասի համաձայն՝ ցուցմունքի դեպնացման արդյունքում կազմվում է հարցաքննության արձանագրության հաստատություն, որը հաստատվում է նիստը նախագահող դատավորի ստորագրությամբ: Ինչպես նկատում ենք, դատավորը մեղադրյալի ցուցմունքների դեպնացման դեպքում մեղադրանքի էության վերաբերյալ հարցեր տալու իրավունք չունի, իսկ հարցաքննության արձանագրության հաստատումն, ըստ էության, դատավորի պարտականությունն է: Նախագծի նշված գլխում նախատեսված չէ նաև դատավորի կողմից արձանագրության մեջ առարկություններ ներկայացնելու հնարավորությունը: Ստացվում է դատավորը ոչ թե մասնակցում, այլ պասիվ կերպով ներկա է գտնվում հարցաքննությանը, չունի հարցաքննության ընթացքում հնարավոր խախտումները կանխելու կամ դրանց արձագանքնելու հնարավորություն: Հարցաքննության ընթացքի օրինականության ստուգման անմիջական դիտարկումը հատուկ է ոչ թե վերահսկողությանը, այլ հսկողությանը: Մինչդատական վարույթում կատարվող դատավորի ներկայությունը չի կարող համարվել դատական վերահսկողությունը: Ստացվում է, որ դատավորը, խոստովանական ցուցմունքների հավաստիությունն ապահովելու նպատակով հարցաքննությանը ներկա գտնվելով, իրականացնում է նոտարին կամ ընթերակային հատուկ գործառույթներ, այն է՝ հաստատել կամ անդագրել իր մասնակցությանը կատարված քննչական գործողության արդյունքները<sup>10</sup>:

5. Այդ ինստիտուտի կողմնակիցները նշում են, որ դատավորի մասնակցությամբ հարցաքննության անհրաժեշտությունը

<sup>10</sup> Ղամբարյան Ա. Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում. Գիտագործնական ձեռնարկ. Եր., 2010. էջ 76:

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պայմանավորված է նշված սուբյեկտների նկատմամբ որևէ ճնշում և խոշտանգում բացառելու հանգամանքով, քանի որ անձը դատավորի ներկայությամբ ավելի անկաշկանդ և վստահ ցուցմունք կտա, իսկ հետագայում էլ՝ դատական քննության փուլում, չի փոխի իր կողմից նախաքննության ժամանակ տված ցուցմունքները։ Սակայն, կարծում ենք՝ իրականում նշված ինստիտուտը չի կարող խոչընդոտ հանդիսանալ քննիչի կողմից նույն այդ անձանց նկատմամբ քննություն կամ խոշտանգում կիրառելու և դրանից հետո դատավորի ներկայությամբ նրանց հարցաքննելու համար։ Բանն այն է, որ մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալը, հատկապես եթե նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանք, գտնվում է քրեական հետապնդման նարմնի անմիջական հսկողության տիրույթում, իսկ հարցաքննությանը դատավորի մասնակցությունը ունի հատվածային բնույթ։ Ավելին, դատավորի ներկայությամբ իրականացված հարցաքննությունը և ցուցմունքները գործնականում կդիտվեն առավել արժանահավատ և անվիճելի ապացույցներ, նույնիսկ այն պարագայում, եթե անձը հետագայում դատարանում ներկայացնի իր նկատմամբ խոշտանգում կիրառելու վերաբերյալ վստահելի հայտարարություն։ Այս հայտարարությունը ի սկզբանե կդիտվի ոչ հավաստի, գուտ այն պատճառով, որ ցուցմունքները ստացվել են դատավորի ներկայությամբ, իսկ մեղադրյալը ցուցմունքի դեպոնացման ժամանակ չի հայտարարել իր նկատմամբ խոշտանգում կիրառելու մասին։ Մինչեւ, ինչպես նշվեց, տեսականորեն անձի նկատմամբ խոշտանգում կարող է կիրառվել մինչև նրան դատարան տանելը։

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984թ. հոկտեմբերի 10-ի Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում ենթարկվել է խոշտանգումների, ունենալովաւ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու և նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաշառ քննության իրավունք։ Զեռ-

նարկվում են միջոցներ՝ ապահովելու համար հայցվորի և վկաների պաշտպանությունն ընդունված վատ վերաբերմունքի կամ ահարեկման՝ որպես նրա բողոքի կամ վկայության հետևանքի»։

Միջազգային նման նորմի առկայության դեպքում ամկախ այն հանգամանքից, մինչդատական վարույթում կասկածալը կամ մեղադրյալը հարցաքննվել է դատավորի ներկայությամբ, թե՝ ոչ, եթե նա դատական քննության ժամանակ հայտարարի իր նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մասին, ապա պետական իրավասու մարմինները պարտավոր են անհապաղ և անաշառ քննություն իրականացնել։ Տվյալ պարագայում այս ինստիտուտի օրենսդրական ամրագրումն աննպատակահարմաք է։

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ ներկայիս մինչդատական վարույթում կանոնակարգված ապացուցման գործնթացի առկայության պարագայում նախաքննական ցուցմունքների հրապարակումը, թեև որոշակիորեն սահմանափակում է դատարանում ապացույցներն անմիջական հետազոտելու պահանջը և մեղադրյալի պաշտպանության իրավունքը, սակայն նման սահմանափակումը, թույլատրելի է, եթե պահպանվում են նախաքննական ցուցմունքների հրապարակման՝ օրենքով նախատեսված հիմքերը, կարգը և Եվրոպական դատարանի կողմից ձևավորված չափորոշիչները։

Չինք ընդունելով միջազգային իրավունքում «Վկա» հասկացության ինքնավար մեկնարանությունը, կարծում ենք հանցագությամբ կատարված հանցագործությունների վարույթը մահացած մեղադրյալի նախաքննական ցուցմունքները, մյուս ամբաստանյալների մասով, հանդես են գալիս որպես վկայի տվյալ ցուցմունքներ, ուստի դրանք դատարանում պետք է հրապարակվեն վկայի ցուցմունքների հրապարակման համար նախատեսված իրավական ռեժիմով։

Անբույլատրելի պետք է համարել քրեական գործի հարուցման փուլում վերցված բացատրությանը «այլ փաստաթղթի» դատավարական ապացույցի կարգավիճակ տալու և դատարանում դրանք հրապարակելու պրակտիկան։

Առաջարկում ենք, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծից հանել մեղադրյալի խոստովանական ցուցմունքների դեպոնացման ինստիտուտը։

# ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՐԺԵՐՆ ԸՍՏ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՀԱՅՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՁԻ

## Էդգար ՆԱԶԱՐՅԱՆ

Երևանի Շենգավիք վարչական շրջանի  
դատախազության դատախազ

**Հայ իրավունքի պատմության մեջ մարդու իրավունքների և պատությունների իրավական ամրագրման ու դրանց պաշտպանվածության տեսակետից հատկապես առանձնանում է Միսիքար Գոշի Դատաստանագիրը /1184թ./:**

**Միջնադարյան իրավահայեցողության պայմաններում խնդրո Դատաստանագրքում առավել ընդգրկուն արտացոլված են անձի իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը: Դատաստանագրքում արձանագրված մարդկանց պատության և հավասարության իրավական դրույթները հիմնված են աստվածային և բնական իրավունքի հայեցակարգի վրա:**

Լինելով ավատատիրական հասարակոփի գաղափարախոսներից մեկը, Գոշը իր Դատաստանագրքով օրինականացրեց գոյություն ունեցող հասարակական, տնտեսական և իրավական հարաբերությունները: Սակայն, վերոնշվածով հանդերձ, նա սահմանել և օրենքի աստիճանի է բարձրացնել անձի իրավական պաշտպանության դրույթը և որոնք կենսական ու առաջադիմական են եղել ոչ միայն իր ժամանակաշրջանի, այլև հետագա դարերի համար: Դենց դա էլ հանդիսացել է այն կարևոր գործոններից մեկը, որի շնորհիվ Դատաստանագիրը կիրառվել է «դատական ատյանում գրեթե մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը»<sup>1</sup>:

Ըստ Դատաստանագրքի մարդիկ Աստծոն կողմից ստեղծվել են ազատ, սակայն տերերին ծառայելը պայմանավորված է տնտեսական պատճառներով. «Մարդկային բնությունը ազատ եղավ Արարշի կողմից, իսկ կարիքների համար տերերին ծառայելը հոդի և ջրից» /հոդվ. 21/: Մարդիկ ոչ միայն ի ծնե ազատ են, այլ նաև ազատ տեղաշարժվելու իրավունք ունեն. «Ովքեր չունեն հող և ջուր, ազատ են, ուր կամենան, կարող են

գնալ և բնակվել և թագավորներն ու իշխաններն իրավունք չունեն ստիպել նրանց բնակվելու որևէ գյուղում կամ երկրում» /նույն տեղը/:

Քաջ գիտակցելով, որ ավատատիրական համակարգում անձի իրավունքների ուսուահարման հիմնական սուբյեկտներն են թագավորական իշխանությունը և պատաժերի կամայականությունները Միսիքար Գոշը իր «Դատաստանագրքով» փորձել է իրավունքով սահմանափակել դրանց իշխանությունը և դիմակայել իշխանազանցությունները:

Պետական իշխանությունը, ի դեմս թագավորի, ավատատերերի, աստվածային ծագում ունի, սակայն ժողովրդահիշանությունը, ողջ հասարակության շահը առավել է նրանից: Ժողովուրդը կարող է փոխել, պատժել, նույնիսկ աքսորել իրեն չարդարացրած թագավորին, իշխանին: Այդպիսի դեպքում թագավորը կարող է հեռացվել իշխանությունից կամ մեկ ուրիշ թագավորի, կամ կարողիկոսի կամքով և համընդհանուրի համաձայնությամբ: Թագավորը երկիրը պետք է կառավարի օրենքի հիման վրա.

<sup>1</sup> Տե՛ս. Միսիքար Գոշ Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, Առաջարան, էջ ԼՍ:

## ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Ամեն պարագայում և ամեն գործի մեջ իրավունքով /թող/ վարվի հավատացյալ բազավորը»<sup>2</sup>:

Դեռ ավելին, հասարակությունում օրինականության և իրավակարգի, ինչպես նաև անձի իրավունքների պաշտպանության խնդրում Մխիթար Գոշը նախապատվությունը տալիս է ոչ թե թագավորին, այլ դատական իշխանությանը. «Դատավորների և նրանց դատական կարգավիճակը առաջնահերթ սահմանեցինք, որովհետև առաջինը և կարևոր նրանց պատիվն է: Խսկ երկրորդ /տեղում/ դժում ենք թագավորների կանոնակարգը... /հոդվ.2/:

Իշխանությունը որոշակի իրավական շր-

պահպանության համար կարգվեցին, այլ ոչ կործանման համարէ /հոդվ.2/: Դեռ ավելին, Գոշը կտրականապես արգելում է գլխահարկը, քանի որ այն նսենացնում է անձի պատիվն ու արժանապատվությունը, «...բնակիչները արհեստներով կամ առևտորվ պետք է հարկվեն, քանզի քրիստոնյաներին գլխահարկ չկա, գլխահարկը այլարդավաններին է, երբ քոնությամբ հարկատու են դարձվում» (նույն տեղը):

Միջնադարի պայմաններում, որտեղ տիրում էր կամայականությունը և «քրունքի իրավունքը» նման իրավական կարգադրությունը խնդրի իրավականության և անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից ակնհայտորեն լուրջ առաջընթաց էր: Այս կապակցությամբ, ուշագրավ է նկատել, որ դեռևս վաղ ավատափիրության շրջանում հայ կանոնական օրենսդրությամբ թե հպատակներին, եթե՛ տերերին կոչ էր արվում խստորեն պահպանել «օրենքը»: Այս մասին վկայում է հինգերորդ դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդը. «բոլոր աշխարհին պատվիրում էր նա /Կաթողիկոս Ներսէս Սեծը/, նույն ինքը թագավորին, մեծամեծերին և առհասարակ նրանց, որ գույք ունենան իրենց ծառաների, ստորադրյաների վլա, սիրել նրանց իբրե իրենց ընտանիներին, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղել, հիշեցնելով, որ նրանց համար էլ Աստված կաերկնօքում: Ծառաներին էլ պատվիրում է հավատարիմ ու հնազանդ լինել իրենց տերերին, որի համար վարձ կստանան տերերինց»<sup>3</sup>:

Անձի սոցիալական իրավունքների շարքում հատկապես ընդգծվում է աշխատանքի և աշխատանքի պաշտպանության հետ առնչվող հարցերը: Դատաստանագիրը էական նշանակություն է տալիս վարձու աշխատանքի իրավական կարգավորման խնդիրներին, նպատակ հետապնդելով իրա-

ջանակներով սահմանափակելու միտումը առավել կոնկրետ և հստակ արտահայտված է Դատաստանագրքի մի շարք հոդվածներում, որոնցում որոշակիորեն նշանարկում է նաև դրանց սոցիալական ուղղվածությունը: Այդ նորմերն իրենց էռւյամբ և բովանդակությամբ կարելի է բնութագրել որպես անձի սոցիալական իրավունքներ: Այսպես, Մխիթար Գոշի Դատաստանագիրը սահմանում է, որ «քագավորը և իշխանավորները մարդկանցից և ժողովուրդներից հարկերը հավաքեն արդարացի» այսինքն նախնիների սովորույթներով սահմանված չափով, քանի որ իշխանները և թագավորները Աստծոն կողմից նշանակվել են երկիրը պահպանելու ու փրկելու համար. «Խսկ գավառների ու ժողովուրդների հարկերը թագավորներն ու իշխանները արդարությամբ գանձեն, ոչ ավելին, քան նախնական սովորությունն էր, քանզի ամեն բանի համար հաշիվ պետք է տան, որովհետև Աստծոն կողմից աշխարհի փրկության և

<sup>2</sup> Տես. Ուուրեն Ավագյան. Դայ իրավական մտքի գանձարան /մ.թ.ա. IX դ.- XIX դ./, Երևան, 2001, էջ 394, /այնուհետ տեքստում նշելով «Դատաստանագիրի» հոդվածները:

<sup>3</sup> Փավստոս Բուզանդ. Դայոց պատմություն, Երևան, 1987, էջ 121-123:

վական միջոցներով սահմանափակել «շահագործումը»: Այսպես, օրինակ, աշխատանքի պաշտպանության և աշխատավարձի հարցերին են նվիրված Դատաստանագրքի 35, 126, 222, 226, 227, 236, 237, 238, 242 հոդվածները: Դատաստանագրքի 35 հոդվածը սպանության է հավասարեցնում այն արարքը, երբ տերը կախման մեջ գտնվող անձին հարկադրում է աշխատել օրենքով սահմանվածից ավելի, որի հետևանքով մահ է պատճառում. «Եթե առավել անզբարար, քան օրենքն է /քույլատրում/ տերերի լծի տակ ընկածները /պատճեն/ և դրանով մահացու վճաս հասցվի /նրանց/, Տերերից Գերագույնին /Աստծուն/ արյան դատարանի պատասխան լինեն և արդարացիորեն ապաշխարեն խոնարհությամբ», իսկ առողջությանը վնաս պատճառելու կամ հաշմանդանության դեպքերում, Դատաստանագիրքը տերերին

### **«...ժողովուրդը կարող է փոխել, պատժել, նույնիսկ արսորել իրեն չարդարացրած թագավորին, իշխանին...»**

պարտավորեցնում է համապատասխան հասուցում. «Իսկ այլ վնասների /ինքը բուժման և վճասվածների /ծախսը/ հատուցեն, անբուժելիներին էլ տուգանքներ վճարեն» (նույն տեղը):

Դատաստանագրքի 126 հոդվածը տերերին պարտավորեցնում է վարձկաների աշխատանքի դիմաց համապատասխան վարձ տալ ժամանակին, հակառակ դեպքում վարձկանն իրավունք ունի դատական կարգով ոչ միայն ստանալ աշխատավարձը, այլ նաև ուշացման համար գանձել տուգանք. «Զգլանաս տալ պանդուստի և քո կարուտյալ եղբայրների կամ քո քաղաքներում բնակվող օտարականների վարձը: Նույն օրը հասուցիր նրանց վարձը, և արևը մայր չմտնի դրա վրա, քանի որ նա տնանկ է, և այդ է նրա հույսը, չիմի, որ քեզնից բողոքի Տիրոջը և դա քեզ համար մեղք լինի: Պարզ է, որ աղքատության և կարիքի համար է քեզ վարձկան դարձել: Եթե օրվա աշխատանքի համար նրան չվճարվի, այդուհետև ավելին հատուցվի դատարանի վճռով»: Այսինքն անձին իրավունք է վերապահվում դատական կարգով պաշտպանել է իր աշխատանքային իրավունքը:

Աշխատանքի պաշտպանվածության հետ կապված հարցերը առավել կոնկրետացված են Դատաստանագրքի 222, 226, 227 և 236 հոդվածներում, որոնցում նախատեսված են այն դեպքերը, երբ տիրոջ մեղավորությամբ անձին պատճառվում է մահ: Մասնավորապես, 222 հոդվածում սահմանված է հետևյալը, «...Եթե տերերի կամքով նրանց ծառաները հասարակական միաբանության և սիրո ու մեր կյանքի խաղաղությանը ընդդեմ են գործում և այդպիսով մահվան են մատնվում կամ սպանվում, նրանց հրամայող տերը մահապարտ է: Կրկին եթե նրանցից /ծառաներից/ մեկնումնեկը գգուշացնում է իր տիրոջը առջևում առկա վտանգի մասին, իսկ տերն անհոգարար և անպատճառ վիճակում ծառային գործի է ուղարկում և նրան հասցվում է վճաս, որից նա վախենում էր ով որ ուղարկել է նրան, արյունապարտ է», իսկ Դատաստանագրքի 226-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է. «Եթե որևէ մեկն իրեն յուրային չհանդիսացող մարդուն գործի ուղարկի, որի պատճառով վերջինս ընկնի որոգայիր մեջ, ուղարկողն արյունապարտ է: Կանոնները հրահանգում են գգուշանալ և որևէ օտարի, որը վարձկան չէ, կամ օրինական աշխատող համապատրաստից ուղարկել իր գործով, որովհետու կանոններով հրամայված է վճաս կրելու դեպքում հատուցել արյամք»:

Անձի աշխատանքային իրավունքների պաշտպանության խնդրում, հատկապես կարևորվում են Դատաստանագրքի 227 և 236 հոդվածները, որոնց դիսպոզիցիաներում արգելվում է անձին հարկադիր աշխատանքի ներակելը. «Եթե մեկը վարձկան /վարձու աշխատող/ լինի և տանուտերն ասի, թե ինձ ուղարկիր կամ գործ տուր, որ կատարեմ, իսկ նա /տանուտերը/ նախապես ծանոթացնի նրան տվյալ գործում առկա մահվան վտանգն ու վճասները, բայց վարձկանը, իր կարիքից ելնելով, հանձն առնի կատարել վտանգավոր գործը, ու սա տանուտերը, կրկին իր անպարտությունը վկայող գգուշացում ամի նրան, և տվյալ գործում վարձկանը մահանա, ուրեմն տանուտերն անպարտ է և մեղք չունի: Իսկ եթե անզգուշաբար շահերի կողմից վկայված վտանգն անտեսելով վարձկանին գործի ուղարկի կամ հրամայի աշխատել, ու այնտեղ մահվան որոգայթ հանդիպի աշխատող մարդուն, այնժամ ուղարկողը արյունա-

պարտ է համարվում, իսկ 236 հոդվածում նախատեսված է հետևյալը. «Եթե մեկը ծառային հարկադրի մի գործ կատարել, որը հղի է մահվան վտանգով, այսպիսի դեպքերի համար պետք է իմանալ հետևյալը, եթե տերը հարկադրի աշխատողին ծար բարձրանալ ու թափ տալ պտուղը, կամ հարկադրի ուրիշի այնպիսի բաներ կատարել, որի

նորմերը շարադրված են Դատաստանագրքի 125-րդ հոդվածում, որտեղ նշված է. «Եթե քո ընկերը քեզ ինչ որ պարտք լինի չմտնես նրա տունը որևէ բան գրավ առնելու, այլ դրսում կանգնիր, և մարդը, որը պարտք է քեզ, թող գրավը դուրս հանի: Եթե մարդն աղքատ լինի, նրա հագուստը գրավ չվերցնես: Իսկ եթե վերցնես ետ վերադարձու արևը մայր չմտած, որ նա քան տուն մտնի իր հանդերձներով և օրինի քեզ, և քեզ ողորմություն կլինի քո Տեր Աստծո առջև:»

Թույլ չի տրվում տուն մտնել և գրավն առնել, որպեսզի բռնություն չլինի, այլ լինի կա-

### «...Հասարակությունում օրինականության և իրավակարգի, ինչպես նաև անձի իրավունքների պաշտպանության խնդրում Միմիքար Գոշը նախապատվությունը տալիս է ոչ թե թագավորին, այլ դատական իշխանությանը...»

հետևանքը լինի աշխատողի մահը, արյան վծիր է հասնում հարկադրողին, թե՝ ակամա, թե՝ կամավոր կատարվածի համար, առավել խիստ է դատավճիռը բռնադատողների համար: Իսկ եթե տերը վարձու աշխատողին կամ իր ծառաներին հարկադրի կամ բռնադատի խախտելով ընդունված ավանդույթը, նա պետք է պատասխանատու լինի կամավոր ու ակամա հանցանքների համար սահմանված դատավճիռներով»:

Միմիքար Գոշի «Դատաստանագրքի» նորմերը որոշակիորեն կարգավորում են նաև անձի առողջության ու կյանքի դեմուլցիված ուժնձգություններից պաշտպանվելու հետ կապված հարցերը: Նման արարքները որակելով որպես բրեահրավական, Դատաստանագիրքը սահմանում է խիստ պատիժներ: Սահմանադրության 62 հոդվածը սահմանում է հետևյալը. «Եթե մեկը գավազանով հարվածի իր ծառային կամ աղախնուն, և /սա/ մեռնի նրա ձեռքով տերը վրեժինդրության դատաստանով դատավի», իսկ մեկ այլ հոդվածով նախատեսում է տիրոջ կողմից պատժված մարմնական վնասվածքի հանդեպ ազատություն տրվի տուժածին. «Եթե մեկը հարվածի իր ծառայի կամ աղախնուն աչքին և կուրացնի, աչքի փոխարեն թող ազատություն տա նրան»:

Ժամանակակից տերմինաբանությամբ արտահայտված Դատաստանագիրքը որոշակիորեն սահմանում է նաև անձի բնակարանի և նրա գույքի անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքի վերաբերյալ

մավորապես, դուրս հանվածը գոյության համար անհրաժեշտներից չլինի դարձյալ: Աղքատությունը հաշվի առնելով անհրաժեշտ է աղքատին թողնել օքնանը, և այսպիսով հնարավորինս, ներողամիտ լինել նրանց նկատմամբ: Այսպես վարվելը, համաձայն արդարացի վճռի, նախընտրելի է ենք համար»:

Ուշագրավ է նաև, որ Դատաստանագիրքը նախատեսել է անվճար կրթության իրավունքը, ընդ որում հատուկ հոգատարություն դրսելու աղքատ, չունետ, որը երեխաների նկատմամբ. «Ըստ կանոնական հրամանների, չի կարելի մանուկներին վարձով ուսուցանել:

Եթե որբեր լինեն, տեղին է ամենայն խնամք ցույց տալ նրանց, իսկ եթե որբեր չլինեն միայն նրանց կերակուրն ու հագուստը և հոգավեն: Եթե վճարումակ լինեն և իրենց հոժար կամքով ուսուցանողներին նվեր տան, այդպես արժանի է հոգևոր սերմանելու փոխարեն հնձել մարմնավորը, իսկ եթե աղքատ են պետք չէ ոչինչ պահանջել» /հոդվ.223/: Այսինքն հասարակության սոցիալական անապահով խավից որբերից ու աղքատներից ընդհանրապես ոչինչ չի պահանջում, իսկ մյուսներից, եթե ի վիճակ են, արաջին անհրաժեշտ պարագաները, սնունդ, հագուստ միայն: Ուսուցման համար, որպես մտավոր, հոգևոր գործ, ընդհանրապես արգելվում է որևէ վճար վերցնել:

Ընդհանրապես, Դատաստանագիրքի սոցիալական ուղղվածությունը սատար

կանգնելու և պաշտպանելու սոցիալապես անապահով դասի ներկայացուցիչներին, առավել ցայտուն արտացոլված է Ղատաստանագրի 128 հոդվածում. «Չխախտես եկվորի, որբի և այրու իրավունքը: Օրենքը պատվիրում է դատավորներին զգործել կաշաքռվ և խարեւությամբ ուրիշներին այլ բան ցույց չտալ, եթե դատավորը այդպես վարվի թող պատվագուրկ արվի»:

Իր դարաշրջանի համար չափազանց առաջադիմական այս նորմերը նույնքան անհրաժեշտ և առաջադիմական են նաև մեր օրերում, հատկապես, այսպես կոչված, անցումային հասարակության համար:

Անուսնաընտանեկան հարաբերություններում Դատաստանագիրը սահմանում է անձի կամքի ազատության իրավունքը, այ-

պես, Ղատաստանագրում ամրագրված է անձի իրավունքների պաշտպանության հետնյալ կարեռ սկզբունքը. «Չկա հանցանք, չկա պատիժ առանց օրենքի»: Ահա այդ հոդվածը. «Առանց վճռի պատիժ կամ տուգանք չինի, այլ ըստ անհրաժեշտության» /հոդվ. 2/:

Ղատաստանագիրը որոշակիորեն պաշտպանում է նաև հանցանք կատարած անձի իրավունքները, որպեսզի յուրաքանչյուրը պատասխան տա իր արարքի համար և կատարված հանցանքին հանապատասխան: Այսպես, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում Դատաստանագրում նախատեսված է հիմնական երկու սկզբունք.

ա/ քրեական պատասխանատվության

հիմքում պետք է ընկած լինի մեղքը քրեահրավական իմաստով: Գոշի Դատաստանագիրը սահմանել է մեղքի երեք ձև. «կամավոր» դիտավորություն, «ակամա» անգուշություն և «խառն», որը պարունակում է դիտավորության և անգուշության տարրերը:

Մեկան մեղքի ձևերից, հանցագործություն կատարած մարդը պետք է իր գործողությունների համար հաշիվ տալու և արարքի հետևանքները գիտակցելու հոգեկան - մտավոր կարողություն ունենար, այսինքն քրեական պատասխանատվության ենթարկելու համար հանցագործության սուբյեկտը պետք է մեղսունակ լինի: Մեղսունակությունը կապված էր ինչպես տարիքի /քս Դատաստանագրի 15-ից բարձր լիակատար մեղսունակության հասակն է/, այնպես էլ մարդու հոգեկան - ֆիզիկական պայմանների հետ:

թ/ Երկրորդ հիմնական սկզբունքը, որ ընկած է քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքում, դա պատասխանատվության անհատականացումն է, այսինքն, յուրաքանչյուր մարդ ենթակա է քրեական պատասխանատվության միայն իր կատարած արարքի համար: Այս սկզբունքն ամրագրված է Ղատաստանագրի 127 հոդվածում, որտեղ մասնավորապես ամրագրված

### **«...Ղատաստանագիրը նախատեսել է անվճար կրթության իրավունքը, ընդ որում հատուկ հոգատարություն դրսւորելով աղքատ, չունեոր, որք երեխաների նկատմամբ...»**

սինքն արգելվում է բռնանալ ամուսնության հարցերում նարդու ազատ ընտրության վրա. «Դայտնի է, որ պսակված կամ առանց պսակի բռնապահակությունը գերություն է» /հոդվ. 53/-ի, իսկ մեկ այլ հոդվածում ամրագրված է ամուսնանալու կամավորության սկզբունքը. «...արգելվում է պսակել առանց միջյանց տեսնելու, որովհետև դեռևս անհայտ է կամենում են նրանք առհասարակ անուսնություն, և կամ հավանում են արդյոք իրար, ուստի իրամայում է չտեսածին չառնել» /հոդվ. 192/:

Դատաստանագրի 140-րդ հոդվածը ուղղակիորեն արգելում է բռնությամբ ամուսնությունը. «Եթե մեկ անգամ արդեն խոսք տված և նշանված աղջիկներին ուրիշները հափշտակեն, թող ազատ կամքով աղջկան դարձալ հետ տանեն նրան ում հետ որ նշանված է եղել, և չպահեն բռնության մեջ» /հոդվ. 140/:

Միիրար Գոշի Ղատաստանագրի քրեահրավական նորմերի խորքային վերլուծությունը վկայում է, որ խնդրու հարցում շեշտադրումը նույնպես կատարված է հանցավոր ոտնձգություններից անձի քրեահրավական պաշտպանվածության վրա: Այս

## ՀԱՅ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ե. «Որդիների փոխարեն չպետք է մեռցվեն հայրերը, և որդիները չպետք է մեռնեն իրենց հայրերի փոխարեն, յուրաքանչյուր որ պետք է մահապատիժ ստանա իր գործած մեղքի համար»:

Եվ սա ասվում է այն պատճառով, որ եթե օրենքով մահապատիժ որոշվի և հայրերը, ասենք ստանձնեն մեռնել որդիներին փրկելու համար, ապա չմեռցվեն, եթե մահապարտ է, թող մեռցվի որդին, որպեսզի վճիռը բյուր չլինի: Նույնպես և որդիները չպետք է մեռցվեն իրենց հայրերի փոխարեն: Եթե դատավորները չկարողանան զավակի մահապարտությունը ցույց տալ, իրավունք չունեն հոր փոխարեն դատապարտել: Եվ սա հաստատում օրենք է մեզ նոտ»:

Անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որ նրա մեղավորությունը ապացուցվի դատական կարգով. «Յուրաքանչյուր դատավճիռ պիտի կայացնի ամեն բան քննելուց հետո» /հոդվ. 243/: Որպեսզի արդարացի վճիռ կայացվի, Դատաստանագրքով սահմանված է գործերի քննության կոլեգիալ կարգը. «Դատավորության ժամանակ դատավորը պետք է իր հետ ունենա երկու կամ երեք փորձառու մարդ, և հետո միայն վճիռ կայացնի, որպեսզի դատը լինի արդար, և այդ մարդիկ վկային վճիռի արդարությանը» /Դատաստանագրքի Զ գլուխը/: Բացի դրանից, լիակատար դատաքննության համար «... դատավորը միայն աճքաստանյալի կամ աճքաստանողի խոսքը չլինի, իսկ եթե լսում է թող ուսումնասիրի, բայց վճիռ չկայացնի, մինչև նրանց երկուսին միասին կատարելապես չըննի» /նույն տեղը/:

Դատավարության մասնակիցներն, ըստ Դատաստանագրքի, հավասար են օրենքի և դատարանի առջև անկախ իրենց սոցիալական և գույքային դրությունից. «Դատավորը իր անձի օգուտը չի ետամտի, այլ կարծիքը հօգուտ շատերին դարձնի և դատը կայացնի արդար վճռով: Եվ թեպետ ամեն բանում ողորմածությունը պետք է հիշել, սակայն դատ վարելիս պետք է գորոյշ լինել երկու կողմերի նկատմամբ էլ արդարությունը ուղղի և հստակ պահելու համար» /գլուխ Զ/: Բայց ավատատիրական հասարակարգում Դատաստանագրքի նշված նորմը, ըստ էու-

թյան, անհրագործելի էր: Ինչպես նշում է ն. Թորոսյանը, այդ սկզբունքը գործում էր միայն այն դեպքում, երբ դատարանի առաջ կանգնած կողմերը պատկանում էին միևնույն դասին շահագործող կամ շահագործող, հակառակ դեպքում դատարանը, որպես տիրապետող դասակարգի մեջանցիքի մի մասը, այսպես թե այնպես, պաշտպանում էր իր դասակարգի շահերը<sup>4</sup>: Այդպես էր, անենուր, այդպես էր նաև Դայաստանուն:

Դատաստանագիրքը սահմանել է նաև դատավարության նորակցության սկզբունքը, որպեսզի կողմերը հնարավորություն ունենան իրենց փաստարկներն ու տեսակետներն արտահայտեն գործի վերաբերյալ. «Կողմերից յուրաքանչյուրին թույլ տան ըստ կարգի խոսելու, մեկը խոսի, մյուսը թող լրությամբ սպասի իր հերթին, որպեսզի ճշմարտությունն ստուգելով նրանով վճիռ կայացվի» /նույն տեղը/:

Պատժաչափը պետք է համարժեք լինի կատարված արարքի վտանգավորությանը. «Եսկ պատիժը պետք է սահմանվի հասցրած վնասի համեմատ... յուրաքանչյուրը պիտի հասուցի իր արած գործերի համեմատ» /հոդվ. 243/: Սակայն, պատիժը ինքնանպատակ չէ, այն կոչված է ուղղելու և վերադաստիրակելու հանցագործին. «Դատավորը պետք է բանու ունենա, որպեսզի նրանով խրատի ստահակներին» /Դատաստանագրքի Զ գլուխը/:

Այսպիսով, Դատաստանագրքի նորմերի իրավաբանական բովանդակության վերլուծությունից կարելի է եղուակացնել, որ միջնադարյան հայ իրավունքի կարերուագույն աղբյուրներից մեկը Մխիթար Գոշի Դատաստանագրքը որոշակիորեն կարգավորել և ամրագրել է անձի իրավունքների պահպանան ու պաշտպանության հետ կապված հարցերը հիմնականում ավատատիրական իրավահայեցողության շրջանակներում: Սակայն, ինչպես նշեցինք, անձի իրավունքներից մի մասը, որոնք ամրագրված են «Քայոց Դատաստանագրքում» /օրինակ սոցիալական իրավունքները, օրենքի և դատարանի առաջ հավասարության սկզբունքը և այլն/ երևան եկան հետագա երկար ու ձիգ դարերի ընթացքում:

<sup>4</sup> Տես Խօսրո Տօրօսյան. Ծան և պարագաներ Հայության պատմության մեջ. Երևան, 1985, 211-212 էջերը:

# Մարդու իրավունքների ժամանակակից ընկալման հիմնական ասպեկտները

Հակոբ ԹԱՐԵԿՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտ

**Ժամանակակից աշխարհում բազմազան են ընկալուները՝ մարդու իրավունքների եռթյան և դրանց սոցիալական նշանակության մասին<sup>1</sup>:**

Հենց դրանով է պայմանավորված, որ Մարդու իրավունքները, դրանց սոցիալական արմատները և նշանակությունը մարդկության պատմական զարգացման հավերժական հիմնահարցերից են: Մարդու իրավունքները բազմարնույթ և բազմաշերտ են<sup>2</sup>: Տարբեր ժամանակաշրջաններում մարդու իրավունքների հիմնահարցերը հիմնականում մնալով բաղարական-իրավական տեսադաշտում, այդուհանդերձ, մերթ կրում են կրոնական, մերթ էթնիկական և մերթ փիլիսոփայական երանգավորում պայմանավորված դարաշրջանին հարիր զաղափարախտությամբ:

Մարդու իրավունքների բացառիկ կարևորությունը և նշանակությունը սոցիալական կյանքում պայմանավորված են դրանց բնական և անօտարելի հատկանիշներով, որոնք համապատասխանում են մարդու եռթյանը: Մարդու իրավունքները նրա բնականոն կեցության, ինքնահաստատման միջոց են, հասարակական կյանքում նրա ինքնիշխան կամքի և ազատության դրսևորման համեմությանը չափորոշիչ: Մարդու իրավունքները իրավունքի, որպես սոցիալական երևույթի, անբաժան հատկանիշը և իրավունքի եռթյան արտահայտման սուբյեկտիվ (անհատականացված) դերն են: Գործոն իրավունքով անրագրված մարդու իրավունքները որպես նյութական և ոչ նյութական (հոգևոր, ճշակութային) բարիքներ ձեռք բերելու հնարավորություն, իրականացվում են սուբյեկտիվ իրավունքի՝ մարդու իրավունքների միջոցով:<sup>3</sup> Հետևաբար, ինչպես անհ-

նարին է իրավունքն առանց մարդու իրավունքների, այնպես էլ անհնարին են մարդու իրավունքներն առանց առօդիտիվ իրավունքով անրագրված իրավունքների: Եթե մարդու գրկված է իրավունքներից (օրինակ՝ ստրուկտորը Շին Չոռոմում), ապա նա դադարում է լիարժեք մարդկային անձնավորություն լինելուց և հավասարվում է «խոսող գործիքի»:

Թերևս այդ հանգամանքով է պայմանավորված «մարդու իրավունքներ» հասկացության վերաբերյալ մնտեցումների և հայցակարգերի բազմազանությունը:

Տեսության մեջ և պրակտիկայում օգտագործվում է նաև «մարդու իմանական իրավունքներ» հասկացությունը: Ի՞նչ է մարդու իմանական իրավունքը: Այն կարող է բնորոշվել տարբեր կերպ, ինչն էլ ապացուցվում է գիտական իրավարակումներով<sup>3</sup>: Այնուամենայնիվ, գոյություն ունեցող շատ բնորոշումների կարե-

<sup>1</sup> Տես՝ Լукашев Е.А. Человек, право цивилизации: нормативно-ценностное измерение. М., 2009, с. 11-13.

<sup>2</sup> Տես Երիցյան Ա.Յ. Մարդու իրավունքների և դրանց պահպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում: Երևան, 2007, էջեր 5-13: Նույնի Մարդու իրավունքները տեսության և պրակտիկայի հիմնահարցեր: Երևան, 1999, էջեր 7-22: Այվազյան Վ. Ն. Մարդու իրավունքներ: Ուսումնական ծերնարկ, Երևան, 2007, էջեր 12-17: Права человека. Под ред. проф. М. Ф. Чудакова. М., 2006, с. 11-19; Общая теория прав человека. Под ред. Е. А. Лукашева. М., 1996, с. 1-5; Права человека. Минск, 2002, с. 9-16.

<sup>3</sup> Конституция Российской Федерации. Науч.-практ. комментарии / Под ред. и со вступ. ст. Б. Н. Топорина. К., 1997, с. 169; Бахин С. В. О классификации прав человека, провозглашенных в международных соглашениях // Правоведение, 1991, N 2, с. 47-48; Стремоухое А. А. Основные права человека: сущность и содержание // Сб. науч. трудов Санкт-Петербургской Академии права и бизнеса, СПб, 2001, с. 182-185.

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

լի է համաձայնել՝ միայն մասամբ և որոշակի վերապահումներով, քանի որ դրանք լիովին չեն արտահայտում այդ հասկացությունը, օրինակ՝ **Ե. Ա. Լուկաշևայի** տված բնորոշումը: Նա գրում է. «Սեր կարծիքով մարդու հիմնական իրավունքները ասելով պետք է հասկանալ այն իրավունքները, որոնք պարունակվում են պետության սահմանադրությունում և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթրերում»<sup>4</sup>: ճիշտ լինելով իր ձևական (տեխնիկական-իրավաբանական) հատկանիշներով՝ այն ներ է բովանդակային առումով, չի բացահայտում հիմնական իրավունքների եւթյունն ու նշանակությունը:

Նման թերություններից գերծ է **Յու. Վ. Տրոշկինի** կողմից ձևակերպված բնորոշումը, նա համարում է, որ հիմնական իրավունքները նրանք են, որոնք ամրագրված են սահմանադրությունում և մարդու իրավունքների մասին կարևորագույն միջազգային փաստաթրերում, սահմանում են հասարակության մարդասիրական (հումանիստական) իդեալները, սահմանափակում իշխանությունը և պաշտպանում մարդուն նրա կամայականությունից<sup>5</sup>:

Դամդիպում են բնորոշումներ, որոնցում շեշտվում է հիմնական իրավունքների սոցիալական բաղադրիչը: Յեղինակներից մեկը պնդում է, որ հիմնական իրավունքները համաշխարհային հանրության կողմից ճանաչված այն չափորոշիչներն ու արժեքներն են, որոնք ամերամայական իշխանությունը և պաշտպանում մարդուն նրա կամայականությունից<sup>6</sup>:

Ի մի բերելով վերոշարադրյալ՝ կարելի է առաջարկել հիմնական իրավունքների հետևյալ բնորոշում՝ **մարդու հիմնական իրավունքները պետությունների սահմանադրություններով**, նաև միջազգային հանրածանաչական ակտերով սահմանված՝ անհատի անօտարելի, սոցիալապես անհրամեշտ ու պետության կողմից երաշխավորված հնարավորություններն են՝ ազատ, գիտակցված և պատասխանատու կերպով տիրապետելու կենսականորեն կարևոր նյութական ու հոգևոր բարիքներն:

Այսպիսով՝ մարդու այլ իրավունքների համեմատ, հիմնական իրավունքների սոցիալական ու իրավական առանձնահատկությունները Դայաստանում պայմանավորված են դրան-

ցով կարգավորվող համապատասխան հասարակական հարաբերությունների բնույթով ու նշանակալիությամբ, դրանց սոցիալական բովանդակությամբ, սահմանադրական իրավունքի համակարգում իրենց դերակատարությամբ և մարդու այլ իրավունքների համադրական առանձնահատուկ բնույթով: Այլ կերպ՝ մարդու հիմնական իրավունքները կարգավորված են հասարակական մարդու փոխարարելությունների տեսակետից առավել էական, կենսականորեն կարևոր հարաբերությունների ոլորտը, արտահայտում են անհրամեշտ բարիքներից ու արժեքներից օգտվելու սոցիալական հիմնական հնարավորություններուն: Իրենց հասարակական-քաղաքական կարևորության շնորհիվ դրանք ամրագրվում են սահմանադրություններում և միջազգային իրավական ակտերում: Յիմնական իրավունքները որոշիչ ու բնորոշիչ են ճյուղային օրենսդրություններում ամրագրված նյութու բոլոր իրավունքների համար:

Յուրաքանչյուր հետազոտողի համար ակնհայտ է դասակարգման առավելությունները, երբ որպես տարանջատման հիմք է ընդունվում հստակորեն որոշարկված ձևական գործնքը: Նման դեպքերում էականորեն հեշտանում է մարդու իրավունքների՝ հիմնականների ու ոչ հիմնականների բաժանման ձևական-տրամաբանական գործողությունը: Սահմանադրության շրջանակներից դուրս գտնվող իրավունքների տարանջատման չափանիշի որոնումը հավելյալ դժվարություններ է հարուցում, քանի որ ամենակին էլ ոյուրին չէ բացահայտել մարդու հանար այս կան այն իրավունքի կենսական այն կարևորությունը, որը թույլ կտա այն դասել հիմնականների շարքին: Սահմանադրական իրավունքի մասնագետները նշում են մի շարք բովանդակային գործոնները, որոնք թույլ են տալիս մարդու իրավունքների հսկայական թվից առանձնացնել հիմնականները: Դրանք հետևյալ գործոններն են:

**1) իրավունքի նշանակալիության աստիճանը մարդու համար**

**2) իրավունքի նշանակալիության աստիճանը հասարակության համար**

**3) իրավունքի համամարդկային բնույթը**

**4) մարդու իրավունքների համակարգում հիմնական իրավունքների կարևոր տեղը:**

Սահմանադրության մեջ անհնարին է անրագրել մարդու բոլոր իրավունքները, եթե

<sup>4</sup> Լукашева Е. А. Права человека: понятие, сущность, структура // Общая теория прав человека. М., 1996, с. 19.

<sup>5</sup> Трошкин Ю. В. Право человека. Уч. пособие. М., 1997, с. 31.

<sup>6</sup> Кочев В. А. Категории и принципы конституционно-правового института прав и свобод человека и гражданина // Проблемы российского государственного строительства и законодательства Сб. науч. трудов. Владивосток, 1994, с. 24.

նույնիսկ այն դարձնենք բազմահատոր: Այդ իսկ պատճառով, ինչպես շեշտում է **թ. 1. Տոպորնինը**, բարձրագույն օրենսդրական մակարդակով ամրագրվում են միայն այն իրավունքները, որոնք մարմնավորում են մարդկային գոյի բարձրագույն իդեալները, հասարակության մարդասիրական (հումանիստական) արժեքները, որոնք պաշտպանում են մարդուն իշխանության կամայականությունից և անօրինություններից: Այս կապակցությամբ զանազան պետությունների հիմնական իրավունքների ցանկերի (կատալոգների) համեմատությունից շատ ավելի քիչ տարբերություններ են բացահայտվում, քան մյուս բոլոր իրավունքների ցանկերի համեմատությունից<sup>7</sup>:

«Մարդու համար իրավունքների նշանակալիություն» հասկացությունն օրենքում չի հատկանշվում: Այն բնորոշվում է ըստ սոցիալական կյանքի և իրավակիրառ պրակտիկայի:

Յիմնական են համարվում մարդու այնպիսի իրավունքները, որոնք անհրաժեշտ նախադրյալներ են ապահովելու համար՝

**ա) մարդու արժանապատիվ և ազատ գոյությունը.**

**բ) իր ապրած հասարակության կառուցվածքի ու կառավարման հարցերի լուծմանը մասնակցելու հնարավորությունը,**

**գ) տնտեսական և սոցիալական այն պայմանները, որոնք անհրաժեշտ են նրան կենսականորեն կարևոր նյութական ու հոգևոր պահանջմունքները բավարարելու համար,**

**դ) ազատության այնպիսի ոլորտ, որում սահմանափակված են պետական միջամտությունն ու վերահսկողությունը:**

Այդ իսկ պատճառով, ինչպես գրում է **Ֆաբրիցիոս** գերմանացի ժողովուրդը մարդու անձեռնմխելի և անօտարեկ իրավունքները համարում են ցանկացած մարդկային համակեցության, աշխարհում խաղաղության ու արդարության իհնքը: Բացի դրանից, իհնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր իշխանության ու արդարադասության հանար որպես անհիմականորեն գործող իրավունքը<sup>9</sup>:

Յիմնական իրավունքները հանդիսանում են անհատի սահմանադրա-իրավական կարգվիճակի առանցքը: Դրանցում պարունակվում են մարդու բնականոն կենսագործումներության համար անհրաժեշտ բազում այլ իրավունքների գոյացման հնարավորությունները: Այդ իրավունքները շատ կարևոր են անհատի, այլ մարդկանց, հասարակության ու պետության հետ շփման առումով<sup>10</sup>:

Յիմնական իրավունքները սուբյեկտիվ իրավունքներ են: Այս ծանրատությունը, որն այսօր միանգանայն ակներև է, պատմական զարգացման ընթացքում բազմիցս է վիճարկվել: Միայն 20-րդ դարի սկզբին, սուբյեկտիվ իրավունքի մասին՝ ընդհանրապես, և հիմնական իրավունքի մասին երկար վեճերից հետո, բյուրեղացավ հիմնական իրավունքների որպես սուբյեկտիվ իրավունքների մասին նոր մնացողությունը, և այսօր մարդու կարող է վկայակոչել դրանք իշխանական կառուցման առջև:

Յիմնական իրավունքները կազմում են սահմանադրական իրավահարաբերությունների հիմքը: Իրավահարաբերությունները հանդիսանում են իրավունքների գոյության (իրագործման) ձև: Ընդ որում, սահմանադրական իրավունքի շատ մասնագետներ (Օ.Օ. Միրոնովը, Վ. Ա. Ռժևսկին, Վ. Ա. Բոբրովը, Յու. Պ. Երյոմենկոն, Տ. Դ. Զրածևսկայան, Լ. Ղ Վուսողինը, Վ. Ֆ. Կուտուզը, Օ. Ե. Կուտաֆինը և այլք) համարում են, որ եթե մարդու իրավունքները բաժանվում են հիմնականների և ցոլուայինների, ապա իրավահարաբերությունները ևս բաժանվում են ընդհանուրների և կոնկրետ ցոլուայինների<sup>11</sup>: Եթե հիմնական, այդ թվում նաև սահմանադրական իրավունքները, ինչպես դա միահամուր կերպով ճամաչում են բոլորը, համընդիանուր են, հավասար ու մշտական պատկանելով բոլորին ու յուրաքանչյուրին, ապա դրանք նիշնորդականացնող իրավահարաբերություններն ել հանդես են գալիս որպես ընդհանուր, անփոփոխ (ստատիկ) ու անժամկետ՝ ընդգրկելով այլ իրավունքները կրող բոլոր անհատներին<sup>12</sup>: Ընդ-

<sup>7</sup> Топорнин Б. Н. Декларация прав человека: новые подходы // Права человека: проблемы и перспективы. М., 1990, с. 23.

<sup>8</sup> Мутагирова Д. З. Права и свобода человека. М., 2006.

<sup>9</sup> Фабрициус Ф. Положение рабочего в системе рыночного хозяйства и общепризнанные права человека // За рубежом, 1992, N1, с. 149.

<sup>10</sup> Хесце К. Основные конституционные права ФРГ. Под ред. Н. А. Сидорова, М., 1981, с. 148-149; Колотова Н. В., Лукашева И. А. Структура прав человека и гражданина // Права человека. Учебник для вузов. Отв. ред. Е. А. Лукашева. М., 1999, с. 136.

<sup>11</sup> Козлова Е. П., Кутафин О. Е. Конституционное право России- Учебник, 3-е изд., перераб. и доп. М., 2003, с. 22-23.

<sup>12</sup> Матузов Н. И. Личность, права, демократия: теоретические проблемы субъективного права. Саратов, 1972, с. 176.

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

համուր հարաբերությունները երեմն անվանվում են բացարձակ հարաբերություններ: Այդ իրավահարաբերությունները ծագում են մարդու և պետության միջև՝ առաջացնելով պետության պարտականությունը՝ պահպանել և պաշտպանել յուրաքանչյուր առանձին մարդու իրավունքները: Մարդ կարող է ոչ թե խնդրել, այլ պահանջել պաշտպանել իր այն շահերը, որոնք պետությունը ճանաչել է որպես բնական ու անքաջանելի: Հասկանալի է, որ անհատի այնպիսի իրավունքները, ինչպիսիք են կյանքի, պատվի, արժանապատվության, ազատության, ընտանիքի, սեփականության, բնակավայրի և այլ իրավունքները, գտնվում են այդ իրավունքները կրողների և դրանց պաշտպանությանը կոչված պետության միջև իրավահարաբերությունների համակարգում: Եթե այդ իրավունքները խախտվում են անզգուշությանը կամ գիտակցարար, ապա ծագում են դրանց վերականգնմանն ուղղված կոնկրետ իրավահարաբերություններ:

Պետք է համաձայնել **Ն. Ի. Մատուլզովի** այն կարծիքին, որ ընդհանուր և կոնկրետ իրավահարաբերություններն այն են, որ եթե առաջնները կապված են հիմնական իրավունքների իրացնան այնպիսի ձևերի հետ, ինչպիսիք են պահպանումը, կատարումը և օգտագործումը, ապա՝ երկրորդները՝ միայն կիրառման հետ: Համապատասխանաբար, ընդհանուր իրավահարաբերությունները կրում են իրավապահպան բնույթ, իսկ կոնկրետ իրավահարաբերությունները՝ իրավակիրառականը<sup>13</sup>: Սարդիկ հաճախ չեն էլ նուածում իրենց հանդիսանում են ընդհանուր, թե կոնկրետ տեսակի իրավահարաբերությունների սուրբեկուներ, այնքան անմկան ու սովորական են դրանք: Այդպիսի իրավահարաբերությունները կազմում են մարդու պարտադիր ներկայության միջավայրը: Եթե իրավունքների իրականացման գործընթացը տեղի է ունենում առանց խափանումների, ապա մարդիկ ուղղակի մոռանում են, որ գտնվում են օրենքի անտեսանելի պաշտպանության ներքո: Այլ է դրությունը, եթե մարդու հիմնական իրավունքների իրացնան գործընթացը խախտվում է կամ վիճարկվում: Այս դեպքում ծագում են կոնկրետ իրավապաշտպան իրավահարաբերություններ:

Ընդհանուր իրավահարաբերությունների սահմաններում պետությունը ոչ թե պարզապես կաշկանդված է մարդու ընդհանուր իրավունքներով, այլ սահմանափակված է այդ իրավունքներով: Այն չի կարող վերացնել, փոփոխել, սահմանափակել դրանք կամ որևէ մեկին գրկել այդ իրավունքներից: Ընդհակառակը, լինելով այդ իրավահարաբերությունների կողմանությունը բազում պարտականությունները ունի մարդու հիմնական իրավունքների իրացնան, պահպաննան, իրավական պաշտպանության և երաշխավորման առումով: Ինչ խոսք, փոխադարձ կապ և պատասխանատվություն գոյություն ունեն ոչ միայն պետության ու մարդու միջև, այլև անհատների միջև, այսինքն՝ ինչպես ուղղահայց, այնպես էլ հորիզոնական կապ:

**Սարդիկ հիմնական իրավունքները՝ իրենց համակցությամբ, ապահովում են մարդու և հասարակության առաջնարաց զարգացումը, և դրանց իրականացմանը խոչընդոտելը խարիսլում է իրավունքների համակարգային միասնականությունը և վտանգ է ներկայացնում մարդու և հասարակության բնականն կեցության համար:**

Ընդունված է հիմնական իրավունքների համարել նաև այն իրավունքները, որոնց նշանակալիությունը արտահայտվում է նրանով, որ իրենց դրանց իրագործումն է անհրաժեշտ ժողովրդավարական պետությանը բնորոշ էական հատկանիշների կիրառման համար: Զ՞ո՞ր պետության և հասարակության գոյությունն ապահովվում է բոլոր կենսոլորտներում՝ տնտեսական, քաղաքական, հոգևոր, մարդկանց համակցված գործունեության շնորհիվ: Այդ իսկ պատճառով, օրինակ, առանց գործարարության ազատության իրավունքի անկարելի է ստեղծել ժամանակակից պետության գոյության տնտեսական հենք, իսկ առանց քաղաքացների ընտրական իրավունքի իրագործման անհնարին է հասարակությունը կառավարող կառույցների ձևավորումը և այլն:

Ինչպես գրում է **Լ. Դ. Կուլտովինը**՝ իրավունքները հիմնական են կոչվում այն պատճառով, որ դրանք միջնորդ են հանդիսանում հասարակության ու մարդու միջև առավել էական, արմատական հարաբերություններում<sup>14</sup>: Այդ հա-

<sup>13</sup> Матузов И. И. Права человека и общерегулятивные правоотношения // Правоведение, 1996, N3, с. 44.

<sup>14</sup> Воеводин Л. Д. Юридический статус личности в России. Уч. пособие, М., 1997, с. 143-144;

Кутафин. О. Е. Основные права, свободы и обязанности граждан в СССР / Сов. государственное право. Учебник, 2-е изд., изм. и доп. М., 1985, с. 164.

րաբերությունները կամխորոշված են անհատական ազատության ոլորտում, արտադրության, սեփականության, համապատասխան բարիքների բաշխման ու սպառնան ոլորտներում, մշակույթի և հոգևոր, հասարակական ու քաղաքական կյանքի ոլորտներում մարդու պետության կողմից ճանաչվող անառարկելի կարգավիճակով<sup>15</sup>: Հիմնական իրավունքները հանդիսանում են իրավունքի համակարգի և օրենսդրության համակարգի ակտիվ կենտրոններ, քանի որ արտահայտում են մարդու բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ առավել կարևոր պահանջնունքները: Դրանք նախաստեղծ են և ծնուն են ածանցյալ (Ծոյւղային) իրավունքներ, ինչպես նաև դրու են մարդու ազգային իրավական կարգավիճակի հիմքերը: Շնորհիվ հետո այս հանգամանքների՝ մարդու հիմնական իրավունքները ոչ միայն ճանաչվում, այլև պաշտպանվում են պետության կողմից՝ որպես նրա գոյության անհրաժեշտ պայման<sup>16</sup>:

**Սարդու հիմնական իրավունքների կատարման ու պաշտպանության մասին կարելի է խոսել միայն հասարակության հիմնախնդիրների շրջանակներում:** Հանդիսանալով քաղաքական, տնտեսական ու բարոյական առաջընթացի ելակետ՝ դրանք ունեն պատմական որոշակիություն և գտնվում են մշտական գարգարման ընթացքում: Ուստի, մարդու իրավունքները չեն կարող մեկընդիմշտ նույնը լինել: Դրանց լիակատար իրականացումն այն իրեալն է, որին ձգուում է հասարակությունը:

Ցույց տալով հասարակական էվոլյուցիայի ուղղությունը՝ մարդու իրավունքները դարձան քաղաքական, տնտեսական, սոցիալական, հոգևոր վերափոխումների շարժիք ուժը և գործելակերպի պրակտիկ ձեռնարկ, սոցիալական կյանքի հումանիզմացման միջոց:

ՀՀ Հիմնական օրենքն առաջին ամսամ ամրագրում է մարդու իրավունքների բնական բնույթը: Այն կամխորոշում է դրանց գերակայությունը պետական իշխանության նկատմամբ, այդ իշխանության կապն ու կախվածու-

թյունը մարդու իրավունքներից ու ազատություններից: Սարդու իրավունքների ու ազատությունների բնական բնույթի ճանաչումը նշանակում է իրաժարում մարդուն իշխանության կամ օրենսդրի կողմից շնորհված իրավունքների տեսությունից: Այդ իրավունքները ոչ թե շնորհված են իշխանության կողմից, այլ ծագում են առանց նրա համաձայնության, նրանից անկախ և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է միայն ճանաչել այդ իրավունքները, ամրագրել սահմանադրության մեջ և պաշտպանել իր ողջ գորությամբ: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազն պարտքն է: Այսպիսով՝ բնական, անօտարելի իրավունքներն ամբողջովին նույնանում են հիմնական իրավունքների հետ<sup>17</sup>:

«Դրանք պատկանում են մարդուն ի ծնե և ծննդյան իրավունքով: Այդ իրավունքները շնորհված չեն իշխանության կողմից, ծագում են նրանից անկախ և առանց նրա համաձայնության և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք իր սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազն պարտքն է: Բնական, անբաժանելի, անօտարելի իրավունքներն սկսեցին ամբողջապես նույնանալ հիմնական, հիմնարար իրավունքների հետ»<sup>18</sup>:

Հիմք ընդունելով մարդու հիմնական իրավունքների բնական բնույթը՝ ՀՀ Սահմանադրության դրույթները շեշտում են դրանց հատուկ նշանակալիությունը և հիմնարար (ֆունդամենտալ) բնույթը: Ինչպես արդարացիորեն նշում է Ե. Կողովաճ՝ հիմնական իրավունքներն այն իրավունքներն են, որոնք անխօնի են մարդու և քաղաքացու եռթյունից, պատկանում են յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա կողմից սեփական իրավագործության իրագործումից, և կազմում են նրա անբաժանելի հատկանիշը<sup>19</sup>:

Սարդու իրավունքները հիմնական են կոչվում այն պատճառով, որ ընկած են իրավունքի

<sup>15</sup> Էնզեև Բ. Փ. Կոնստитуция. Դեմոկրատիա. Права человека. М., 1992, с. 130-150.

<sup>16</sup> Козлова Е. И. Конституционные права и свободы человека и гражданина // Государственное право Российской Федерации. М., 1996, с. 209.

<sup>17</sup> Конституция Российской Федерации. Науч.-практ. комментарии / Под ред. и со вступ. ст. Б. Н. Топорнина. М., 1997, с. 32.

<sup>18</sup> Конституция Российской Федерации. Науч.-практ. комментарии / Под ред. и со вступ. ст. Б. Н. Топорнина, Вступительная статья, с. 32.

<sup>19</sup> Козлова Е. И. Основы правового статуса личности как государственно-правовой институт. Гражданство Российской Федерации // Государственное право Российской Федерации. Учебник / Под ред. О. Е. Кутафина. М., 1996, с. 164.

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տարրեր ճյուղերի նորմերից բխող մյուս բոլոր իրավունքների ու ազատությունների հիմքում, պատկանում են ողջ բնակչությանը և ամրագրվում են սահմանադրության մեջ՝ որպես հիմնական օրենք<sup>20</sup>: Այդ իրավունքները կազմում են մարդու իրավական կարգավիճակի կորիզը, միջուկը, որը բնորոշվում է իրավունքի առանց բացառության բոլոր ճյուղերի նորմերի համալիրով:

Հիմնական իրավունքները հանդիսանում են իրավունքի համակարգի, օրենսդրության համակարգի ակտիվ կենտրոնները, քանի որ արտահայտում են մարդու բնականոն կենսագործունեության համար առավել նշանակալից պահանջմունքները: Դրանք նախասկիզբ են և ժողով են ածանցյալ (ծչուղային) իրավունքներ, դուռը են մարդու ազգային իրավական կարգավիճակի հիմքը: Նենց նշված հանգամանքների շնորհիվ էլ մարդու հիմնական իրավունքները ոչ միայն ժամանակում, այլև պաշտպանվում են պետության կողմից՝ որպես նրա գոյության անհրաժեշտ պայման<sup>21</sup>:

Այս հանգամանքից, որ հիմնական իրավունքները բազա են հանդիսանում այլ իրավունքների համար, ամենակին չի բխում, որ վերջինները առաջինների մասն են: Դրանց հարաբերակցությունն ամրողի և մասի հարաբերակցություն չէ: Եվ հիմնական, և իրավունքի ճյուղերի նորմերով սահմանված իրավունքները կրուն են ինքնուրույն բնույթ: Իրավունքների այս երկու խմբերի հարաբերակցությունը կայանում է նրանում, որ հիմնական իրավունքները կանխորշում են ոչ միայն կոնկրետ իրավունքի, այլև նարդու իրավունքների ողջ համակարգի բովանդակությունը և գլխավոր դերը:

Մարդու հիմնական իրավունքների տարածառումը ամենակին չի նշանակում նաև, որ մյուս իրավունքները «երկրորդական» են, նվազ նշանակալից, իրենց ապահովման համար պետությունց պակաս ջանքեր պահանջությունը: Դա նշանակում է միայն, որ հիմնական իրավունքները հանդիսանում են այն հողը, որի վրա աճում են մյուս իրավունքները, որոնք անհրաժեշտ են մարդու բարպիք գոյության համար: Հիմնական իրավունքից կարող են

առաջանալ բազում այլ իրավունքներ:

Մարդու հիմնական իրավունքներն ունիվերսալ են և կիրառելի ամենուրեք՝ անկախ այս կամ այն երկրի մակարդակից և առանձնահատկություններից: Դրա հետ մեկտեղ հենց այդ ունիվերսալությունը հաճախ խոչընդոտ է հանդիսանում դրանց իրացման համար, չեղարաքանչյուր ժողովուրդ ունի բարու և չարի իր պատկերացումը, իր լեզուն, և հարևաններն այդ լեզուն հաճախ չեն հասկանում: Մարդու իրավունքների վերաբերյալ մոտեցումները միաննան չեն: Այսպես մահմեդական երկրնեուում ամձին այս կամ այն հիմնական իրավունքով օժտելը զգալի չափով կախված է նրա կրոնական և սեռական պատկանելությունից: Մահմեդականները որոշակի առավելություններ ունեն ոչ մահմեդականների հանդեպ, դասական մահմեդական իրավունքի համաձայն տղամարդը գերակայություն ունի կանանց նկատմամբ: Ժառանգորդ կինն ստանում է տղամարդու ստացած բաժնի միայն կեսը: Գոյություն ունեն կանանց իրավունքների այլ սահմանափակումներ<sup>22</sup>:

**ԵՎ ՎԵՐՋԱՎԵՏԱ, ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԲՆՈՐՈՂ ԵՆ ԲԱՐԾՐ ՄՅՈՒԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԲՈՎԱՆԴԱԿԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐՈՐ ԲՆՈՎԻՔ, ԻՆՉՎԵՍ ՆԱև ԵՐԱՀՅԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՅՈՒՐԻՎՈՐ ԲՈԼՈՐ ՄԽՅՈԳՆԵՐՈՎ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆԱԿԱՆ**<sup>23</sup>:

Այսպիսով՝ մարդու իրավունքների սոցիալական նշանակությունը պայմանավորված են դրանցով՝ կարգավիրվող հանապատասխան հասարակական հարաբերությունների բնույթով ու նշանակությամբ, իրավունքների սոցիալական բովանդակությամբ, մարդու մյուս իրավունքների համեմատ իրավունքի համակարգում հիմնական իրավունքի գրադարած կարևորությունով:

Մարդու հիմնական իրավունքները՝ քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութայինն իրավունքները փոխկապակցված, միասնական և ամբողջական համակրող են, հետևաբար դրանք բոլորը ել առաջնային և դատաքննելի են:

<sup>20</sup> Конституционный статус личности в СССР. Под ред. Н. В. Витрука, В. А. Масленникова, В. Н. Топорнина. М., 1980, с. 68; Советское государственное право / Под ред. Е. И. Козловой, М., 1983, с. 195-196; Хазов Е. Н. Юридические гарантии основных прав, свобод и обязанностей человека и гражданина. Автореф. канд. дисс., СПб, 1997, с. 13.

<sup>21</sup> Козлова Е.И. Конституционные права человека и гражданина // Государственное право Российской Федерации, М., 1996, с. 299.

<sup>22</sup> Торошкян Ю. В. Права человека. Уч. пособие, М., 1997, с. 32; Чиркин В. Е. Конституционное право зарубежных стран. Учебник, 3-е изд. перераб. и доп. М., 2001, с. 61.

<sup>23</sup> Мостовщиков И. В. Права личности в России: их обеспечение и защита органами внутренних дел. Волгоград, 1997, с. 55.

# Միջազգային քաղաքացիական դատավարություն. հասկացությունը, դերը և նշանակությունը

Տաթևիկ ԱՍԱՏՐՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Ցուրաքանչյուր իրավական համակարգում և իրավունքի ձյուղում արձանագրվում են իրավունքի այս կամ այն ձյուղի նորմերի բովանդակությունը, իրավունքի համակարգում նրա տեղը, դերը և նշանակությունը, ինչպես նաև իրավակիրառման և ամբողջապես իրավունքի իրականացման գործընթացի բովանդակային բնույթը սահմանող հիմանարար եղակետներ: Իրավունքի ձյուղի, նրա նորմերի բովանդակությունում առարկայացված և արտացոլված այդպիսի եղակետային դրույթները ստացել են իրավունքի սկզբունքներ անվանումը: Իրավունքի Եղայունը և սոցիալական նշանակությունը բացահայտվում և կոնկրետացվում են մի շարք իրավական երևոյթներում, նախնակաց նրա սկզբունքներում<sup>1</sup>:

Իրավունքի այս կամ այն ճյուղի առանձնահատկությունը առավել տեսանելի արտահայտվում է նրա սկզբունքներում: Իրավունքի տեսությունում սկզբունքների տակ հասկացվում են նրա բովանդակությունը, հիմնանդրույթները, նրանում ամրապնդված հասարակական օրինաչափությունների բնութագրիչը կազմող, իրավունքում արտահայտված ելակետային նորմատիվ-դեկավար դրույթները: Սկզբունքը այն է, ինչ ճեղքում է իրավունքը, երևան է թերում նրա բովանդակությունը: Սկզբունքներում կարծես թե պարզորոշվում են ինչպես իրավունքի ընդհանրապես, այնպես էլ նրա կոնկրետ ճյուղի բնութագրիչ հատկանիշները: Նրանք կարծես թե լուծված են իրավունքում, տարածված են նրանում, իրենցով պարզորոշվում են բոլոր կամ գրեթե բոլոր իրավական նորմերը: Դամապատասխան իրավունքի ճյուղում ներառված նորմերի մեջամասնությունը ձևավորվում է ճյուղի այս կամ այն սկզբունքի կամ սկզբունքների խմբի ազդեցությամբ և դրանց գարգացման

արդյունքում:<sup>2</sup> Սկզբունքը եզրույթը ունի լատինական ծագում (լատ.-principium) և թարգմանաբար նշանակում է «հիմք», «նախակիզբ»: Այդ բառի ստուգաբանական նշանակությունից ելնելով՝ ՄՔԴ սկզբունքներ են անվանվում նրա հիմնակազմ դրույթները, հիմնական իրավական գաղափարները, որոնք ներթափանցում են ՄՔԴ բոլոր ինստիտուտներ և սահմանում են ՄՔԴ այնպիսի կառուցվածք, որը ապահովում է օրինական և հիմնավոր ակտերի կայացում և դրանց կատարում<sup>3</sup>:

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղի սկզբունքները կարևոր դեր ունեն տվյալ ճյուղի նորմատիվային հիմքի կայացման և դրա կիրառման համար: Գործնականորեն սկզբունքները իրավական կարգավորման առարկայի և մեթոդի հետ հավասար սահմանում են իրավունքի ճյուղի ինքնուրույնությունը, այդ պատճառով նրանք արտահայտում են իրավունքի կոնկրետ ճյուղի էությունը: Դրանց հիմքի վրա է տեղի ունենում բոլոր նորմերի, ինստիտուտների կա-

<sup>1</sup>Տե՛ս Ալեքսեյ և Ամագլոբելի Գրայդանское процессуальное право России, 2005, էջ11.

<sup>2</sup>Տե՛ս Շակարյան Մ. Ը Գրայդանское процессуальное право, Սահմանադրության մասնակիությունը, 2004. էջ 21.

<sup>3</sup>Տե՛ս Տրեյսնիկով Մ. Կ Գրայդանский процесс, Սահմանադրության մասնակիությունը, 2007, 2-ը թիւ, էջ 35.

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

ռուցումը, որոնք չեն կարող հակասել սկզբունքներին:

Միջազգային իրավունքի յուրաքանչյուր ճյուղում գործում են սեփական սկզբունքները, որոնք արտացոլում են ճյուղի որպես տվյալ իրավունքի համակարգի կառուցվածքային օդակի բովանդակյան էությունը: Ազգբունքները կարծես թե լուծված են իրավունքում, լցված են նրա մեջ, իրենցով ճեղքում են բոլոր կամ գրեթե բոլոր նորմերը<sup>4</sup>: Նրանք ամրապնդվում են ճյուղի տարրեր ինստիտուտների նորմերում, որանով իսկ դրանք միավորելով մեկ ամբողջու-

ասակային հարկավոր է հաշվի առնել, որ սկզբունքների համակարգը նրանց կամայական հավաքածու, թվարանական գումար չէ, այլ իր հատկանիշները օղակների օրգանական միաձուլման արդյունքում ստացած մեկ ամբողջություն: Պուշմինի կարծիքով, միջազգային իրավունքի սկզբունքները, իրավաբանական նորմերի որոշակի ամբողջության մեջ ամրապնդված լինելով որպես հանրանատչելի, համընդհանուր և համապարտադիր վարչագծի կանոններ, արտացոլում են տվյալ իրավունքի համակարգի կոնկրետ նորմատիվ

բովանդակությունը<sup>5</sup>:

**Ե. ՌԱՄԵՆԿՈՆ** դիտարկում է սկզբունքները որպես նյութական աշխարհի հետ անխօնելիութեն կապված կատե-

գորիա, քանի որ այն բնորոշ է հասարակական հարաբերություններին:

Կարգավորման առարկայի հետ մեկտեղ սկզբունքները հանդիսանում են ճյուղի ձևավորման հիմնական գործոններից մեկը<sup>6</sup>: Ինչպես նշում է **Լ. Անուֆրիևան**. «Ի տարրերություն ներպետական իրավունքի՝ միջազգային իրավունքում սկզբունքները համակարգածեավորման կարգի՝ հերթականությամբ գրեթե երկրորդ իրավական-տեսական ընդհանրացումն են»<sup>7</sup>: Իրավական նորմերի կոնկրետ ամբողջությունուն հասուլ սկզբունքների առկայությունը կամ բացակայությունը ձևավորում է ինքնուրույն իրավական ճյուղի ձևավորման համար չափանիշ<sup>10</sup>: Սկզբունքները ձևավորում են միջազգային իրավունքի ճյուղի ձևավորման հետ մեկտեղ: Նրանք այդպիսի իրավական ձևավորման, ինչպիսին հանդի-

### «...Սկզբունքը այն է, ինչ ձեղում է իրավունքը, երևան է բերում նրա բովանդակությունը...»

թյան մեջ: Ինչպես նշում է **Ա. Չեչինան**. «Իրավական սկզբունքը որպես դեկավար գաղափար տարրերվում է գիտական ու փիլիսոփայական սկզբունքներից նրանով, որ միշտ գտնում է իր հստակ արտահայտումը իրավունքի նորմում կամ նորմերում,...իրավունքի նորմերում չամրագրված գաղափարը չի կարող դառնալ իրավական սկզբունքը»<sup>5</sup>: Ենուային և միջնուղային սկզբունքները սեղմ փոխսկապված են իրավունքի համակարգի ընդհանուր սկզբունքների հետ, դրանք հարստացնում և կոնկրետացնում են նրա բովանդակությունը<sup>6</sup>: Ենուային փոխսկարբերակցությունը իրավունքի համակարգի հետ պայմանավորված է իրավունքի համակարգի ընդհանուր սկզբունքների հետ տվյալ ճյուղի նորմերի և սկզբունքների համապատասխանությամբ:

<sup>4</sup> Տե՛ս և Ալեքսեև Ս.Ս. Проблемы теории права. Свердловск, 1972. Т. 1. Էջ102:

<sup>5</sup> Տե՛ս Չечина Հ.Ա. Принципы советского гражданского процессуального права и их нормативное закрепление // Правоведение. 1960. N 3. Էջ 78-84. Опубликована в кн.: Чечина Հ.Ա. Избранные труды по гражданскому процессу. СПб., 2004. Էջ 266-267:

<sup>6</sup> Տե՛ս Բայտին Մ.Ի. О принципах и функциях права: Новые моменты // Правоведение. 2000. N 3. Էջ 16:

<sup>7</sup> Տե՛ս Պушмин Յ.Ա. О понятии основных принципов современного общего международного права // СЕМП. 1978. М., 1980. Էջ 76:

<sup>8</sup> Տե՛ս Սեսնո Ե.Տ. Общие принципы социалистической экономической интеграции // Принципы социалистической экономической интеграции. М., 1985. Ч. I. Էջ 7:

<sup>9</sup> Տե՛ս Անուֆրիևա Լ.Պ. Соотношение международного публичного и международного частного права (сравнительное исследование правовых категорий): Дис. ... д-ра юрид. наук. Էջ 138 :

<sup>10</sup> Տե՛ս Սեսնո Ե.Տ. О системе международного права // Советское гос-во и право. 1988. N 4. Էջ 124-125:

սահում է ճյուղը, կարգավորման անքակտելի մասն են հանդիսանում: Իրավունքի համակարգում այս կամ այն, հարաբերականորեն համապարփակ իրավական գոյացումների (ճյուղերի, ենթաճյուղերի, ինստիտուտների, ենթախնտիտուտների) անջատման գործընթացը զուգորդվում է կարգավորման իրավաբանական ռեժիմում առանձնահատկության կուտակմամբ, որը

գավորվող հարաբերությունների՝ այլ հարաբերությունների հետ փոխհարաբերությունները ցույց տվող նշանակություն:

Մըդ իրավունքի ձևավորումը՝ որպես միջազգային հանրային իրավունքի ճյուղ հիմնվում է միջազգային իրավունքի, ինչպես նաև ազգային քաղաքացիական դատավարության և արքիտրաժային դատավարության սկզբունքների վրա: Դրա հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր ճյուղային սկզբունք, մտնելով համակարգ, գրադարձնում է իր սեփական, հատուկ և ինքնուրույն, միայն իր համար նախատեսված տեղը:

Յենց այդ տեղը, պայմանագրությունը սկզբունքների մեջ ներկայացնում է արտահայտվում են իրավունքի ճյուղի համակարգային առանձնացվածությունը և արտահայտվում են ճյուղային սկզբունքներում: Սկզբունքները իրականացնում են երկակի դեր: Եախ իրենցից ներկայացնում են իհմնասյուն, որի վրա կառուցվում է ՄՊՀ իրավունքի ճյուղը: Նրանք հանդիսան են օպերատորների հիմքանական ակտերի հետագա նշակման համար, այնպես էլ դատավարական օրենսդրության կատարելագործման ուղղությամբ պետությունների նորմաստեղծ գործունեության համար: Սկզբունքները բռվանդակում են իրավունքի «հոգին» և թույլ են տալիս իրավակիրառներին ապահովելու իրավունքի ճիշտ ընկալում: Երկրորդ, սկզբունքները անհատականացնում են ՄՊՀ իրավունքին բնորոշ գծերը: Նրանք իրենցում միավորում են տվյալ ճյուղի առանձնահատկությունները և դրսկորիվում են ազգային քաղաքացիական դատավարությունում: ՄՊԴ սկզբունքներն ունեն՝ տվյալ ճյուղի վերաբերյալ գործող ակտերի եռույթը բացահայտող, կար-

մանավորելով նրա փոխհարաբերությունները այլ սկզբունքների (միջազգային իրավունքի ընդիանուր սկզբունքների, միջջուղային սկզբունքների) հետ, ապահովում է հասարակական հարաբերությունների ներգործության վրա նրա նիքնուրույնության և դրանց հետ կապված սկզբունքների գործունեության արդյունավետությունը:

Նշենք, որ միջազգային իրավունքում բացակայում է ՄՊԴ իրավունքի սկզբունքները թվարկող փաստաթուղթ, իսկ ամերիկյան իրավունքի հնատիտուտի (ԱԱԻ) և Ունիդրուայի աշխատանքային խմբի (Զ.Ա. Չազարդ կրտ.<sup>12</sup>, Ռ. Շտուրներ<sup>13</sup>, Մ. Տարուֆֆո<sup>14</sup>, Ա. Ջիդի<sup>15</sup>) կողմից համատեղ նշակված և 2004թ. փետրվարին ընդունված «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներն ու կանոնները»<sup>16</sup> փաստաթորի դրույթների միայն պարզ թվարկումը (1.անկախություն, անկողմնակալություն և դատարանի ու նրա դատավորների ծեռնիասություն, 2.իրավագործությունները կողմերի միջև, 3.կողմերի դատավարական հավասարություն, 4.փաստաթան վարձելու իրավունք, 5.պատշաճ ծանուցում և լսելի լինելու իրավունք, 6.լեզուներ, 7.արդարադատության արագ իրականացում,

### «...Իրավունքի նորմերում չամրազրկած գաղափարը չի կարող դառնալ իրավական սկզբունք...»

և, ինչպես պնդում են, դատելով ամեն ինչից, կազմված է ճյուղային կատեգորիաներից և սկզբունքներից<sup>11</sup>: Մշասնականությունը, ամբողջականությունը, կայունությունը հատկանիշներ են, որոնք բնութագրում են իրավունքի ճյուղի համակարգային առանձնացվածությունը և արտահայտվում են ճյուղային սկզբունքներում: Սկզբունքները իրականացնում են երկակի դեր: Եախ իրենցից ներկայացնում են իհմնասյուն, որի վրա կառուցվում է ՄՊՀ իրավունքի ճյուղը: Նրանք հանդիսան են օպերատորների հիմքանական ակտերի հետագա նշակման համար, այնպես էլ դատավարական օրենսդրության կատարելագործման ուղղությամբ պետությունների նորմաստեղծ գործունեության համար: Սկզբունքները բռվանդակում են իրավունքի «հոգին» և թույլ են տալիս իրավակիրառներին ապահովելու իրավունքի ճիշտ ընկալում: Երկրորդ, սկզբունքները անհատականացնում են ՄՊՀ իրավունքին բնորոշ գծերը: Նրանք իրենցում միավորում են տվյալ ճյուղի առանձնահատկությունները և դրսկորիվում են ազգային քաղաքացիական դատավարությունում: ՄՊԴ սկզբունքներն ունեն՝ տվյալ ճյուղի վերաբերյալ գործող ակտերի եռույթը բացահայտող, կար-

<sup>11</sup> Տես Ալեքսեև Ս.Ս. Право: Азбука - теория - философия: Опыт комплексного исследования. М., 1999. Էջ 592:

<sup>12</sup> Փենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր, համագեկուցող

<sup>13</sup> Ֆրայբրուգի համալսարանի պրոֆեսոր, համագեկուցող

<sup>14</sup> Պավիայի համալսարանի պրոֆեսոր, համագեկուցող

<sup>15</sup> Փենսիլվանիայի համալսարանի դասախոս, քարտուղար

<sup>16</sup> Տես www.unidroit.org

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

8.պայմանական և պաշտպանողական միջոցառումներ, 9.դատավարության կառուցվածքը, 10.կողմերի նախաձեռնությունները և դատավարության սահմանները, 11.կողմերի և փաստաբանների պարտականությունները, 12.կողմերի և անձերի բազմաթիվություն.ինտերվենցիա, 13.փորձագիտական եզրակացություն, 14.դատարանի պատասխանատվությունը դատաքննության համար, 15.հեռացում կամ հեռակա որոշում, 16.ինֆորմացիայի և վկայության իրավունք, 17.սանկցիաներ, 18.ակնհայտառավելություններ և անձեռնմխելիություն, 19.բանավոր և գրավոր դատաքննություն, 20.հրապարակային դատաքննություն, 21.ապացուցման պարտականություններ և կանոններ, 22.օրենքի և փաստի որոշման պարտականություն, 23.որոշում և պատճառաբանված պարզաբանում, 24.կարգավորում, 25.ժախսեր, 26.դատական որոշումների հարկադիր կատարում, 27.բողոքարկում, 28.լուծված գործի կրկնակի քննության անբույլատրելիություն, 29.արդյունավետ կատարում, 30.ճանաչում, 31.միջազգային դատական համագործակցություն) ցույց է տալիս, որ նրանում ներառված են ՄՔԴ՝ որպես գործունեության և ոչ որպես իրավունքի ծյուղի սկզբունքները: ՄՔԴ իրավունքի սկզբունքների բովանդակությունը «տարրալուծված» է ամբողջ ծյուղը կարգավորող բոլոր նորմերում և կարող է բացահայտվել համապատասխան նորմերի (այդ թվում «Անդրազգային քաղաքացիական դատավարության սկզբունքներում ու կանոններում») և պրակտիկայում դրանց կիրառան համակարգված վերլուծության արդյունքում, քանի որ ինչպես նշում է Ռ. Իվանովը. «Իրավունքի սկզբունքները՝

դրանք նրա տարրեր արյուղներում ամրապնդված կամ կայուն իրավական պրակտիկայում արտահայտված, ուստիմնասիրվող հասարակական հարաբերությունների կարգավորող նորմերի, ինչպես նաև նրանցում բացրողությունների և հակասությունների առկայության պայմաններում ներհամաձայնեցված և արդյունավետ համակարգ ստեղծող համընդիմանուր հիմնարար գաղափարներ են»<sup>17</sup>:

Ազգային և նույնիսկ ոուսական գրականությունում ՄՔԴ իրավունքի սկզբունքների հարցը գորեք չի ուսումնասիրվում: Ավելին, ճիշտ է որոշ գիտնականներ ՄՔԴ առանձին սկզբունքները բնութագրելու փորձեր կատարել են: Մասնավորապես, **Վ. Կըլոնինը** դիտարկում է փոխադարձության սկզբունքը<sup>18</sup>, և. **Շակը** վերլուծության է ենթարկում միայն միջջուղային սկզբունքները, որոնք բնորոշ են ոչ միայն ՄՔԴ իրավունքին, այն նաև միջազգային իրավունքի այլ ճյուղերի<sup>19</sup>, սակայն ՄՔԴ իրավունքի հիմնական հարցերին նվիրված աշխատանքներից մեծամասնությունում սկզբունքները նույնիսկ չեն թվարկվում՝ չնայած ՄԴՔ իրավունքը նրանց կողմից ընդունված է որպես առանձին ճյուղ՝<sup>20</sup>:

Այսպիսով, ՄՔԴ սկզբունքների տակ հասկացվում են այն հիմնարար իրավական գաղափարները, որոնց համապատասխան հազմակերպվում և գործում է ՄՔԴ համակարգը: ՄՔԴ սկզբունքներ են անվանվում միջազգային քաղաքացիական դատավարական բոլոր նորմերի և ինստիտուտների մեջ ներթափանցող հիմնարար իրավական գաղափարները, ՄՔԴ այնպիսի կառուցվածքի կանխորոշչները, որը ապահովում է վեճերով օրինական և հիմնավոր ակտերի կայացում: ՄՔԴ սկզբունքները կանխորոշում են դատավարության նախ-

<sup>17</sup> Տե՛ս Իվանով Ռ.Լ. Օ понятии принципов права // Вестник Омского университета, 1996, Вып. 2. էջ 116-117:

<sup>18</sup> Տե՛ս Аболовин В.О. Понятие взаимности в международном гражданском процессе // Арбитражный и гражданский процесс. 2004. N 3. էջ 34:

<sup>19</sup> Տե՛ս Շակ Խ. Международное гражданское процессуальное право. էջ 14-20:

<sup>20</sup> Տե՛ս Ануфриева Л.П. Международное частное право. Т. 3. էջ 278-427; Дробязкина И.В. Международный гражданский процесс: проблемы и перспективы; Ерпылева Н.Ю.

Международное частное право: Учебник: М., 2004. էջ 423-476; Лунц Л.А., Марышева Н.И. Международный гражданский процесс. М., 2002. էջ 763-939; Нешатаева Т.Н. Международное частное право и международный гражданский процесс. էջ 360-603; Светланов А.Г. Международный гражданский процесс: Современные тенденции:

## ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

տակը և այդ նպատակին հասնելու մեթոդները, բնութագրում են ՄՔԴ գործունեության բովանդակությունը, սահմանում են դատավարական իրավունքի ընդհանրապես և ՄՔԴ իրավունքի՝ մասնավորապես, եռլրյունը արտահայտող էական գծերը:

ՄՔԴ սկզբունքները իրենցից սկզբունքների ուղղակի խումբ չեն ներկայացնում, այլ ձևավորում են իրենց որոշակի միասնություն: Դա պայմանավորված է դրանցում արտահայտված գաղափարների ամբողջությամբ, միասնական նպատակների իրականացման ձգտմամբ:

ճանաչողական նպատակներից ելնելով՝ իրավագիտության մեջ ընդունված է երևան բերել իրավունքի յուրաքանչյուր ճյուղի, այդ թվում և ՄՔԴ իրավունքի սկզբունքների կազմը<sup>21</sup>: «Կազմ» եզրույթը կիրառվում է առարկաների, երևույթների ցանկը, լրակազմը նշելու համար: Դատավարական իրավունքի գիտության մեջ այս եզրույթով են նշում քաղաքացիական դատավարության բոլոր սկզբունքների ամբողջությունը, նրանց քանակական ծավալը, թվարկումը:

Իրավունքի յուրաքանչյուր ճյուղի, այդ թվում ՄՔԴ իրավունքի սկզբունքները սերտ փոխկապված են և ձևավորում են մեկ իրավաստրամարանական համակարգ:

ճախ, սկզբունքների համակարգը դա այն իիմքն է, որի վրա կառուցվուն է ամբողջ ՄՔԴ իրավունքի ճյուղը: Դրանով հանդերձ սկզբունքների համակարգը կազմավորվում և գոյություն է ունենում օբյեկտիվորեն<sup>22</sup>:

**2-րդ, հասարակական հարաբերությունների բոլոր տարբեր դրսերումների իրավական կարգավորման անհնա-**

րինության ուժով՝ իրավունքի նորմերի բացակայության դեպքում վիճելի իրավահարաբերությունը կարգավորվում է սկզբունքների միջոցով (իրավունքի անալոգիա),

**3-րդ, ՄՔԴ իրավունքի սկզբունքների ամբողջությունը վկայում է տվյալ իրավունքի ճյուղի՝ որպես իրավունքի ինքնուրույն ճյուղի մասին այնպես, ինչպես իրավական կարգավորման առարկան:**

ՄՔԴ իրավունքի վերաբերյալ գրականությունում առանձնացվում են ՄՔԴ իրավունքի հետևյալ սկզբունքները՝

**Դատավորների անկախության և անկողմնակալության սկզբունքը,**

**Պետությունների դատավարական ընթացակարգերի հավասարության սկզբունքը,**

**Գործի քննության իրապարականության սկզբունքը,**

**Դատավարությունների հսկելի բազմաթիվության սկզբունքը,**

**Կողմերի դատավարական իրավահավասարության և մրցակցության սկզբունքը,**

**Իրավական պաշտպանության միջոցների արդյունավետության սկզբունքը,**

**Դիսպոնիտիվության սկզբունքը:**

Այսպիսով, Միջազգային քաղաքացիական դատավարության սկզբունքների կազմը ՄՔԴ իրավունքի նորմերում ամրագրված կանոնների համակարգ է, որը, ձևավորվելով դատական մարմինների իրավակիրառ գործունեության ընթացքում և դրա արդյունքում, կարգավորում է հասարակական հարաբերությունների խիստ որոշակի շրջանակ:

<sup>21</sup>Տե՛ս Տրեյշնիկով Մ. Կ Գրայդանսկի պրոցես\_Սահմանադրության դատավարության մասին օրենքը, ԵՊՀ հրատ., Երևան, 2007թ, էջ 157:

<sup>22</sup>Տե՛ս Յառա Վ. Բ Գրայդանսկի պրոցես\_Սահմանադրության մասին օրենքը:



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

75, 2013

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հորեւյան .....	2
ՀՀ դատախազության կոլեգիայում .....	2
Յրամաններ .....	4
ԶԺ դատախազության պատվիրակությունը Հայաստանում .....	9
Հանդիպում դեսպանի հետ .....	10
Համագործակցության ծրագիր .....	10
Կանխարգելել ընտրական իրավունքի դեմ ոտնձգությունները .....	11
Դատախազությունը Վճռական և պատրաստական է .....	12
Դատախազների երիկայի համատեքստում .....	12
Աշխատանքային քննարկում.....	13
ՀՔԾ-ն ամփոփել է աշխատանքի արդյունքները.....	14
Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում.....	15

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱԶԻՆ, ՔԵԼԵԶԻՆ

Արամ ԹԱՄԱԶՅԱՆ Խուլիզանության քրեականական բնութագիրը.....	17
---	----

### ՀԱՆՁԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Արթուր ԳՈՅՉՈՒՅՑԱՆ Կիբեռիանցագործություններ.....	26
---	----

### ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔ

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ, Գևորգ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Դատարանում նախարարնական ցուցմունքների հրապարակումը և ցուցմունքների դատական դեպոնացումը.....	37
--	----

### ՀԱՅ ԻՐԱՎՈՒՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էղգար ՆԱԶԱՐՅԱՆ Անձի իրավական կարգավիճակի հարցերը ըստ Ս. Գոշի Հայոց Դատաստանագրքի.....	47
--	----

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՔ

Հակոբ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ Մարդու իրավունքների ժամանակակից ընկալման հիմնական ասպեկտները .....	53
--	----

### ԵՐԻՏԱՑՈՐԴ ԳԻՏԵՎՈՒՄ ԱՐԵՒՈՒ

Տաթևիկ ԱՍԱՏՅԱՆ Միջազգային քաղաքացիական դատավարություն. հասկացությունը, դերը և նշանակությունը.....	59
--	----